¹² Сборник документов по истории уголовного законодательства СССР (1917-1952) / Под ред. И.Т. Голякова. М., 1953. С. 69-71.

осторожности. Неосторожное злоупотребление имело место именно тогда, когда должностное лицо не предвидело наступления последствий, которые повлекли за собой данные деяния, хотя оно могло и должно было это предвидеть. При этом область применения ч. 1 ст. 105 (ч. 1 ст. 109 УК в редакции 1926 г.) ограничивалась случаями неосторожной вины и случаями, когда виновный руководствовался не личными соображениями, а интересами службы или же интересами других лиц. Превышение же власти становилось неосторожным тогда, когда виновный не осознавал, хотя мог и должен был осознавать, что он своими действиями нарушает круг прав и обязанностей своего ведомства. Тем не менее, при совершении превышения власти служащий не мог ссылаться на то, что он находился в состоянии крайней необходимости, или что превышение власти допущено им ввиду чрезвычайных обстоятельств, так как ссылка на крайнюю необходимость допускалась лишь в строго определенных законом случаях¹³.

Стоит отметить, что в юридической литературе 50-х годов 20-го века оставался спорным вопрос об определении объекта должностных преступлений. Некоторые из правоведов (М. М. Исаев, А.А. Герцензон) считали, что объектом должностного преступления является государственный аппарат¹⁴. Другая группа правоведов (Н.Д. Дурманов, А.Н. Трайнин, М. Д. Шаргородский) в качестве объекта рассматривала правильную, отвечающую интересам социалистического строительства работу государственного и общественного аппарата¹⁵. В свою очередь, А.А. Жижиленко в качестве объекта должностных преступлений выделял служебный долг должностного лица¹⁶. По мнению Б.С. Утевского, должностные преступления являются преступлениями против интересов управления государством и социалистическим хозяйством¹⁷.

Объективная сторона злоупотребления властью и превышения власти выражалась в виде действий, которые могли быть как физическими, так и интеллектуальными. Первое имело место, когда должностное лицо само непосредственно совершает что-нибудь без соображений служебной необходимости, второе - когда оно дает другим предписание совершить такие действия (*курсив наш – Г.П.*)¹⁸. Более того, согласно Уголовному кодексу 1922г., злоупотребление и превышение власти могли быть совершены лишь благодаря занимаемому служебному положению в силу возложенных на него служебных обязанностей и полномочий. Уголовный кодекс 1926 г. отмечает злоупотребление властью или служебным положением (ст. 109 УК) и превышение власти или служебных полномочий (ст. 110 УК). Следовательно, должностное лицо может совершить данные преступления не только в силу возложенных на него служебных обязанностей и полномочий, но и путем использования должностного положения и должностных связей. Другой особенностью деяний должностного лица, указанной в диспозиции ст. 105 УК (ст. 109 УК в редакции 1926 г.), является совершение действий, которые не были вызваны соображениями служебной необходимости, к ним относятся действия, которые не диктовались потребностью данного момента, а также случаи, когда должностное лицо действует, руководствуясь ложно понимаемыми интересами ведомства или организации. Стоит отметить, что злоупотребление властью, сформулированное в Уголовном кодексе 1922г., предусматривало материальный состав преступления и для признания его окончательным требовалось наступление общественно опасных последствий, таких как: нарушение правильной работы учреждения или предприятия, или общественного порядка, или частных

¹³ Уголовный кодекс РСФСР: Практический комментарий / Под ред. М.Н. Гентера, А.Н. Трайнина. М, 1923. С. 23.

¹⁴ Подробнее см.: Сундуров Ф.Р., Талан М.В. Наказание в уголовном праве: Учебное пособие. М., Статут, 2015.

¹⁵ Дурманов Н.Д. Понятие преступления. Издательство АН СССР, Л. 1948; Трайнин А.Н. Уголовное право РСФСР. Часть особенная. Л., 1925. С. 118-150.

¹⁶ Жижиленко А.А. Должностные (служебные) преступления (ст. 105-118 УК). Изд. 2-е. (испр. и доп.). М., 1924. С. 9.

¹⁷ Утевский Б.С. Общее учение о должностных преступлениях. М., 1948. С. 49.

¹⁸ Подробнее см.: Тарасова Е.В. Квалификация преступлений, совершенных должностными лицами путем использования своего служебного положения: Автореф. дис.... канд. юрид. наук. СПб., 1999.

интересов отдельных граждан. В свою очередь, в состав злоупотребления властью или должностным положением по Уголовному кодексом 1926г. был включен признак систематичности, который предполагал не механическую совокупность тех или иных поступков, а определенное активное психическое отношение должностного лица к своим действиям, т. е. сознательную линию поведения, предполагающую умысел. Несмотря на то, что закон предусматривал систематичность и корысть в качестве обязательных признаков состава преступления, судебная практика отступала от этого правила. Интересно и то, что ст. 109 УК 1926 г. в качестве оконченного преступления содержит деяние, которое не только повлекло наступление общественно опасных последствий, но и ставило под угрозу наступление тяжких последствий. Следовательно, злоупотребление властью или служебным положением сформулировано с помощью как материального, так и формального состава преступления¹⁹. Стоит отметить, что *превышение власти содержало еще один обязательный признак: действия должностного лица должны были явно выходить за пределы компетенции должностного лица, а квалифицирующим признаком превышения власти являлось совершение преступления путем применения насилия, оружия, особо мучительных действий и действий, оскорбляющих личное достоинство потерпевшего (курсив наш – Г.П.)*²⁰. Особо квалифицирующий вид злоупотребления властью и превышения власти содержался в ст. 110 УК, который был превращен в отдельную статью из-за особо тяжких последствий совершенных преступлений, а наказание доходило до высшей меры. К особо тяжким последствиям относились: расстройство центральных или местных хозяйственных аппаратов производства, распределения или снабжения, или расстройство транспорта, заключение явно

невыгодных для государства договоров или сделок, или всякий иной подрыв и расточение государственного достояния в ущерб интересам трудящихся. Примечательно, что законодательство не раскрывало понятие «особо отягчающих обстоятельств», относя его к оценочным. В частности, когда данное преступление совершено работником, состоящим во главе центрального хозяйственного аппарата²¹.

Что касается регламентации ответственности за должностные преступления по УК РСФСР 1960г., то необходимо отметить, что она характеризовалась более четким описанием признаков преступлений, сужением круга преступного поведения, смягчением наказаний за совершение ряда преступлений²². Под злоупотреблением властью или служебным положением учитывалось умышленное использование должностным лицом своего служебного положения вопреки интересам службы. Обязательным условием возникновения уголовной ответственности было совершение этого деяния из корыстной или иной личной заинтересованности и причинение им существенного вреда государственным или общественным интересам либо охраняемым законом правам и интересам граждан. Квалифицирующим обстоятельством этого преступления являлось совершение деяния, причинившего тяжкие последствия. Очевидно, что в данном случае превышение власти или служебных полномочий заключалось в умышленном совершении должностным лицом таких действий, которые явно выходили за пределы его прав и полномочий, если они причинили существенный вред государственным или общественным интересам либо охраняемым законом правам и интересам граждан. Более того, ответственность за данное преступление существенно повышалась, если превышение власти или служебных полномочий сопровождалось насилием, применением оружия или мучительными и оскорб-

¹⁹ Подробнее см.: Постановление ВЦИК от 22.11.1926 «О введении в действие Уголовного Кодекса Р.С.Ф.С.Р. редакции 1926 года» (вместе с «Уголовным Кодексом Р.С.Ф.С.Р.»), <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?3Freq%3Ddoc%3Bbase%3DESU%3Bn%3D3274#0/./12.05.2017/>.

²⁰ Там же, ст.109.

²¹ Трайнин А.Н. Указ. соч. С. 37. Власти или служебных полномочий (ст. 171 УК).

²² В главе 7 Особенной части Уголовный кодекс РСФСР (прин. 27.10.1960) «Должностные преступления» содержалось всего шесть статей, среди них злоупотребление властью или должностным положением (ст. 170 УК).

ляющими личное достоинство потерпевшего действиями.

Стоит отметить, что в примечании к статье 170 УК было сформулировано определение должностного лица: «Под должностными лицами в статьях настоящей главы понимаются лица, постоянно или временно осуществляющие функции представителя власти, а также занимающие постоянно или временно в государственных или общественных учреждениях, организациях или на предприятиях должности, связанные с выполнением организационно-распорядительных или административно-хозяйственных обязанностей, или выполняющие такие обязанности в указанных учреждениях, организациях или на предприятиях по специальному полномочию»²³. Очевидно, что, согласно данному определению, должностным лицом, как субъектом должностных преступлений, уже без всяких оговорок, является лицо занимающее в любом государственном или любом общественном предприятии, учреждении, организации должность, связанную с выполнением организационно-распорядительных или административно-хозяйственных функций. Большую роль сыграло Постановление Пленума Верховного Суда СССР от 30 марта 1990 г. №4 «О судебной практике по делам о злоупотреблении властью или служебным положением, превышении власти или должностных полномочий, халатности или должностном подлоге». В нем впервые было дано официальное толкование таких понятий, как организационно-распорядительные и административно-хозяйственные обязанности, составляющие содержание полномочий должностного лица, были даны также понятия существенного вреда, корыстной или иной личной заинтересованности и ряда других сложных вопросов.

Общеизвестно, что во времена Перестройки, когда экономическая сфера жизни общества отделилась от политической, стало очевидно, что социальная сущность поступков лиц, состоящих на государственной или муниципальной службе, и лиц, выполняющих соответствующие управленческие функции в различных обще-

ственных организациях и коммерческих структурах, далеко не одинакова. Первые, злоупотребляя предоставленными им публичной властью полномочиями, посягают на интересы службы, нарушают нормальную деятельность государственного аппарата законодательной, исполнительной и судебной власти, подрывают их авторитет, что в итоге приводит к ослаблению государственной власти. Это определяет особый правоохранный объект и необходимость выделения преступных деяний таких лиц в самостоятельную главу Уголовного кодекса. Ничего подобного не происходит при злоупотреблении со стороны служащих коммерческих структур и общественных организаций, которые наделены определенными управленческими функциями собственником или гражданами, объединившись в общественную организацию. Их злоупотребления предоставленными полномочиями способны, конечно, причинить материальный ущерб, иные вредные последствия, связанные с нарушением отношений собственности, причинением физического вреда личности, нарушением конституционных прав граждан, законодательства о предпринимательской деятельности, об охране природы и т. д., за что эти лица должны нести соответствующую ответственность. В данный период были приняты такие законы, как: Закон «О кооперации в СССР» (от 26.05.88г.); Закон «О собственности в РСФСР» (от 24.12.90г.); Закон «О предприятиях и предпринимательской деятельности» (от 25.12.90 г.).

Таким образом, советский период характеризуется процессом дальнейшего формирования в уголовном праве понятия должностных преступлений и толкования его отдельных элементов, составов преступлений, развитием, наряду с идеологизацией, проблемы в направлении совершенствования и конкретизации способов совершенствования этих преступлений, уяснения отдельных понятий, а также более четкой формулировки и разграничения дефиниций злоупотребления должностным положением и превышения должностных полномочий.

²³ Уголовный кодекс РСФСР (утв. ВС РСФСР 27.10.1960) <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=8627&fld=134&dst=100406,0&rnd=0.1955557221328652#0/,/22,04,2017/>.

ԼԱԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի պետության և
իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս,
ոստիկանության կապիտան

**ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՏԱՐԻՔԻ ԶՆԱՍԾ
ԿԱՄ ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՆՁԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՐՉԻ ՇՈՒՐԶ**

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 23 հոդվածի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ հանցագործության սուբյեկտի պարտադիր հատկանիշներ են համարվում համապատասխան տարիքի հասած լինելը և մեղսունակությունը:

Տարիքը ոչ թե պարզապես անձի ապրած տարիների հանրագումարն է, այլ՝ նրա զարգացման, անձի ձևավորման որակապես յուրահատուկ աստիճանը: Միայն որոշակի տարիքի հասնելուց հետո է անձն ունակ լինում գիտակցելու իր արարքների հանրորեն վտանգավոր բնույթը և ղեկավարելու դրանք: Քր. օր.-ի 24 հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթարկելու նվազագույն տարիքը 16 տարեկանն է, իսկ մի շարք հանցանքների համար, որոնց հանրային վտանգավորությունն ընկալելի է դառնում ավելի վաղ տարիքում, քրեական պատասխանատվության նվազագույն տարիքն իջեցված է մինչև 14 տարեկանը (ՀՀ քր. օր.-ի 24 հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Պետք է նշել նաև, որ քր. օր.-ի 24 հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Եթե անձը հասել է սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության»:

Վերոնշյալ դրույթի առնչությամբ կարելի է սահուն անցում կատարել հանցագործության սուբյեկտի մյուս հատկանիշին՝ մեղսունակությանը: Քր. օր.-ի 25 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա:

Մեղսունակ անձին անմեղսունակության վիճակում գտնվող անձից տարբերակելու չափանիշը հենց այն է, որ մեղսունակ անձն ունակ է գիտակցելու իր արարքների փաստական կողմն ու սոցիալական նշանակությունը և ղեկավարելու դրանք: Հոգեկան հիվանդ անձի հանրորեն վտանգավոր արարքները պայմանավորված են նրա հոգեկան հիվանդագին վիճակով և բնութագրվում են որոշակի առանձնահատկություններով¹:

Այսպես՝ Յու. Մ. Անտոնյանը և Ս. Վ. Բորոդինը, հիմնավորելով հոգեկան շեղումների քրեածին նշանակությունը, ներկայացնում են մի շարք ծանրակշիռ փաստարկներ: Առաջին՝ հոգեկան շեղումները առաջ են բերում դյուրագրգռություն, ագրեսիվություն և դաժանություն,

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

¹ Сѣн Луньков Д.А. Посредственное причинение вреда: уголовно-правовые и криминологические аспекты. Дисс....канд. юрид. наук, Екатеринбург, 2013, էջ 102:

որոնք էլ իրենց հերթին նպաստում են հատկապես բռնի հանցագործությունների կատարմանը: Երկրորդ՝ հոգեկան շեղումները թուլացնում են կամային գործընթացները և բարձրացնում ներշնչողականության աստիճանը, ինչով հեշտացնում են անցումը հանրորեն վտանգավոր վարքագծին²:

Մանկահասակները և հոգեկան հիվանդները բնութագրվում են ընդգծված ներշնչողականությամբ, բարու և չարի, թույլատրելիի և անթույլատրելիի մասին անկայուն պատկերացումներով, ինչի պատճառով նրանց հեշտ է ներգրավել հանրորեն վտանգավոր գործունեության մեջ: Այդպիսի հատկանիշները մեծ հետաքրքրություն են առաջացնում հանցանք կատարելու հակում ունեցող անձանց շրջանում, ովքեր ցանկանում են հանցանքը կատարել ուրիշների ձեռքերով և մնալ անպատիժ:

Հանցավոր նպատակներով հոգեկան հիվանդին օգտագործելու հետաքրքիր օրինակ պրակտիկայից նկարագրել է Վ. Ա. Վլադիմիրովը: Այսպես՝ Մ.-ն վրեժի շարժառիթով ցանկացել է այրել Կ.-ի տունը: Քրեական պատասխանատվությունից խուսափելու նպատակով Մ.-ն որոշել է տան հրկիզումը հանձնարարել իր համագյուղացի, իմբեցիլ 30-ամյա Օ.-ին: Իրականացնելով իր հանցավոր մտադրությունը՝ Մ.-ն երեք օրվա ընթացքում ներշնչել է Օ.-ին, որ Կ.-ն ցանկանում է վերջինիս բանտարկել, ուստի անհրաժեշտ է այրել նրա տունը: Օգտագործելով Օ.-ի հոգեկան վիճակին բնորոշ ընդգծված ներշնչողականությունը՝ Մ.-ն առանց դժվարության ստացել է Օ.-ի համաձայնությունը, և վերջինս հաջորդ գիշեր այրել է Կ.-ի տունը՝ Մ.-ից նախապես ստանալով մի շիշ նավթ և լուցկի: Մյուս օրը Օ.-ն պատմել է համագյուղացիներին, որ Մ.-ն էր իրեն հանձնարարել այրել Կ.-ի տունը: Նշված արարքի պատճառով Մ.-ն ենթարկվել է քրեական պատասխանատվության հանրորեն վտանգավոր եղանակով ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելու համար, իսկ Օ.-ն քրեական պատասխանատվության չէր ենթարկվել, քանի որ, փորձաքննության եզրակացության համաձայն՝ արարքը կա-

տարելու պահին գտնվել էր անմեղսունակության վիճակում³:

Դժվար չէ նկատել, որ կատարված արարքի քրեաիրավական գնահատականը չէր փոխվի, եթե Օ.-ի փոխարեն լիներ ոչ թե հոգեկան հիվանդ, այլ՝ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձ: Անձանց այս երկու խումբն ունեն մեկ ընդհանուր հատկանիշ՝ սեփական արարքների փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու ունակության բացակայությունը:

Դ.Ա. Լունկովը նշված անձանց օգտագործմամբ հանցանքի միջնորդավորված կատարումը բնութագրում է հետևյալ կերպ. հանցագործության սուբյեկտ համարվող անձը ներգործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի վրա, ինչի հետևանքով վերջինս իրականացնում է տվյալ հանցագործության օբյեկտիվ կողմը⁴:

Ինչպես տեսնում ենք՝ Դ.Ա. Լունկովի կողմից տրված բնութագրման մեջ շեշտը դրված է հանցագործության միջնորդավորված կատարման օբյեկտիվ հատկանիշի վրա: Մինչդեռ պակաս կարևոր չէ նաև սուբյեկտիվ հատկանիշը, որին իրավացիորեն ուշադրություն է դարձրել Ն.Վ. Բարանկովը. «Քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին օգտագործելով հանցանքի միջնորդավորված կատարման սուբյեկտիվ կողմը բնութագրվում է այն հանգամանքով, որ անձը գիտակցում է իր կողմից օգտագործվող անձի՝ տվյալ հանցագործության համար քրեական օրենքով սահմանված տարիքի հասած չլինելու հանգամանքը: Փաստորեն քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին օգտագործելով հանցանքի միջնորդավորված կատարումն այն իրավիճակն է, երբ քրեական օրենքով սահմանված տարիքի հասած մեղսունակ ֆիզիկական անձը կատարում է դիտավորյալ հանցանք՝ դրա օբյեկտիվ կողմի իրականացման համար օգտագործելով քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի, գիտակցում է

² Տե՛ս Антонян Ю.М., Бородин С.В. Преступность и психические аномалии. М., 1987, էջ 9:
³ Տե՛ս Владимиров В.А. Преступление, совершенное соучастниками. М., Госюриздат, 1961, էջ 53-54:
⁴ Տե՛ս Луньков Д.А. Նշվ. աշխ., էջ 104:

այդ հանգամանքը և ցանկանում է հանցանքը կատարել հենց այդ եղանակով»⁵:

Հանցագործության միջնորդավորված կատարման սուբյեկտիվ կողմի համանման բնութագիր հեղինակը տվել է նաև անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործման դեպքերի վերաբերյալ. «Միջնորդավորված կատարողը գիտակցում է, որ հանցանքը կատարում է հենց անմեղսունակ անձի օգտագործելով: Միջնորդավորված կատարողն այդ մասին կարող է իմանալ դատական հոգեբուժության կամ իրավագիտության ոլորտի գիտելիքների շնորհիվ, օգտագործվող անձի հոգեկան հիվանդության վերաբերյալ վկայող որոշակի աղբյուրներից, այդ անձի վարքագծին հետևելով և այլն»⁶:

Ն.Վ. Բարանկովի մեջբերված մտքի կապակցությամբ հարկ ենք համարում կատարել մի շտկում. ճիշտ չէ «անմեղսունակ անձ» բառակապակցության օգտագործումը: Ինչպես գիտենք՝ ընդհանրապես անմեղսունակ անձ գոյություն չունի. անձի անմեղսունակության հարցը կարող է բարձրացվել միայն կոնկրետ արարքի կատարման պահի կապակցությամբ: Ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108 հոդվածի համաձայն՝ հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության հետևանքով մեղադրյալի ունակ չլինելը դեպքի պահին գիտակցելու իր գործողությունների (անգործության) բնույթը և նշանակությունը, դրանց վնասակարությունը կամ ղեկավարելու դրանք կարող է հաստատվել բացառապես դատահոգեբուժական կամ դատահոգեբանական փորձագետի եզրակացությամբ:

Նույնիսկ եթե հանցանքի միջնորդավորված կատարողն ունենա դատական հոգեբուժության և հոգեբանության ոլորտների հատուկ գիտելիքներ, դժվար թե նա կարողանա հաստատապես համոզված լինել, որ իր կողմից օգտագործվող անձը հանրորեն վտանգավոր արարքի կատարման պահին գտնվելու է անմեղսունակության վիճակում: Նման դեպքերում միջնորդավորված կատարողը ոչ թե հաստա-

տապես գիտակցում է, որ իր կողմից օգտագործվող անձն արարքի կատարման պահին գտնվելու է անմեղսունակության վիճակում, այլ՝ ընդամենը նախատեսում է, որ դա այդպես է լինելու:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք անմեղսունակության վիճակում գտնվող անձի օգտագործմամբ հանցագործության միջնորդավորված կատարման սուբյեկտիվ կողմը բնութագրել հետևյալ կերպ. միջնորդավորված կատարողը, որոշակի հանգամանքների վրա հիմնվելով, նախատեսում է, որ իր կողմից օգտագործվող անձը հանրորեն վտանգավոր արարքի կատարման պահին գտնվելու է անմեղսունակության վիճակում և ցանկանում է, որ այդ անձը նման վիճակում կատարի տվյալ արարքը:

Հարկ ենք համարում նշել, որ եթե անձը ներգործում է սահմանափակ մեղսունակ անձի կամքի և գիտակցության վրա, և դրա հետևանքով վերջինս կատարում է հանցանք, ապա հանցանքի միջնորդավորված կատարումը բացակայում է: Դա հիմնավորվում է այն փաստարկով, որ քր. օր.-ի 26 հոդվածի համաձայն՝ սահմանափակ մեղսունակության վիճակում հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության, ուստի նա չի կարող համարվել հանցագործության գործիք:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին և անմեղսունակության վիճակում գտնվող անձին օգտագործելու միջոցով հանցանքի միջնորդավորված կատարման իրավիճակներին անհրաժեշտ է հավասարեցնել նաև քր. օր.-ի 24 հոդվածի 3-րդ մասով նախատեսված անձանց օգտագործման իրավիճակները: Խոսքն այն անձանց մասին է, ովքեր թեև հասել են օրենքով նախատեսված որոշակի տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չեն եղել ամբողջ չափով գիտակցելու իրենց արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա: Մեր մոտեցումը հիմնավորվում է այն փաստարկով, որ, օրենքի համաձայն՝ նման անձինք, փաստորեն, ենթակա չեն քրեական պատասխանատվության, ուստի կարող են նաև գործիք հանդիսանալ հան-

⁵ Տե՛ս Баранков Н.В. Посредственное исполнение преступления. Автореф. дисс....канд. юрид. наук. СПб., 2001, էջ 16:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 17:

ցանքը միջնորդավորված կատարողների ձեռքին: Պարզապես նման դեպքերում նույնպես անհրաժեշտ է հավաստել, որ միջնորդավորված կատարողը, որոշակի հանգամանքների վրա հիմնվելով, գիտակցել է, որ իր կողմից օգտագործվող անձը համապատասխանում է քր. օր.-ի 24 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներին:

Ինչպես նշում են Ե. Օ. Դուշկինան և Ա.Մ. Պլեշակովը՝ անմեղսունակության բժշկական չափանիշի տեսանկյունից այդ անձինք օժտված են այնպիսի ինտելեկտուալ, կամային և հուզական որակների ամբողջությամբ, որոնք թույլ են տալիս բնութագրել նրանց որպես հոգեպես առողջների (թեև այդ որակները սահմանափակված են): Այս հանգամանքը պայմանավորված է այն իրողությամբ, որ այդպիսի անձանց մեջ բացակայում են էական հոգեկան խանգարումներ, որոնք բնորոշ են անմեղսունակությանը կամ սահմանափակ մեղսունակությանը: Տվյալ դեպքում անհատի հոգեֆիզիոլոգիական զարգացումը թեև դանդաղ, բայց ընթանում է մեղսունակության շրջանակներում: Անձը ձևականորեն հասել է օրենքով սահմանված տարիքի, սակայն նրա հոգեկան գործառույթների զարգացման մակարդակն իջեցված է, սոցիալացման մակարդակով անձը չի համապատասխանում պայմանական տարիքային չափանիշին⁷:

Փաստորեն, մտավոր զարգացման մեջ հետ մնալու դեպքում առկա է գիտակցության և կամքի անբավարար զարգացվածություն, իսկ անմեղսունակության դեպքում՝ գիտակցության և կամքի արատ⁸: Այս առումով դժվար է համաձայնել գրականության մեջ արտահայտված այն կարծիքին, թե մտավոր զարգացման մեջ հետ մնալու դեպքում անձը գտնվում է փաստացի անմեղսունակության վիճակում⁹: Կարծում ենք՝ նման անձանց օգտագործելով հանցանքի միջնորդավորված կատարումը չի կարելի նույնացնել ո՛չ համապատասխան տարիքի չհասած, ո՛չ

անմեղսունակության վիճակում գտնվող անձանց օգտագործելու դեպքերի հետ: Թեև նշված երեք իրավիճակում էլ հանցանքը միջնորդավորված կատարողի արարքի իրավաբանական գնահատակը նույնն է, սակայն որպես գործիք օգտագործվող անձին քրեական պատասխանատվության չենթարկելու քրեաիրավական հիմքերը տարբեր են (քր. օր.-ի 24 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասը, նույն հոդվածի 3-րդ մասը կամ 25 հոդվածի 1-ին մասը):

Քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով սահմանված տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձին օգտագործելով հանցանքի միջնորդավորված կատարման խնդիրն ուսումնասիրելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն հարցին, թե կարո՞ղ է արդյոք հանցանքի միջնորդավորված կատարում համարվել այն իրավիճակը, երբ միջնորդավորված կատարողի գործողությունների հետևանքով օրենքով սահմանված տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձը վնաս է պատճառում ինքն իրեն: Օրինակ՝ միջնորդավորված կատարողն այդպիսի անձին կյանքից զրկելու նպատակով վերջինիս համոզում է ցած նետվել բարձրահարկ շենքի տանիքից՝ խաբելով, թե նա կկարողանա թռչել: Գ.Կոլոկոլովը, օրինակ, առաջարկում է անմեղսունակին կամ մանկահասակին ինքնասպանության հասցնելը համարել սպանության միջնորդավորված կատարում¹⁰: Համանման տեսակետ է արտահայտում նաև Մ.Ի. Կովալյովը¹¹:

Հակառակ տեսակետի կողմնակիցները համարում են, թե այն դեպքերում, երբ հանցանքի կատարման համար որպես գործիք օգտագործվում է անմեղսունակության վիճակում գտնվող անձը, չի կարելի ոտնձգության օբյեկտ դիտել վերջինիս կյանքը, ուստի սխալ է հանցանքի միջնորդավորված կատարում համարել անմեղսունակին ինքնասպանության հասցնելը¹²:

⁷ Տե՛ս Ե.Օ. Душкина, А.М. Плешаков. Отставание в психическом развитии несовершеннолетнего как основание для исключения уголовной ответственности (теоретические и прикладные проблемы). М.: «Юрлитинформ», 2008, էջ 53:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 57:

⁹ Տե՛ս Л.Н. Кривоченко Вопросы предотвращения и ликвидации преступности и других правонарушений. Харьков, 1968, էջ 193:

¹⁰ Տե՛ս Колоколов Г. О соучастии в преступлении. М., 1881, էջ 123:

¹¹ Տե՛ս Ковалев М. И. Соучастие в преступлении. Ч. 2. Свердловск, 1960, էջ 97:

¹² Տե՛ս Михеев Р. И. Уголовно-правовая оценка ООД невменяемых при групповых посягательствах// Актуальные вопросы борьбы с преступностью, Омск. 1983, էջ 18:

Մեր կարծիքով՝ ճիշտ է առաջին մոտեցումը, ըստ որի՝ նման արարքը պետք է որակել որպես սպանության միջնորդավորված կատարում: Նախ՝ քննարկվող իրավիճակում առկա են սպանության հանցակազմի բոլոր տարրերը, պարզապես յուրահատուկ դրսևորում է ստանում պատճառական կապի զարգացումը: Երկրորդ՝ այն հեղինակները, ովքեր նման դեպքերը չեն համարում սպանության միջնորդավորված կատարում, չեն ներկայացնում նաև տվյալ իրավիճակի քրեաիրավական գնահատականի որևէ այլ տարբերակ: Մասնավորապես՝ նման արարքները չեն կարող որակվել որպես ինքնասպանության հասցնել կամ հարկադրել, քանի որ ինքնասպանությունը գիտակցական և կամային վարքագիծ է, ինչը ենթադրում է, թե ինքնասպանություն գործողը գիտակցում է, որ ինքն իրեն զրկում է կյանքից և ցանկանում է կատարել դա, իսկ մանկահասակը կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձը զուրկ են նման գիտակցական վարքագիծ դրսևորելու ունակությունից:

Վ.Ֆ. Շչեպելկովը, քննարկելով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով սահմանված տարիքի չհասած անձին օգտագործելով հանցագործության որակման հարցերը, գրում է. «Եթե չափափաս անձը հանցագործության կատարման է դրդում երկու անձի, որոնցից մեկն օժտված է հանցագործության սուբյեկտի հատկանիշներով, իսկ մյուսը չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի, ապա առկա է համակատարումը, նույնիսկ եթե դրդողն անձամբ չի մասնակցել հանցագործությանը: Այդ դեպքում հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքներն իրականացվում են երկու անձի կողմից, որոնցից մեկը դրանք կատարում է միջնորդավորված ձևով, իսկ մյուսը՝ անձամբ»¹³: Մենք համամիտ ենք հեղինակի հետ, քանի որ նկարագրված իրավիճակում առկա են հանցակցության և, մասնավորապես՝ համակատարման օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հատկանիշները՝ հանցագործության սուբյեկտ համարվող երկու անձի առկայությունը, նրանց արարքների համատեղությունը, պատճառական կա-

պը, դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրի կողմից հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող արարքների կատարումը:

Վ.Ֆ. Շչեպելկովը նշում է, որ համակատարում է առկա նաև այն դեպքում, երբ հանցագործության սուբյեկտ համարվող երկու կամ ավելի անձ հանցագործության մեջ են ներգրավում քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի, սակայն իրենք օբյեկտիվ կողմի իրականացմանը չեն մասնակցում¹⁴: Նման մոտեցումը նույնպես հիմնավորված ենք համարում, քանի որ հանցագործության միջնորդավորված կատարման օբյեկտիվ կողմն են կազմում ոչ միայն որպես գործիք օգտագործվող անձի արարքները, այլև նրան օգտագործող անձի այն գործողությունները, որոնք ուղղված են նրա կամքի և գիտակցության վրա ներգործելուն: Միևնույն ժամանակ, ցանկանում ենք որոշակի իմաստով լրացնել հեղինակի միտքը՝ մի կարևոր շեշտադրում անելով. քննարկվող իրավիճակում համակատարումն առկա կլինի միայն այն դեպքում, եթե հաստատվի, որ որպես գործիք օգտագործվող անձը հանրորեն վտանգավոր արարքը կատարել է նրան օգտագործող երկու անձի հենց համատեղ գործողությունների պատճառով, որոնք ուղղված են եղել նրա կամքի և գիտակցության վրա ազդելուն և պատճառահետևանքային կապով կապված են եղել իր արարքի հետ:

Մեր կարծիքով՝ վերոնշյալ իրավիճակից էականորեն տարբերվում է այն դեպքը, երբ հանցագործության սուբյեկտ համարվող անձը հանցանքը կատարում է երկու կամ ավելի այնպիսի անձանց օգտագործելով, ովքեր չեն հասել օրենքով սահմանված տարիքի կամ գտնվում են անմեղսունակության վիճակում: Թեև տվյալ դեպքում հանցագործության օբյեկտիվ կողմն իրականացվում է երկու համ ավելի անձի կողմից, այնուամենայնիվ, համակատարումը բացակայում է, քանի որ առկա չէ հանցակցության քանակական հատկանիշը՝ հանցագործության սուբյեկտ համարվող առնվազն երկու անձի առկայությունը: Նման դեպքերում, մեր

¹³ Сեն Щепельков В Ф. Уголовный закон: преодоление противоречий и неполноты. М., 2003, էջ 250:

¹⁴ Сեն նույն տեղը, էջ 251:

կարծիքով, առկա է հանցանքի միանձնյա կատարումը:

Այսպիսով, ամփոփելով կատարված ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

1. Քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձին օգտագործելու միջոցով իրականացվող հանցագործության օբյեկտիվ կողմի մեջ է ներառվում ոչ միայն որպես գործիք օգտագործվող անձի արարքը, այլև միջնորդավորված կատարողի այն գործողությունները, որոնք ուղղված են օգտագործվող անձի կամքի և գիտակցության վրա ներգործելուն:

2. Եթե անձը գիտակցում է, որ հանցանքի կատարման համար օգտագործում է սահմանափակ մեղսունակին, ապա հանցագործության միջնորդավորված կատարումը բացակայում է: Տվյալ դեպքում առկա է դերերի բաշխմամբ հանցակցությունը:

3. Եթե անձը գիտակցում է, որ հանցանքի կատարման համար օգտագործում է այնպիսի անձի, ով թեև հասել է օրենքով նախատեսված որոշակի տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցելու իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարելու դա, ապա հանցագործության միջնորդավորված կատարումն առկա է:

4. Եթե անձը ներգործում է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձի, որոնցից մեկն օժտված է հանցագործության սուբյեկտի հատկանիշներով, իսկ մյուսը չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի կամ գտնվում է անմեղսունակության վիճակում, ապա առկա է համակատարումը:

5. Եթե հանցագործության սուբյեկտ համարվող անձը հանցագործության կատարման է դրդում երկու անձի, որոնցից մեկն օժտված է հանցագործության սուբյեկտի հատկանիշներով, իսկ մյուսը չի հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի կամ գտնվում է անմեղսունակության վիճակում, ապա առկա է համակատարումը:

6. Համակատարում է առկա նաև այն դեպքում, երբ հանցագործության սուբյեկտ համարվող երկու կամ ավելի անձ հանցանքը կատարում են քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակության վիճակում գտնվող անձին համատեղ օգտագործելով, սակայն իրենք օբյեկտիվ կողմի իրականացմանը չեն մասնակցում:

7. Եթե հանցագործության սուբյեկտ համարվող անձը հանցանքը կատարում է երկու կամ ավելի այնպիսի անձանց օգտագործելով, ովքեր չեն հասել օրենքով սահմանված տարիքի կամ գտնվում են անմեղսունակության վիճակում, ապա համակատարումը բացակայում է: Տվյալ դեպքում առկա է հանցանքի միանձնյա կատարում:



ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ,
ՌՀՀ պետության և իրավունքի տեսության ու
պատմության ամբիոնի վարիչ,
իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՆՃԵՌՆՄԻՏԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՅ շՐԱԺԱՐՎԵԼԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԸ

1. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (դոկտորինալ և իրավահամեմատական տեսանկյունները)

1.1. Ընդհանուր դրույթներ

(a) Ներածական մաս: Բնակարանի անձեռնմխելիությունն անհատական ազատության դրսևորումն է և դրա յուրահատուկ շարունակությունը: Լ. Դյուգին նշում էր, որ ոչ ոք չի կարող մուտք գործել անհատի բնակարան, առանց նրա համաձայնության, նույնիսկ կառավարության գործակալները կարող են, սկզբունքորեն, մուտք գործել բնակարան դատական իշխանության որոշման հիման վրա՝ օրենքով սահմանված պայմաններով և ձևերով: Բնակարանի անձեռնմխելիության նորմերը տարբերակում են մասնավոր բնակարան գիշերը և ցերեկը մուտք գործելու ռեժիմները: Գիշերային ժամերին ոչ ոք, նույնիսկ կառավարության գործակալները, ովքեր ունեն դատական որոշում, իրավունք չունեն բնակարան մուտք գործելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դա արվում է այնտեղ բնակվող անձի համաձայնությամբ կամ vis major դեպքերում (ջրհեղեղ կամ հրդեհ): Բնականաբար, գիշերային ժամերին բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կիրառվում է միայն մասնավոր բնակարաններում և ոչ թե հասարակության համար բաց համարվող տներում: Կառավարության գործակալները ցերեկը կարող են անձի կամքին հակառակ մուտք գործել բնակարան, սակայն սկզբունքորեն դա կարող են անել դատարանի որոշման հիման վրա: Ինչպես 1789թ. Հռչակագրում անհատական ազատությունն ան-

բաժանելի է դատական երաշխիքից, նույն կերպ դրանից անբաժան է նաև բնակարանի անձեռնմխելիությունը, որն անհատական ազատության շարունակությունն է¹:

Անձի բնակարան կարելի է մուտք գործել միայն այնտեղ բնակվող անձանց համաձայնության դեպքում: Առանց նրանց համաձայնության՝ բնակարանում տեղի ունեցածը չի կարող հրապարակայնացվել: Բնակարանի անձեռնմխելիության սկզբունքի ուժով անձեռնմխելի են նաև այնտեղ գտնվող նոթատետրերը, գրառումները և այլ նյութեր ու առարկաներ²:

(b) Եվրոպական դատարանի ընդհանուր չափանիշները: Եվրոպական դատարանը մի շարք գործերով նշել է, որ պետությունները բնակարանի անձեռնմխելիությանը միջամտելու հարցում օժտված են որոշակի հայեցողությամբ, մասնավորապես՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի պահանջում բնակարանում խուզարկություն և առգրավում կատարելու համար նախնական դատական որոշում: Դրա հետ մեկտեղ՝ ազգային օրենսդրությունը պետք է նախատեսի բնակարանի անձեռնմխելիությունը սահմանափակելիս չարաշահումների դեմ համապատասխան երաշխիքներ, քանի որ նախնական դատական սանկցիայի պահանջի բացակայության պայմաններում քննության մարմինները խուզարկություն և առգրավում կատարելու հիմքերը գնահատելիս օժտված կլինեն անսահմանափակ հայեցողությամբ: Օրինակ՝ այդպիսի երաշխիք կարող է հանդիսանալ խուզարկության օրինականությունը և հիմնավորվածությունը դատարան բողոքարկելու

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

¹ Дюги Л. Конституционное право. Общая теория государства. Перевод А. Яценко, В. Краснокутского и Б. Сыромятникова. М.: 1908. С. 747-748.
² Стецовский Ю. И. Право на свободу и личную неприкосновенность: Нормы и действительность. М.: Дело, 2000. С. 424.

անձի իրավունքը³: Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի վերաբերյալ գործով (Smirnov v. Russia, 07.06.2007.) Եվրոպական դատարանը նշել է, որ նախնական դատական օրդերի բացակայությունը որոշակի չափով հավասարակշռվել է խուզարկություն կատարելուց հետո քննիչի գործողությունները դատարան բողոքարկելու իրավունքով: Դիմողը կարող էր բողոք ներկայացնել դատարան (ինչպես որ արել է), իսկ վերջինս կոչված էր ստուգելու խուզարկություն կատարելու մասին որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը⁴: Մյուս կողմից՝ Ֆրանսիայի դեմ մի շարք գործերով (Crémieux v. France, Miaillhe v. France) Եվրոպական դատարանը նշել է, որ դատական օրդերի բացակայության պայմաններում օրենքով նախատեսված սահմանափակումները և պայմանները բավականին լայն են և անորոշ, առկա են իրավունքին միջամտելու մի շարք սողանցքներ, և այդ պատճառով միջամտությունը չի կարող համարվել պետության կողմից հետապնդվող նպատակին համաչափ:

1.2. *Բնակարանի անձեռնմխելիության իրավունքներից հրաժարվել հասկացությունը և թույլատրելիության պայմանները*

(a) Բնակարանի անձեռնմխելիության իրավունքներից հրաժարվել հասկացությունը: Ինչպես նշվել է՝ «իրավունքից հրաժարվել» հասկացությունը տարբեր իրավական համակարգերում և դոկտրիններում ընկալվում է տարբեր ուղիով⁵: Օրինակ՝ գերմանացի առանձին իրավաբաններ, իրավունքից հրաժարվել ասելով, հասկանում են հիմնական իրավունքի կրողի համաձայնությունը, որ պետությունը ներգործի իր հիմնական իրավունքներով պաշտպանված բարիքների վրա այնպես, որ այդ ներգործությունն այլևս արգելված չլինի, օրինակ՝ ներարկումը հանդուրժելը, բնակարանի խու-

զարկումը հանդուրժելը և նման դեպքերը⁶: Հիմք ընդունելով իրավունքից հրաժարվելու նշված ընկալումը՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվել ասելով՝ հասկանում ենք քննչական գործողություններ կատարելու նպատակով բնակարան մուտք գործելու վերաբերյալ անձի՝ համաձայնություն տալը, ինչը նշանակում է, որ քրեական հետապնդման մարմնի համար անձի բնակարան մուտքն այլևս արգելված չէ, ուստի վերանում է նախնական դատական երաշխիք կիրառելու անհրաժեշտությունը: Բացի այդ՝ նախապես նշենք, որ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու տեսանկյունից որևէ նշանակություն չունի, թե անձի համաձայնությամբ բնակարան մուտք գործելու դեպքում ինչ տեսակի քննչական գործողություն է կատարվելու՝ խուզարկություն, առգրավում, զննություն, թե՛ այլ քննչական գործողություն (այս մասին՝ հաջորդիվ):

(b) Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու ձևերը: Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու իրավաչափության համար կարևոր է այն, թե քննչական գործողություններ կատարելու նպատակով բնակարան մուտք գործելու մասին իրավաստիրոջ (իրավունքի կրողի) համաձայնությունը ինչ ձևով պետք է տրվի՝ գրավոր, թե՛ բանավոր:

Ռուսական աղբյուրներում նշվում է, որ օրենքը չի սահմանում բնակարանում զննություն կատարելու համաձայնության ձևը: Երևի թե՛ դա պետք է լինի գրավոր, սակայն առանձին դատավարական փաստաթուղթ կազմելու անհրաժեշտություն չկա, բնակարանում ապրող անձի համաձայնությունը կարող է ամրագրվել տարածքի զննության արձանագրությունում և հավաստվի ստորագրությամբ: Հնարավոր է

³ Вилкова Т. Ю. Принцип неприкосновенности жилища в уголовном судопроизводстве: правовые основы, содержание, гарантии. Актуальные проблемы российского права. 2015. №2. <http://cyberleninka.ru> (19.06.2017).

⁴ http://european-court.eu/uploads/ECHR_Smirnov_v_Russia_07_06_2007.pdf (17.11.2017).

⁵ Ղամբարյան Ա., Ավոյան Ք. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները: «Օրինականություն» 2016, թիվ 91, էջեր 23-34, Ղամբարյան Ա. Դատական նիստին մասնակցելու իրավունքից հրաժարվելը: Եր.: Հեղ. հրատ. 2017, Գամբարյան Ա. С. Отказ от соматических прав и вопросы уголовно-процессуального вмешательства. Ереван, 2017, Գամբարյան Ա. С. Отказ от права на встречный опрос (конфронтацию) и правовые последствия. Ереван, 2017, Գամբարյան Ա. С. Отказ от права на тайну связи и вопросы уголовно-процессуального вмешательства. Ереван, 2017.

⁶ Ջաքս Միխայել, Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները: Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական իրավունքում. Եր.: Տիգրան Մեծ, 2012. էջ 63:

նաև կիրառել արտասահմանյան փորձը, օրինակ՝ ԱՄՆ սեփականատերը կարող է համաձայնություն տալ բնակարանը զննելու իր սահմանած պայմաններով, դիցուք՝ թույլատրում է զննել առանձնատան մի հարկը, իսկ երկրորդ հարկը՝ ոչ⁷:

Ինչ վերաբերում է լուծյալ բնակարան մուտք գործելու համաձայնություն տալուն՝ լուծյալները per se չի նշանակում, որ անձը համաձայնություն է տալիս մուտք գործելու բնակարան և դրանով իսկ հրաժարվում է իր իրավունքից: Բնակարան մուտք գործելու համաձայնությունը պետք է լինի հստակ և որոշակի ու չի կարող հիմնվել ենթադրությունների վրա: Այսպես՝ եթե անձը բնակարան մուտք գործելու հարցի վերաբերյալ լուծում է, ապա դա չի կարող մեկնաբանվել որպես բնակարան մուտք գործելու համաձայնություն: Նման դեպքում քրեական հետապնդման մարմինը քննչական գործողություն կատարելու նպատակով բնակարան մուտք գործելու համար պետք է ձեռք բերի դատարանի որոշում:

Եթե բնակիչները բնակարանում չեն գտնվում, ապա քրեական հետապնդման մարմիններն այնտեղ քննչական գործողություններ կատարելու համար պետք է ստանան դատարանի որոշում: Ավելին՝ եթե բնակիչը բնակարանի մուտքի դուռը բաց է թողել, ապա դռան բաց լինելուց չի կարելի ենթադրել, թե տվյալ բնակարանում բնակվող անձը կոնկլուդենտ գործողությամբ համաձայնություն է տվել մուտք գործելու իր բնակարան:

(c) Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու թույլատրելիության ընդհանուր պայմանները: Իրավունքի տեսության մեջ ներկայացվել է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու ընդհանուր իրավաչափության պայմանները, որոնք կարելի է կիրառել mutatis mutandis բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու դեպքում:

Առաջին պայման՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից կարելի է հրաժարվել ոչ թե ընդհանրապես, այլ՝ կոնկրետ քրեական գործի շրջանակներում: Անթույլատրելի է

ընդհանրապես հրաժարվել բնակարանի անձեռնմխելիության իրավունքից:

Երկրորդ պայման՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը թույլատրելի է, եթե գիտակցված և կամավոր է, անձը կանխատեսում է սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու փաստական և իրավական հետևանքները: Քրեական հետապնդման մարմինները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն հատկապես հասարակության խոցելի անդամների (երեխաներ, տարեց մարդիկ, ֆիզիկական և հոգեբանական սահմանափակում ունեցող անձինք և այլն) կողմից բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու կամավորության և գիտակցվածության պայմաններին:

Եթե բնակելի տարածքում բնակվում է միայն անչափահասը կամ հոգեբանական սահմանափակումներ ունեցող մարդը, ապա բնակելի տարածք մուտք գործելու մասին նրանց տված «համաձայնությունը» չի կարող գնահատվել իրավունքից հրաժարում: Նման դեպքում բնակարան մուտք գործելու և այնտեղ քննչական գործողություններ կատարելու համար պետք է առկա լինի դատարանի որոշում: Ընդ որում՝ բնակելի տարածքում բնակվող անձի անչափահաս լինելու կամ հոգեկան սահմանափակումներ ունենալու հանգամանքը քրեական հետապնդման մարմնի համար պետք է ակնհայտ լինի (դա կարող է տեսանելի լինել մարդու արտաքին հատկանիշներից, կամ քրեական հետապնդման մարմինը իմացել է այդ մասին): Եթե քրեական հետապնդման մարմինն անձի համաձայնության հիման վրա մուտք է գործել բնակարան և կատարել քննչական գործողություններ, սակայն հետագայում պարզվել է, որ մուտք գործելու համաձայնություն տված մարդն անչափահաս է կամ ունի հոգեկան սահմանափակումներ, ապա քրեական հետապնդման մարմնի գործողությունները կարելի է որակել բարեխղճությամբ կատարված, իսկ ձեռք բերված ապացույցները՝ թույլատրելի, եթե նրա համար մարդու անչափահաս լինելը կամ հոգեկան սահմանափակումներ ունենալու հանգամանքն ակնհայտ չէր:

⁷ Принципы современного российского уголовного судопроизводства. Монография. Науч. ред. И. В. Смолькова; отв. ред. Р.В. Мазюк. М.: Юрлитинформ, 2015. С. 196-197, Власенко Н., Иванов А. Осмотр жилища. Законность. 2004. № 11. С. 25-27.

Երրորդ պայման՝ կոնկրետ գործով բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը վերջնական է: Անձը, հրաժարվելով բնակարանի անձեռնմխելիության իրավունքից, պետք է գիտակցի, որ այլևս չի կարող փոխել մտադրությունը և չի կարող քննչական գործողություն կատարելու ընթացքում պահանջել դադարեցնելու գործողության կատարումը:

Չորրորդ պայման՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից կարող է հրաժարվել այդ իրավունքի կրողը (իրավատերը): Կարծում ենք, որ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրողը (իրավատերը) այն անձն է կամ անձինք, ովքեր փաստացի բնակվում են տվյալ վայրում: Եթե բնակարանում փաստացի բնակվում են մի քանի անձ, ապա քրեական հետապնդման մարմինը նրանցից յուրաքանչյուրից պետք է ստանա բնակարան կամ իրենց սենյակ մուտք գործելու համաձայնություն: Նրանցից որևէ մեկի առարկության կամ համաձայնության բացակայության դեպքում, քրեական հետապնդման մարմինը բնակարան կարող է մուտք գործել դատարանի որոշման հիման վրա: Ի տարբերություն նշվածի՝ ԱՄՆ դատական պրակտիկայում համատեղ բնակվող անձանցից մեկի տված համաձայնությունը բավարար է առանց օրդերի բնակարանում խուզարկություն կատարելու համար (այս մասին՝ հաջորդիվ):

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից նշանակություն չունի, թե անձը տվյալ բնակարանում ի՞նչ իրավական հիմքով է բնակվում՝ սեփականությամբ, վարձակալությամբ, թե՛ անհատույց օգտագործման: Օրինակ՝ եթե բնակարանը տրվել է վարձակալության, ապա բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրողը ոչ թե բնակարանի սեփականատերն է (եթե, իհարկե, նա այնտեղ չի բնակվում), այլ՝ փաստացի բնակվող անձը՝ վարձակալը, ուստի բնակարան մուտք գործելու համաձայնությունը իրավաչափ է, եթե տրվել է ոչ թե բնակարանի սեփականատիրոջ, այլ՝ վարձակալի կողմից:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից քրեադատավարական նշանակություն չունի նաև բնակարանում հաշվառված լինելու հանգամանքը: Եթե անձը փաստացի բնակվում է բնակարանում, սակայն այնտեղ հաշվառված չէ, ապա համարվում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սուբյեկտ: Մյուս կողմից՝ եթե անձը իրավաբանորեն հաշվառված է բնակարանում, սակայն փաստացի չի բնակվում այդ բնակարանում, ապա նա այս սահմանադրական իրավունքի կրողը չէ, և նրանից բնակարան մուտք գործելու համաձայնություն ստանալու անհրաժեշտություն չկա: Ռուսական գրականությունում այս հարցի վերաբերյալ առկա է նաև հակառակ մոտեցումը. «Օրենքը չի պատասխանում այն հարցին, թե արդյոք պետք է ստանալ տվյալ հասցեում գրանցված, սակայն ժամանակավորապես բացակայող անձի համաձայնությունը, եթե նրա հետ բնակվող մյուս բնակիչները համաձայնություն են տվել կատարելու համապատասխան քննչական գործողություն: Թվում է, թե այս դեպքում գրանցված անձի համաձայնությունը նույնպես անհրաժեշտ է, քանի որ այդ քննչական գործողության կատարումը կարող է հանգեցնել նրա իրավունքների և օրինական շահերի խախտմանը»⁸: Բոլոր դեպքերում առավել ընդունելի է այն մոտեցումը, ըստ որի՝ բնակարանում բնակվող է համարվում այն չափահաս անձը, ով մշտապես կամ ժամանակավորապես ապրում է բնակարանում կամ տիրապետում է բնակարանին սեփականության իրավունքով՝ այնտեղ գրանցված լինելու փաստից անկախ⁹:

Եթե բնակարանում հաշվառված անձը երբևէ փաստացի չի բնակվել այնտեղ, ապա քրեադատավարական առումով բնակարանի անձեռնմխելիության իրավունքով պաշտպանվող սոցիալական բարիքը կամ դրա պաշտպանության անհրաժեշտությունը բացակայում է, ուստի բնակարան մուտք գործելն ինքնին չի կարող ազդել նրա՝ գոյություն չունեցող իրավունքի վրա: Մյուս կողմից՝ եթե բնակարանում

⁸ Черкасова Е. К. Особенности проведения отдельных следственных действий участковым уполномоченным полиции. Научно-методический электронный журнал «Концепт». 2014. Т. 26. С. 306–310. URL: <http://e-koncept.ru/2014/64362.htm>.

⁹ Баев О. Я. Тактика уголовного преследования и профессиональной защиты от него. Следственная тактика. М.: 2003. С. 82.

հաշվառված անձը, թեև երբևէ չի բնակվել այնտեղ, սակայն բնակարանում, որպես պահեստ, պահվում են նրա անձնական իրերը (գույք, օրագրեր և այլն), ապա բնակարանում քննչական գործողություն կատարելու դեպքում նրա անձնական իրերը պաշտպանվում են անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքով, բայց ո՛չ բնակարանի անձեռնմխելիության իրավունքով:

Իրավաբանական անձն արդյոք կարո՞ղ է հանդիսանալ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրող, օրինակ՝ քաղաքացին չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները, և նրա բնակարանը բռնագանձվել ու հատկացվել է բանկին: Արդյոք բանկը բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրող է, և այդ բնակարանում քննչական գործողություններ կատարելու համար արդյոք պե՞տք է նախատեսել դատական երաշխիք: Կարծում ենք՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքն իր էությանը կիրառելի չէ իրավաբանական անձանց նկատմամբ (ՀՀ Սահմանադրության 74-րդ հոդված): Այս դեպքում իրավաբանական անձին պատկանող բնակարանը պետք է դիտել որպես շինություն, բայց ո՛չ բնակարան: Նման բնակարանները պաշտպանվում են ոչ թե բնակարանի անձեռնմխելիության, այլ՝ սեփականության իրավունքով: Եթե իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանում փաստացի մարդ չի բնակվում, և այնտեղ բացակայում են օրենքով պաշտպանվող այլ արժեքներ (օրինակ՝ բանկային գաղտնիք կազմող փաստաթղթեր և այլն), ապա այդ տարածք մուտք գործելու համար բնակարանի անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով նախատեսված դատավարական երաշխիքները չեն կիրառվում:

Ի դեպ՝ ՀՀ դատական պրակտիկայում այս մոտեցումը կիրառվում է նաև բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտման հանցակազմի մեկնաբանության դեպքում: Օրինակ՝ դատավոր Ա. Ազարյանը թիվ ԵՇԴ-0158/01/15 գործով արդարացրել է քաղաքացուն, ով մեղադրվում էր, որ, նախապես իմանալով, որ իր քրոջ որդուն նախկինում սեփականության իրավունքով պատկանող բնակարանը վերջինիս կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու պատ-

ճառով բռնագանձվել և դարձել է իրավաբանական անձ հանդիսացող «Առաջին հիփոթեքային ընկերության» սեփականությունը՝ նշված իրավաբանական անձի տնօրենի կամքին հակառակ, բնակվելու նպատակով, դռան փականը դիտավորությամբ կոտրելու եղանակով ապօրինի մուտք է գործել հիշյալ ընկերության սեփականությունը հանդիսացող բնակարան և բնակվել է այնտեղ՝ խախտելով «Առաջին հիփոթեքային ընկերությանը» պատկանող բնակարանի անձեռնմխելիությունը: Դատավորն իրավացիորեն արդարացրել է ամբաստանյալին՝ այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քր. օր.-ի 147-րդ առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար: Քննարկվող հանցագործության անմիջական օբյեկտը ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու բնակարանի անձեռնմխելիության իրավունքի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմն ամբողջով է մարդու բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, իսկ ՀՀ քր. օր.-ի վերոհիշյալ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մարդու կամքին հակառակ նրա բնակարան ապօրինի մուտք գործելու համար: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հիշատակված նորմերում խոսքը հենց մարդու, այլ ոչ թե՝ իրավաբանական անձի բնակարանի անձեռնմխելիության մասին է: Մինչդեռ՝ սույն գործի շրջանակներում ամբաստանյալին մեղադրանք է առաջադրվել իրավաբանական անձ հանդիսացող «Առաջին հիփոթեքային ընկերությանը» պատկանող բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու պատճառով:

Առանձին պետք է քննարկել նաև այն հարցը, թե արդյոք քրեադատավարական տեսանկյունից բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրող (իրավատեր) կարո՞ղ է համարվել անձը, ով տվյալ բնակարանում բնակվում է ապօրինի, օրինակ՝ մշտական բնակության վայր չունեցող անձն ապօրինի մուտք է գործել մեկ այլ անձին պատկանող, սակայն չբնակեցված բնակարան և այնտեղ բնակություն է հաստատել: Նկատի ունենալով մեր այն դիրքորոշումը, որ բնակարանի անձեռնմխելիության իրա-

վունքի կրող է բնակարանում փաստացի բնակվող անձը, իրավական հիմքերից և ռեժիմից անկախ, այս դեպքում նույնպես մեկ ուրիշի բնակարանում ապօրինի բնակվող անձը քրեադատավարական տեսանկյունից համարվում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքի կրող: Նման դեպքում բնակարանի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությունը վերաբերում է բացառապես քրեադատավարական հարաբերություններին: Օրինակ՝ քրեական հետապնդման մարմինը չի կարող ապօրինի բնակվող անձի կամքին հակառակ և առանց դատարանի որոշման, զուտ այն հիմքով, որ նա բնակարանում ապօրինի է բնակվում, մուտք գործել նրա կացության վայրը և ապօրինի զենք պահելու կասկածանքով բնակարանում կատարել քննչական գործողություններ:

Ասվածը վերաբերում է միայն քրեադատավարական հարաբերություններին և չպետք է տարածել քրեաիրավական ու վարչաիրավական ոլորտների վրա: ՀՀ դատախազության 03.03.2017թ. կոլեգիայի արձանագրությունում արդարացիորեն նշված է, որ պետք է բացառել բնակարանում առանց իրավաբանական հիմքի բնակվող անձանց բնակարանի անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությունը: Վերը նշվածը չի վերաբերում նաև այն դեպքերին, երբ մեկ ուրիշին պատկանող բնակարան ապօրինի մուտք գործելու փաստի առթիվ տվյալ անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, և իրականացվում է քննություն, կամ նրան բնակարանից վտարելու համար կիրառվում են վարչաիրավական միջոցներ:

1.2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու իրավահամեմատական տեսանկյունը

(a) Հետխորհրդային առանձին պետությունների իրավակարգավորումները

(1) Վրաստանի քրեական դատավարությունը.

Վրաստանի քր. դատ. օր.-ի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնավոր սեփականության կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը սահմանափակող քննչական գործողությունները կատարվում են կողմերի միջնորդությամբ՝ դատարանի որոշմամբ: Սույն հոդվածով նախատեսված քննչական գործողությունները կարող են կատարվել առանց դատարանի որոշման, եթե առկա է համասեփականատիրոջ կամ տիրապետողի համաձայնությունը: Այս ընդհանուր դրույթը վերաբերում է նաև հաղորդակցության գաղտնիության իրավունքից հրաժարվելուն: Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձի կամքին հակառակ բնակարանում զննություն կատարելու անհրաժեշտության դեպքում կողմերը միջնորդությամբ դիմում են դատարան:

Ինչպես նկատում ենք՝ Վրաստանի քրեական դատավարությունում առանց դատարանի որոշմամբ կարելի է մուտք գործել անձի բնակարան, եթե առկա է անձի համաձայնությունը: Մյուս կողմից՝ եթե բացակայում է անձի համաձայնությունը, ապա բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարելի է սահմանափակել դատարանի որոշմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե բնակարանում ինչ քննչական գործողություն է կատարվելու: Օրինակ՝ բնակարանում մարդու կամքին հակառակ զննություն կատարելու համար նույնպես պահանջվում է դատարանի որոշում:

(2) Ուկրաինայի քրեական դատավարությունը.

Ուկրաինայի քր. դատ. օր.-ի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չի թույլատրվում մուտք գործել անձի բնակարան կամ նրան պատկանող այլ տարածք, այնտեղ կատարել զննություն կամ խուզարկություն, ոչ այլ կերպ, քան դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա՝ բացառության օրենքով նախատեսված դեպքերի: Քր. դատ. օր.-ի 233-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ ոչ ոք իրավունք չունի որևէ նպատակով մուտք գործել բնակարան կամ անձին պատկանող տարածք, ոչ այլ կերպ, քան բնակարանին տիրապետող անձի կամավոր համաձայնությամբ կամ քննչական դատավորի որոշման հիման վրա՝ բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննիչը, դատախազն իրավասու են առանց քննչական դատավորի որոշման մուտք գործել բնակարան կամ անձին պատկանող այլ տարածք միայն անհետաձգելի դեպքերում, ո-

րոնք կապված են անձի կյանքը կամ գույքը փրկելու կամ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձին անմիջականորեն հետապնդելու հետ: Օրենսգրքի մեջբերված կարգավորումներից դժվար է միանշանակ պատասխանել այն հարցին, թե արդյոք Ոսկրահայի քրեական դատավարությունում թույլատրվում է առանց դատարանի որոշման, սակայն անձի համաձայնությամբ քննչական գործողություն կատարելու համար մուտք գործել անձի բնակարան: Խնդիրն այն է, որ նորմ-սկզբունքում (13-րդ հոդվածում) բնակարանում խուզարկություն կամ զննություն կատարելու համար պարտադիր է դատարանի որոշման առկայությունը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, իսկ օրենսգրքի 233-րդ հոդվածում սահմանված է, որ որևէ նպատակով բնակարան կարելի է մուտք գործել անձի համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի: Առավել հակված ենք կարծելու, որ առանց դատարանի որոշման կարելի է բնակարան մուտք գործել երկու դեպքում՝ 1) եթե առկա է անձի համաձայնությունը, 2) իսկ անձի համաձայնության բացակայության դեպքում՝ եթե առկա է անհետաձգելի իրավիճակ:

(3) Ռուսաստանի քրեական դատավարությունը.

Ռուսաստանի քրեական դատավարությունում բնակարանի անձեռնմխելիության իրավունքի միջամտության պայմանները, հիմքերը, կարգը և սահմանները կախված են այն հանգամանքից, թե բնակարան մուտք գործելու դեպքում ինչ դատավարական գործողություններ են կատարվելու: Օրինակ՝ բնակարանում զննությունը թույլատրվում է այնտեղ բնակվող անձի համաձայնությամբ, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի որոշմամբ (ՌԴ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 1-ին մաս): Բնակարանում խուզարկությունը և առգրավումը կարող է կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա՝ անկախ այն հանգամանքից, թե առկա է այնտեղ բնակվող

անձի համաձայնությունը, թե ոչ (ՌԴ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածի 2-րդ մաս): ՌԴ քր. դատ. օր.-ի 165-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ բնակարանում զննությունը, խուզարկությունը, առգրավումը, անձնական խուզարկությունն անհետաձգելի դեպքերում կարող են կատարվել քննիչի կամ հետաքննիչի որոշման հիման վրա՝ առանց դատարանի որոշում ստանալու:

Անձի բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակող մյուս դատավարական գործողությունները (քննչական փորձարարությունը, հարցաքննությունը, ճանաչման ներկայացնելը և այլն) կարող են կատարվել անձի համաձայնությամբ կամ դատարանի որոշման հիման վրա: Նման պահանջ սահմանել է ՌԴ Սահմանադրական դատարանը (06.07.2010թ. № 911-0-0 որոշում): ՌԴ Սահմանադրական դատարանը 16.12.2010թ. №1658-0-0 որոշմամբ նախատեսել է, որ եթե բնակարանը համարվում է դեպքի վայր, ապա այնտեղ կարելի է կատարել դեպքի վայրի զննություն մինչև քրեական գործ հարուցելը, եթե նույնիսկ բացակայում է այնտեղ բնակվող անձի համաձայնությունը կամ դատարանի որոշումը: Այս դեպքում հետաքննիչը, քննիչը պետք է որոշման մեջ նշեն այն փաստական տվյալները, որոնք հիմնավորում են անհետաձգելի բացառիկ դեպքը¹⁰:

(4) Ղազախստանի քրեական դատավարությունը.

Ղազախստանի քր. դատ. օր.-ի 220-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ բնակելի տարածքի զննությունն իրականացվում է այնտեղ բնակվող չափահաս անձանց համաձայնությամբ կամ քննչական դատավորի սանկցիայով: Եթե այնտեղ բնակվող անձինք անչափահաս են կամ ակնհայտորեն տառապում են հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ կամ առարկում են զննության դեմ, ապա մինչդատական քննություն իրականացնող անձը կայացնում է հարկադրաբար զննություն կատարելու մասին որոշում, որը սանկցավորում

¹⁰ Вилкова Т. Ю. Принцип неприкосновенности жилища в уголовном судопроизводстве: правовые основы, содержание, гарантии. Актуальные проблемы российского права. 2015. №2. <http://cyberleninka.ru> (19.06.2017), Тензина Е. Ф. Конституция РФ как гарант неприкосновенности жилища. Вестник Удмуртского университета. Серия «Экономика и право». 2014. Вып. 1. С. 210.

է քննչական դատավորը: Նույն հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ եթե բնակելի վայրը համարվում է դեպքի վայր, և այնտեղ զննության կատարումն անհետաձգելի է, ապա բնակելի տարածության զննությունն իրականացվում է մինչդատական քննություն իրականացնող անձի որոշման հիման վրա, սակայն մեկօրյա ժամկետում նյութերն ուղարկելով դատախազին: Դատախազը, անհապաղ քննարկելով ներկայացված նյութերը, օրինականությունն ստուգելու նպատակով ուղարկում է քննչական դատավորին:

Բնակարանում զննություն կատարելու որոշման դատական սանկցավորման կարգը սահմանված է Ղազախստանի քր. դատ. օր.-ի 220-րդ հոդվածի 13-1, 13-2, 13-3, 13-4, կետերով:

(5) Ղրղզստանի քրեական դատավարությունը.

Ղրղզստանի նոր քր. դատ. օր.-ի (ուժի մեջ կմտնի՝ 01.01.2019թ.) 14-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք իրավունք չունի մուտք գործելու անձի սեփականության կամ այլ իրավունքով պատկանող բնակարան կամ այլ օբյեկտ՝ նրա կամքին հակառակ: Սեփականության կամ այլ իրավունքով պատկանող բնակարանում կամ այլ օբյեկտում խուզարկություն, առգրավում, զննություն կամ այլ դատավարական գործողություններ թույլատրվում են դատարանի որոշման հիման վրա: Այս գործողություններն օրենքով նախատեսված դեպքում կարող են կատարվել առանց դատարանի որոշման: Այդ գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը ենթակա են դատական ստուգման: Նույն օրենսգրքի 165-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դեպքի վայր համարվող բնակարանում կամ այլ օբյեկտում զննությունն իրականացվում է այնտեղ բնակվող անձի համաձայնությամբ: Եթե այնտեղ բնակվող անձն առարկում է զննության դեմ, կամ բնակվող անձինք անչափահաս են կամ ակնհայտորեն տառապում են հոգեկան հիվանդությամբ, ապա դեպքի վայրի հարկադիր զննություն իրակա-

նացվում է քննչական դատավորի որոշման հիման վրա: Անհետաձգելի դեպքերում դեպքի վայրի զննությունն իրականացվում է առանց քննչական դատավորի որոշման, սակայն քննիչը կամ հետաքննության մարմնի իրավասու պաշտոնատար անձը զննությունն սկսելու պահից 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնում է քննչական դատավորին: Ինչ վերաբերում է բնակարանում խուզարկություն կատարելուն՝ Ղրղզստանի քրեական դատավարությունում դա թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ անհետաձգելի դեպքերի (քր. դատ. օր.-ի 205-րդ հոդվածի 8-րդ մաս): Պարզապես, եթե բնակարանում խուզարկությունը կատարվում է անձի կամքին հակառակ, ապա, որպես լրացուցիչ երաշխիք, նախատեսված է, որ խուզարկությանը մասնակցում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչը: Այս լրացուցիչ երաշխիքը սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ նոր քր. դատ. օր.-ում ընթերականների ինստիտուտ նախատեսված չէ:

(b) Արտասահմանյան այլ պետությունների իրավակարգավորումները

(1) Ամերիկայի քրեական դատավարությունը.

ԱՄՆ-ում առանց դատարանի թույլտվության, բայց անձի համաձայնությամբ խուզարկությունը լավ հաստատված կանոն է¹¹: Խուզարկություն կատարելու համաձայնությունը նշանակում է, որ անձը հրաժարվում է ԱՄՆ Սահմանադրության IV լրացումով երաշխավորված իրավունքից¹²: ԱՄՆ Գերագույն դատարանը *Schneckloth v. Bustamonte* գործով արձանագրել է, որ սահմանադրական տեսանկյունից կասկածելի ոչինչ չկա անձի համաձայնությամբ կատարված խուզարկության մեջ: Ոստիկանների վարքագիծն անձի համաձայնությամբ կատարված խուզարկության ընթացքում կարող է նույնը լինել, ինչ եթե կատարվեր դա-

¹¹ Bryan R. Lemons Searching a vehicle without a warrant, https://www.fletc.gov/sites/default/files/imported_files/training/programs/legal-division/downloads-articles-and-faqs/research-by-subject/4th-amendment/searchingavehicle-consent.pdf (հոդվածը վերաբերում է փոխադրման միջոցի խուզարկությանը) (16.11.2017)

¹² Стойко Н. Г., Семухина О. Б. Уголовный процесс в США. Учебное пособие. Краснояр. гос. ун-т. Красноярск, 2000. С. 79.

տարանի թույլտվությամբ¹³: ԱՄՆ Գերագույն դատարանը *Schneckloth v. Bustamonte* գործով նաև նշել է, որ չսանկցավորված խուզարկության այս տեսակը հիմնված է ոչ թե արտակարգ հանգամանքների, այլ՝ ԱՄՆ Սահմանադրության IV լրացմամբ երաշխավորված իրավունքից հրաժարվելու վրա, որը դրսևորվում է խուզարկություն կատարելու վերաբերյալ անձի համաձայնություն տալով: Խուզարկություն կատարելու մասին համաձայնությունը պետք է լինի կամավոր, դա չպետք է ստանալ հարկադրանքի ճանապարհով (սպառնալիքի, վախեցնելու, ուժ ցուցադրելու): Բոլոր դեպքերում ոստիկանությունը պարտավոր չէ մարդուն տեղեկացնել ԱՄՆ Սահմանադրության IV լրացմամբ նախատեսված իրավունքի և համաձայնություն չտալու իրավունքի մասին, սակայն պարտավոր է կասկածյալին նախազգուշացնել ԱՄՆ Սահմանադրության V լրացմամբ նախատեսված իրավունքների մասին, որոնք կոչված են կանխելու ինքնամեղադրանքը:

ԱՄՆ դատական պրակտիկայում անձի համաձայնությամբ նրա սեփականության, ավտոմեքենայի կամ պայուսակի խուզարկություն թույլատրվում է հետևյալ երեք պայմանի առկայության դեպքում.

1) Համաձայնությունը պետք է լինի իրական: Եթե համաձայնությունն սպառնալիքի, բռնության կամ խաբեության հետևանք է, ապա կամավոր չէ և իրավաբանական նշանակություն չունի: Օրինակ՝ Բամփերի վերաբերյալ գործով (1968) ոստիկանությունը տանտիրոջը խաբեությամբ տեղեկացրել էր, որ ոստիկաններն ունեն բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվություն, ինչից հետո տան սեփականատերը բացել էր դուռը և ասել. «Այդ դեպքում՝ սկսեք»: Հետագայում պարզվել էր, որ խուզարկություն կատարելու որևէ թույլտվություն չի ներկայացվել: Մեղադրողը պնդում էր, որ տան սեփականատերը տվել էր խուզարկություն կատարելու համաձայնությունը, սակայն ԱՄՆ Գերագույն դատարանն այդ համաձայնությունը ճանաչել էր անվավեր, քանի

որ ձեռք էր բերվել հարկադրանքի արդյունքով:

2) Համաձայնություն կարող է տալ միայն պատշաճ անձը, ում սեփականությունը պատրաստվում են խուզարկել: Այլ անձի համաձայնությունը (երեխա, հարևան և այլն) հաշվի չի կարող առնվել: *ԱՄՆ Գերագույն դատարանը որոշել է, որ բնակարանի խուզարկություն կատարելու մասին բնակելի տան վարձատիր տված համաձայնությունն առանց դատարանի որոշման խուզարկություն կատարելու հիմք չէ: Սակայն համավարձակալը կարող է թույլատրել խուզարկել համատեղ օգտագործվող տարածքը, բայց չի կարող համաձայնություն տալ խուզարկելու բացառապես այլ անձի սեփականությունը համարվող տարածքը: Եթե երկու անձ համատեղ տնօրինում են սեփականությունը, ապա խուզարկություն կատարելու մասին նրանցից մեկի տված համաձայնությունը բավարար հիմք է առանց դատարանի որոշման խուզարկություն կատարելու համար* (412 U. S. 248 (1973):

3) Սեփականատերը կարող է համաձայնություն տալ ցանկացած պայմանով, օրինակ՝ թույլատրում է խուզարկել առանձնատան առաջին հարկը և չի թույլատրում բարձրանալ երկրորդ հարկ¹⁴:

(2) *Անգլիայի քրեական դատավարությունը.*

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը պատմականորեն առավելագույնս պաշտպանված է եղել անգլիական իրավունքում: Բլեքստոնը նշում էր, որ Անգլիայի օրենքներն անձանց մասնավոր բնակարանն այն աստիճանի էին պաշտպանում, որ օրենքի ուժով դա համարվում էր մարդու ամրոցը: Դրա ուժով՝ Անգլիայում հիմնական սկզբունք էր, որ պետության գործակալը (կոնստեբլը) չէր կարող ներխուժել բնակելի տարածք նույնիսկ կալանքի մասին կարգադրությունը կատարելու համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գործը վերաբերում էր սպանությանը¹⁵:

Ժամանակակից անգլիական իրավունքում

¹³ *Schneckloth v. Bustamonte*, 412 U.S. 218 (1973). <https://supreme.justia.com/cases/federal/us/412/218/case.html> (16.11.2017).

¹⁴ Пешков М. А. Арест и обыск в уголовном процессе США. М.: Спарк, 1998. С. 70.

¹⁵ Дюги Л. Конституционное право. Общая теория государства. Перевод А. Яценко, В. Краснокутского и Б. Сыромятникова. М.: 1908. С. 749.

մագիստրի օրդերով բնակարան մուտք գործելու հարաբերությունները կարգավորվում են «Ոստիկանության և քրեական գործերով ապացույցների մասին» օրենքի 8-րդ հոդվածով, որի համաձայն՝ մագիստրը կարող է ոստիկանին բնակարան մուտք գործելու և այնտեղ խուզարկություն կատարելու թույլատվություն տալու մասին օրդեր արձակել, եթե՝ 1) կատարվել է հանցագործություն, որը հետապնդվում է մեղադրական ակտով, 2) բնակարանում առկա են նյութեր, որոնք գործի քննության համար էական նշանակություն կունենան, 3) այդ նյութերն օժտված չեն հատուկ արտոնություններով, այսինքն՝ չեն գտնվում հատուկ իրավաբանական պաշտպանության ներքո, 4) հնարավոր չէ իրականում ստանալ բնակարան մուտք գործելու թույլտվություն՝ առանց օրդերի (օրինակ՝ թույլտվություն տալու իրավունք ունեցող անձը կիրառարվի թույլատրել մտնել բնակարան, կամ հնարավոր չէ նրա հետ կապվել) կամ հնարավոր չէր լինի հասնելու խուզարկության նպատակին, եթե խուզարկության համար ժամանած ծառայողներն անհապաղ բնակարան մուտք գործելու հնարավորություն չունենային (օրինակ՝ ապացույցների կորստի դեպքում)¹⁶: Ինչպես նկատում ենք՝ անգլիական իրավունքի համաձայն՝ բնակարանում խուզարկություն կատարելու համար օրդեր չի պահանջվում, եթե հնարավոր է ստանալ բնակարան մուտք գործելու համաձայնությունը: Այլ կերպ ասած՝ բնակարան մուտք գործելու մասին անձի համաձայնությունը (բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը) վերացնում է դատական օրդերի անհրաժեշտությունը: Ավելին՝ իրավական տեխնիկայի տեսանկյունից՝ նորմը ձևակերպված է այնպես, որ բնակարանում մուտք գործելու համաձայնության բացակայությունն է դիտվում որպես բնակարան մուտք գործելու թույլտվության մասին օրդեր ստանալու նախապայման: Դրա հետ մեկտեղ՝ տեսության մեջ նշվում է, որ ոստիկանությունը պարտավոր չէ ապացուցել վերջին պայմանը (վերը նշված օրենքի 8-րդ հոդվածի

4-րդ կետը՝ <եղ.), և բավարար է, որ ոստիկանը դատարանում հայտարարի, որ ինքը ողջամտորեն կարծում է, թե առանց օրդերի բնակարան մուտք գործելու փորձն անհաջող կլինի¹⁷:

(3) Գերմանիայի քրեական դատավարությունը.

Գերմանիայի քր. դատ. օր.-ի 105-րդ պարագրաֆի 1-ին պարբերության համաձայն՝ խուզարկության մասին որոշում կայացնում է միայն դատարանը, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև դատախազը կամ դատախազի հանձնարությամբ՝ քննություն կատարող անձը («Դատական համակարգի մասին» օրենքի» 152-րդ պարագրաֆ): Գիտական մեկնաբանություններում նշվում է, որ խուզարկության մասին որոշում պահանջվում է, եթե անձը, ում մոտ կատարվելու է խուզարկություն, դա կատարելու վերաբերյալ համաձայնություն չի տալիս: Լռությամբ համաձայնությունը բավարար չէ (OLG Köln NJW 2001, 14)¹⁸: Առանց դատարանի որոշման, սակայն անձի համաձայնությամբ բնակարանում խուզարկություն կատարելու թույլտվության մասին նշվում է նաև Գերմանիայի քր. դատ. օր.-ի վերաբերյալ մյունխենյան մեկնաբանության մեջ, ըստ որի՝ քր. դատ. օր.-ի 105-րդ պարագրաֆի 1-ին պարբերության մեջ վկայակոչված որոշումն անհրաժեշտ չէ, եթե անձն ակնհայտ և ազատ, առանց հարկադրանքի համաձայնություն է տալիս բնակարանում խուզարկություն կատարելու վերաբերյալ: Բավարար է շահագրգիռ անձի համաձայնությունը, որի համար կոնկրետ ձև սահմանված չէ, դա կարող է բխել նաև ենթադրյալ վարքագծից, սակայն լուռ հանդուրժողականությունը (լռությամբ համաձայնությունը) բավարար չէ, եթե, օբյեկտիվ երրորդ անձի տեսանկյունից՝ համապատասխան իմաստ (կամք) չի արտահայտում¹⁹:

Գերմանիայի դատական պրակտիկայում նույնպես առկա են դեպքեր, երբ առանց դատարանի որոշման, սակայն անձի համաձայնությամբ կատարված խուզարկությունը դա-

¹⁶ Барабанов П.К. Уголовный процесс в Великобритании. М.: Изд. «Спутник», 2015. С. 90.

¹⁷ Նույն աշխատությունը, էջ 9:

¹⁸ Головенков П., Спица Н. Уголовно-процессуальный кодекс Федеративной Республики Германия. Научно-практический комментарий и перевод текста закона. Universitätsverlag Potsdam. 2012. С. 175.

¹⁹ Hauschild in: Münchener Kommentar zur StPO, 1. Auflage 2014, Band 1, §105.

տարանը համարել է իրավաչափ: Այսպես՝ Համմի հողային բարձրագույն դատարանը 2013թ. որոշմամբ անդրադարձել է քննարկվող հարցին: Ստանալով մեղադրյալ Y-ի բնակարանում (առանձնատանը) խուզարկությունը թույլատրելու մասին դատարանի որոշումը՝ ոստիկանության համապատասխան աշխատակիցները մեկնել են տվյալ վայր և պարզել, որ բնակարանում՝ առանձնացված հատվածում, բնակվում է նաև մեղադրյալի եղբայրը՝ արդեն հետազայում տվյալ գործով ամբաստանյալ Z-ը: Խուզարկությունն սկսվել է Y-ին պատկանող հատվածում՝ ներկայացնելով խուզարկության մասին որոշումը: Երբ ոստիկանության աշխատակիցները ցանկացել են խուզարկությունը շարունակել Z-ի կողմից բնակեցված հատվածում, քանի որ պատուհանից արդեն տեսել էին թմրամիջոց, մեղադրյալ Y-ն առարկել է և նշել, որ նրանք չունեն այդ իրավունքը, քանի որ բնակարանն այլ անձի կողմից է բնակեցված: Չհավատալով Y-ի պնդումներին՝ ոստիկանության աշխատակիցներն ուղղակի ներս են մտել բնակարանի այդ հատվածը, սակայն տեսնելով, որ դա իսկապես բնակեցված է Z-ի կողմից, հասկացել են, որ անհրաժեշտ է խուզարկությունը թույլատրելու վերաբերյալ դատարանի նոր որոշում: Այն պահին, երբ ոստիկանության աշխատակիցները փորձել են կապ հաստատել դատախազության հետ, բնակարան է վերադարձել Z-ը: Վերջինիս բացատրվել են նրա՝ որպես մեղադրյալի իրավունքները: Ավելին՝ ոստիկանության աշխատակցի այն հարցին, թե արդյոք նա համաձայն է, որ խուզարկություն իրականացվի բնակարանի իր հատվածում, Z-ը համաձայնություն է տվել: Ամբաստանյալի կողմից ներկայացված համաձայնության հիման վրա կատարվել է խուզարկություն՝ առանց դատարանի համապատասխան որոշման, որի ընթացքում էլ հայտնաբերվել են թմրանյութեր: Վերոգրյալի կապակցությամբ, ի թիվս այնի՝ Համմի հողային բարձրագույն դատարանը 2013թ. որոշմամբ նշել է, որ ամբաստանյալի ժամանումից հետո իրականացված խուզարկության հարցը փակված է արդյունավետ և անձի ազատ կամահայտնությամբ ներկայացված համաձայնությամբ: Ավելին՝ Համմի հողային բարձրագույն դատարանը որոշել է, որ հողային դատարանը, հիմնական դատա-

վարության ընթացքում ներկայացված 30.11.2011թ. Z-ի բնակարանում կատարված խուզարկության մասին արձանագրության հիման վրա, առանց որևէ իրավական սխալի որոշել է, որ ամբաստանյալն ակնհայտորեն համաձայնել է, որ իր բնակարանում կատարվի խուզարկություն: Բացակայում է որևէ հիմք այն մասին, որ ամբաստանյալի կողմից ներկայացված բացատրությունն ստացվել է «ճնշման» գործադրման արդյունքով: Բացի այդ՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ամբաստանյալն առանց որևէ սահմանափակման հասկացել է ոստիկանության աշխատակցի՝ նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին պարզաբանումը: Առկա չէ որևէ հիմք այն մասին, որ Z-ի համաձայնությունը, այդ թվում՝ ստորագրությունը ստանալու համար, նրա նկատմամբ փաստացի գործադրվել է որևէ ճնշում, կամ առկա է խաբեություն կամ սպառնալիք (OLG Hamm 5 RVs 54/13):

2. Բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելը (հայկական իրականություն)

2.1. Ընդհանուր դրույթներ

(a) Պատմական ակնարկ: 1995թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածում սահմանված էր. «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով»: 1995թ. Սահմանադրական հանձնաժողովի անդամներից Մ. Խաչատրյանը նշում է. «Հանձնաժողովն այս հարցում թույլ է տվել լուրջ բացթողում՝ չի նշել, որ անհետաձգելի դեպքերում խուզարկությունը կարող է կատարվել նաև առանց դատարանի որոշման. մի բան, որ սահմանված է աշխարհի շատ երկրների սահմանադրություններում: Գործնականում հարց է ծագում՝ ինչպես վարվել այն դեպքում, երբ քննիչը բնակարանում պետք է կատարի որևէ առարկայի առգրավում, բայց պարզվում է որ տանտերն այդ առարկան արդեն թաքցրել է»:

Մ. Խաչատրյանը, ով աշխատել է նաև 1998թ. ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի վրա, կարծում էր, թե այս խնդիրը կարելի է լուծել ՀՀ քր. դատ. օր.-ի 228-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կարգով, որի համաձայն՝ առգրավման դեպքում, եթե որոնվող առարկաները որոշման մեջ նշված տեղում չեն հայտնաբերվում, ապա քննիչի որոշմամբ կարող է կատարվել խուզարկություն: Ըստ հեղինակի՝ այս դեպքում սահմանադրական նորմը չի խախտվում, քանի որ քննիչը բնակարան է մուտք գործել առգրավման նպատակով: Հետևաբար՝ առգրավումը կարող է վերածվել խուզարկության, եթե նախօրոք առգրավման որոշման մեջ նշված կոնկրետ առարկան արդեն թաքցվել է²⁰: Նշենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 228-րդ հոդվածի 6-րդ կետը 25.05.2006թ. օրենքով փոփոխվեց՝ այն պատճառաբանությամբ, որ հակասում է ՀՀ Սահմանադրությանը, և օրենքով հստակ սահմանվեց, որ բնակարանում խուզարկություն կատարելու համար պետք է առկա լինի դատարանի որոշում: Մինչ օրս ՀՀ-ում նախատեսված չէ անհետաձգելի դեպքերում բնակարանում առանց դատարանի որոշման խուզարկություն կատարելու հնարավորություն:

2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածում սահմանված էր. «Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ»: ՀՀ քր. դատ. օր.-ի 12-րդ հոդվածը տարբերում է մարդու կամքին հակառակ նրա բնակարան մուտք գործելու երկու կարգ՝ 1) բնակարանի զննումը, այնտեղ դատավարական այլ գործողություններ կատարելը, ինչպես նաև տեխնիկական միջոցների գործադրմամբ բնակարան մուտք գործելը բնակարանը զբաղեցնող անձանց կամքին հակառակ, 2) բնակարանի խուզարկությունը:

(b) Սահմանադրական կարգավորումը: 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն՝ յուրա-

քանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքով կարող են սահմանվել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման այլ դեպքեր:

Եթե համեմատում ենք 1995թ., 2005թ., 2015թ. խմբագրություններով ՀՀ Սահմանադրության կարգավորումները, ապա պարզ է դառնում, որ.

Առաջին՝ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը հնարավորություն է տալիս, բացի խուզարկությունից, այլ քննչական գործողությունների համար նույնպես օրենքով սահմանելու նախնական դատական երաշխիք: Կարծում ենք՝ 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ նման դրույթի նախատեսումն էական բան չի փոխում, քանի որ ՀՀ Սահմանադրության մեջ նման դրույթի բացակայությունը per se օրենսդրին չէր զրկում այլ քննչական գործողությունների համար նույնպես դատական երաշխիք սահմանելու հնարավորությունից. չէ՛ որ ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է մարդու իրավունքների նվազագույն երաշխիքները. օրենսդիրը չի կարող դրանք կրճատել կամ վերացնել, սակայն կարող է իր հայեցողությամբ մարդու իրավունքների երաշխիքներն ավելացնել:

Երկրորդ՝ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մեջ չի օգտագործվում «մարդու կամքին հակառակ բնակարան մուտք գործել» ձևակերպումը, որից կբխեր, որ մարդու համաձայնությամբ բնակարան մուտք գործելը թույլատրվում է: Նման ձևակերպման բացակայությունը կարող է միմյանց հակասող մեկնաբանությունների տեղիք տալ: Մի կողմից՝

²⁰ Խաչատրյան Մ. Գ. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգիրքը: Եր.: Զանգակ-97, 1999, էջ 63-64:

կարելի է մեկնաբանել, որ այս ձևակերպման (դրա պողիտիվ կողմի) բացակայությունն անձին զրկում է իր համաձայնությամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքից հրաժարվելու հնարավորությունից, ուստի քրեական հետապնդման մարմինները նույնիսկ անձի համաձայնությամբ, սակայն առանց դատարանի որոշման, իրավունք չունեն մուտք գործելու նրա բնակարան:

Մյուս կողմից՝ եթե նկատի ունենանք անձի ինքնավարության գաղափարը, որը դրված է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին (ՀՀ-ն իրավական պետություն է) և 3-րդ (մարդը բարձրագույն արժեք է) հոդվածների հիմքում, ապա կարելի է նշել, որ իրավունքից հրաժարվելը, այդ թվում՝ իրավունքին միջամտելու վերաբերյալ համաձայնություն տալը (բնակարան մուտք գործելու համաձայնություն տալը), մարդու ընդհանուր ինքնավարության տիրույթում է, ուստի կարիք չկա բնակարանի անձեռնմխելիության իրավունքի վերաբերյալ սահմանադրական նորմում հատուկ նշել անձի համաձայնությամբ նրա բնակարան մուտք գործելու հնարավորության մասին (կամ մարդու կամքին հակառակ բնակարան մուտք գործելու արգելքի մասին):

(c) Իրավակիրառ պրակտիկան: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն առանց դատարանի որոշման խուզարկություն կատարելու դեպքեր, իսկ ՀՀ իրավագիտության մեջ և դատական պրակտիկայում նույնիսկ չի քննարկվում առանց դատարանի որոշման, սակայն անձի համաձայնությամբ բնակարան մուտք գործելու (քննչական գործողություն կատարելու նպատակով) թույլատրելիության տարբերակը: Եթե նույնիսկ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ անձը համաձայնություն է տվել իր բնակարանում առանց դատարանի որոշման կատարել խուզարկություն, ապա այդպիսի խուզարկության արձանագրությունը և ձեռք բերված այլ ապացույցները ճանաչվում են անթույլատրելի: Այսպես՝ թիվ 54100717 քրեական գործով քննիչը 01.03.2017թ. Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի թիվ 10 շենքում մեղադրյալ Վ. Հ.-ի եղբորը՝ Է. Հ.-ին ներկայացրել է Լենինգրադյան փողոցի թիվ 10 շենքի բն. 13 հասցեում գտնվող բնակարանում և օժանդակ շինություններում խուզարկություն կատարելու

թույլտվության մասին Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2017թ. որոշումը: Է. Հ.-ն հայտարարել է, որ բնակարանը, որտեղ բնակվել է եղբոր հետ, ոչ թե Լենինգրադյան փողոցի 10-րդ շենքի 13-րդ բնակարանն է, այլ՝ նույն հասցեի 17-րդ բնակարանը: Քննիչը բնակարանի սեփականատեր Ի. Մ.-ի և Է. Հ.-ի ներկայությամբ և նրանց համաձայնությամբ 01.03.2017թ. խուզարկություն է կատարել Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 10-րդ շենքի 17-րդ բնակարանում: Նկատի ունենալով, որ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի 10-րդ շենքի 17-րդ բնակարանում 01.03.2017թ. խուզարկությունը կատարվել է այդ քննչական գործողության կատարման կարգի էական խախտմամբ՝ առանց դատարանի որոշման, 01.03.2017թ. խուզարկության վերաբերյալ կազմված արձանագրությունը ճանաչվել է անթույլատրելի:

Մեկ այլ՝ թիվ ՏԴ1/0003/01/16 գործով դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, քանի որ Հովսեփյան փողոցի թիվ 63 հասցեում գտնվող տանը խուզարկություն կատարելու թույլտվություն տալու մասին որոշման հիման վրա կատարված խուզարկության արդյունքով կազմվել է արձանագրություն, ըստ որի՝ խուզարկությանը մասնակից է դարձվել ամբաստանյալ Գ. Ա.-ն, ով նախապես հայտարարել է, որ տանն ապօրինի պահվող զենք, զինամթերք չկա, սակայն խուզարկության ընթացքում նշված հասցեում գտնվող սենյակից հայտնաբերվել են ռազմամթերք հանդիսացող 250 փամփուշտ: Մինչդեռ գործով առկա ապացույցներից և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականից հետևում է, որ գործով իրեղեն ապացույց ճանաչված փամփուշտները հայտնաբերվել են ոչ թե Գ. Ա.-ին պատկանող՝ Դիլիջան քաղաքի Հովսեփյան փողոցի թիվ 63 հասցեում, այլ՝ Մ. Ա.-ին պատկանող՝ Հովսեփյան փողոցի թիվ 69 հասցեում գտնվող, ամբաստանյալի հոր որսորդական իրերի սենյակից: Ընդ որում՝ խուզարկության ավարտից հետո ամբաստանյալն է իր մայրիկից վերցրել բանալին, բացել այդ սենյակի դուռը, այնտեղից հանել հոր որսորդական պայուսակը և տրամադրել խուզարկության: Դատարանը նշել է, որ իրեղեն ապացույց ճանաչված փամփուշտները հայտնաբերվել են ոչ

այն հասցեում, որտեղ դատարանը խուզարկություն կատարելու թույլտվություն է տվել:

2.2. Հեղինակի նկատարումները

Ասվածից կարելի է կատարել երկու հիմնական եզրահանգում.

1) Անձի կամքին հակառակ նրա բնական մուտք գործելու համար պետք է սահմանել միասնական սահմանադրական երաշխիքներ՝ անկախ այն հանգամանքից, թե բնականում ինչ քննչական գործողություն է կատարվելու՝ խուզարկություն, զննություն, առգրավում, թե՛ այլ քննչական գործողություն²¹:

2) Անձի՝ գիտակցված և կամավոր համաձայնությամբ բնական մուտք գործելու դեպքում վերանում է նախնական դատական երաշխիքի անհրաժեշտությունը՝ անկախ այն հանգամանքից, բնականում ինչ քննչական գործողություն է կատարվելու՝ խուզարկություն, զննություն, առգրավում, թե՛ այլ քննչական գործողություն:

(a) Քննչական գործողություններ կատարելու նպատակով բնական հարկադրաբար մուտք գործելը՝ միայն դատարանի որոշմամբ: Քրեական դատավարությունում բնականի անձեռնմխելիության իրավունքը կոչված է անձին պաշտպանելու քրեական հետապնդման մարմինների կողմից նրա կամքին հակառակ բնական ապօրինի մուտք գործելուց (այստեղ չենք քննարկում անհետաձգելի դեպքերում բնականում խուզարկություն կամ զննություն կատարելու դեպքերը): Սահմանադրական այս իրավունքի տեսանկյունից՝ որևէ նշանակություն չունի, թե քրեական հետապնդման մարմինը բնականում ինչ քննչական գործողություններ է պլանավորում կատարել՝ խուզարկություն, առգրավում, զննություն, թե՛ այլ քննչական գործողություն:

Նախ՝ յուրաքանչյուր գիտակից անձ, ում կամքին հակառակ քրեական հետապնդման

մարմինը փորձում է բնական մուտք գործել, ակնկալում է ստանալ բնական մուտք գործելու թույլտվության մասին դատարանի որոշում. նրա համար, մեծ հաշվով, տարբերություն չկա, թե բնականում ինչ քննչական գործողություն է կատարվելու: Նշված բոլոր դեպքերում նրա՝ բնականի անձեռնմխելիության իրավունքը սահմանափակվում է: Մարդու համար բնականի անձեռնմխելիության իրավունքն արժեք է ունենում այն դեպքում, երբ մարդն իր բնականի մուտքի մոտ պահանջում և ստանում է հարկադրաբար բնական մուտք գործելու թույլտվության մասին դատարանի որոշումը: Բնական մուտք գործելուց հետո, քրեական դատավարության իրավունքը պետք է կարգավորի, թե բնականում ինչ քննչական գործողություն կարող է կատարվել և ինչ կարգով:

Թեև խուզարկության, առգրավման, զննության միջև առկա են դատավարական և մարտավարական տարբերություններ, սակայն, բնականի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիքների տեսանկյունից՝ նման տարբերություններն էական նշանակություն չունեն: Ավելին՝ ինչքան էլ որ քրեական դատավարության տեսության մեջ նշվում է այս գործողությունների միջև առկա տարբերությունների մասին, միևնույն է՝ գործնականում, նույնիսկ ոլորտի մասնագետների համար է դժվար կոնկրետ դեպքերում որոշել՝ բնականում կատարվել է խուզարկություն, թե՛ զննություն: Նման բարդություն հատկապես ծագում է, երբ բնականում զննությունը վերածել է խուզարկության: Պատահական չէ, որ Ի. Ֆոյնիցկին նշում էր, որ բնականում կատարվող զննությունն ստանում է «խուզարկություն» տեխնիկական անվանումը²²:

Երկրորդ՝ մյուս կողմից՝ պետք է փաստել, որ բնականում խուզարկություն, առգրավում

²¹ Բնականում հարցաքննություն կատարելու անհրաժեշտություն կարող է առաջանալ բացառիկ դեպքերում, երբ անձն օբյեկտիվ պատճառներով չի կարող ներկայանալ վարույթն իրականացնող մարմնին: Նույնիսկ նման բացառիկ դեպքերում, եթե անձը համաձայնություն չի տալիս մուտք գործելու իր բնական, ապա բնականի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքն սկսում է գործել և պաշտպանել «իմ բնականը իմ ամրոցն է» սահմանադրական արժեքը: Նման իրավիճակում բնականի անձեռնմխելիության իրավունքը պահանջում է, որ հարկադրաբար անձի բնական մուտք գործելու և անձին այնտեղ հարցաքննելու համար պետք է ստանալ դատարանի որոշում: Նման բացառիկ դեպքերում պետք է քննարկել նաև ցուցմունք տալուց հրաժարվելու պատճառով քրեական վարույթ հարուցելու հարցը: Մյուս բոլոր դեպքերում անձին պետք է հարցաքննել ոչ թե նրա բնականում՝ հարկադրաբար բնական մուտք գործելով, այլ՝ քննիչի մոտ՝ նրան բերման ենթարկելով:

²² Фойницкий И. Я. Курс уголовного судопроизводства. Т. 2. Под ред. А.В. Смирнова. СПб.: Альфа, 1996. С. 125.

կամ զննություն կատարելու դեպքում մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին (բայց ոչ բնակարանի անձեռնմխելիության իրավունքին) միջամտելու ծավալները տարբեր են: Ի. Ֆոյնիցկին նշում էր, որ այս դատական գործողությունը կարող է ներխուժել մասնավոր անձանց բարիքների ոլորտ՝ հատկապես, եթե կատարվում է բնակարաններում՝ դրանով իսկ խախտելով բնակարանի անձեռնմխելիությունը: Ուստի հասկանալի է, որ ինչքան շատ է անձը սահմանափակված պետությունում, այնքան ավելի խիստ կանոններ պետք է նախատեսել այդ միջոցառումների կիրառման համար²³:

Իրոք խուզարկություն կատարելիս անձնական կյանքին միջամտելու աստիճանն առավել բարձր է, սակայն նման տարբերությունները հիմք են խուզարկության դեպքում լրացուցիչ դատավարական երաշխիքներ (օրինակ՝ մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունները չհրապարակելը) սահմանելու համար:

Ասվածի համատեքստում անհասկանալի է, թե 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունում «միայն դատարանի որոշմամբ» պայմանն ինչո՞ւ է նախատեսված միայն խուզարկության համար: Իրավահամեմատական վերլուծությունից, ընդհանուր առմամբ, պարզ է դառնում, որ մարդու կամքին հակառակ բնակարան մուտք գործելիս, անկախ այն հանգամանքից, թե բնակարանում ինչ տեսակի քննչական գործողություններ են կատարվելու, սահմանվում է նախնական դատական երաշխիք (բացառությամբ անհետաձգելի դեպքերի):

(b) Քննչական գործողություններ կատարելու նպատակով անձի համաձայնությամբ բնակարան մուտք գործելը՝ առանց դատարանի որոշման: Ինչպես նշվեց՝ քննչական գործողություն կատարելու նպատակով բնակարան մուտք գործելու մասին անձի համաձայնությու-

նը նշանակում է, որ նա հրաժարվում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքից: Եթե անձը համաձայնություն է տվել քրեական հետապնդման մարմնին մուտք գործելու իր բնակարան, ապա նման համաձայնությունը վերացնում է նախնական դատական երաշխիքի անհրաժեշտությունը՝ բնակարանում կատարվող քննչական գործողության տեսակից անկախ՝ խուզարկություն, զննություն, առգրավում թե այլ քննչական գործողություն: Այսպես՝ եթե բնակարանի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության օբյեկտը (սոցիալական բարիքը) բնակարանում առանձնանալու, այնտեղ անվտանգ և հարմարավետ անձնական կյանք վարելու հնարավորությունն է²⁴, ապա բնակարան մուտք գործելու մասին անձի համաձայնությունը վերացնում է այդ սոցիալական բարիքը կամ դա պաշտպանելու անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում բնակարան մուտք գործելու համար նախնական դատական երաշխիք սահմանելը դառնում է առարկայազուրկ և ինքնանպատակ:

(c) Առաջարկություններ: Կարծում ենք՝ ՀՀ Սահմանադրության տեքստից պետք է հանել «խուզարկություն» բառը և սահմանել, որ բնակարանում քննչական գործողություններ կատարելու նպատակով մարդու կամքին հակառակ մուտք գործելը թույլատրվում է դատարանի որոշմամբ (բացառություն նախատեսելով նաև անհետաձգելի դեպքերում առանց դատարանի որոշման բնակարան մուտք գործելու համար):

Դատական պրակտիկայում առաջարկվող սահմանադրական ձևակերպումը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել այն, որ բնակարանում փաստացի բնակվող անձի (անձանց) գիտակցված և կամավոր համաձայնությունը՝ բնակարան մուտք գործելու մասին, վերացնում է դատական երաշխիքի անհրաժեշտությունը:

²³ Նույն տեղը:

²⁴ Кутафин О. Е. Неприкосновенность в конституционном праве Российской Федерации. Монография. Избранные труды: В 7 томах. Том 4. М.: Проспект, 2011. С. 185, Тюрин П. Ю. Конституционное право человека и гражданина на неприкосновенность жилища в Российской Федерации. Автореф. дисс. канд. юрид. наук. Саратов, 2006. С. 8.

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔԿ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ,
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի հայցորդ

ԳՈՐԾՈՒՆ ԶՂՋԱԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԴՆԴՄԱՆ ՀԻՄՔ

Քրեական հետապնդման հարուցումը դատախազի բացառիկ լիազորությունն է: Դատախազը պետության քրեական քաղաքականությունն իրականացնող և դրա համար պատասխանատու պաշտոնատար անձ է, ում պատկանում է քրեական գործերով քրեական հետապնդման տնօրինման իրավասությունը, այսինքն՝ քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև դրանից ձեռնպահ մնալու բացառիկ լիազորությունները, այն է՝ հայեցողական քրեական հետապնդումը: Սա ուղղակիորեն բխում է ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետից և պայմանավորված է քրեական քաղաքականության իրականացման գործում դատախազի դերով:

ՀՀ դատախազության մասին օրենքի 10-րդ հոդվածում նշված է, որ ՀՀ գլխավոր դատախազը որոշում է ՀՀ դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման քաղաքականությունը: Ստացվում է՝ օրենսդիրն այս նորմով փաստացի ճանաչել է դատախազության լիազորությունների իրականացման ոլորտում հայեցողության շրջանակներում քաղաքականություն մշակելու իրավասությունը:

Դատախազի կողմից համապատասխան հայեցողական լիազորությունն օրենսդրորեն սահմանափակված է քրեական պատասխանատվությունից ազատելու մի շարք հիմքերով և պայմաններով: Նշված չափանիշներն իրենց էությամբ հավասարազոր չեն: Փիլիսոփայության գիտությունը, հիմք ասելով, հասկանում է «անհրաժեշտ պայման, որը ինչ-որ երևույթի

(հետևանքի) գոյության նախապայման է և ծառայում է որպես դրա բացատրություն»¹, պայմանը դիտարկում է որպես «չափանիշ, որն արտահայտում է առարկայի հարաբերակցությունը շրջակա երևույթների նկատմամբ, առանց որոնց գոյություն ունենալ չի կարող»:²

Իր հերթին՝ քրեական գործի կարճման հիմք ասելով՝ հասկանում ենք օրենքով նախատեսված այնպիսի հանգամանքներ, որոնք բացառում են մեղադրանքի հնարավորությունը, իսկ մեղադրանքի ապացուցված լինելու պարագայում՝ քրեական պատասխանատվության կիրառման հնարավորությունը: Վերջին դեպքում հիմքերը խոչընդոտ են ստեղծում քրեական պատասխանատվության համար, իսկ պայմաններն ինքնին նման խոչընդոտներ չեն, սակայն, նրանց առկայության շնորհիվ՝ հնարավորություններ են ստեղծվում քրեական գործի կարճման և քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի գործողության համար³:

Քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողական հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքում, որի վերլուծությամբ կարելի է քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողական հիմքերը խմբավորել երկու մասի՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողական ընդհանուր և հատուկ հիմքեր:

Քրեական հետապնդումը դադարեցնելու ընդհանուր հայեցողական հիմքերն են գործուն զղջալը, տուժողի հետ հաշտվելը, իրադրության փոփոխումը, որոնք քրեաիրավական ինստիտուտներ են: ՀՀ քրեական դատավարության

¹ Sեն Философский словарь. М., 2002. էջ 345:
² Sեն Նույն տեղում էջ 497:
³ Sեն Дубинин Т.Т. Основания освобождения от уголовной ответственности // Уголовное право в борьбе с преступностью. М., 1981, էջ 81, Лобанова Л.В. Юридическая природа и процессуальные вопросы освобождения от уголовной ответственности. Дисс. ... канд. юрид. наук. Ярославль, 1986, էջ 81-92:

օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ (գործուն զղջալ), 73-րդ (տուժողի հետ հաշտվել) և 74-րդ (իրադրության փոփոխություն) հոդվածներով նախատեսված դեպքերում:

Քրեական հետապնդումը դադարեցնելու հայեցողական հատուկ հիմքերը նախատեսված են, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327.1-րդ հոդվածի 5-րդ (այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելը) և 327.2-րդ հոդվածի 4-րդ (այլընտրանքային աշխատանքային ծառայողի կողմից ծառայությունից խուսափելը) մասերով: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 327.1-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նշված հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած այլընտրանքային աշխատանքային ծառայողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով: ՀՀ քրեական օրենսգրքի 327.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշված հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքներն առաջին անգամ կատարած այլընտրանքային աշխատանքային ծառայողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դրանք կատարել է ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով: Մեջբերված հոդվածներում օգտագործվում է «կարող է» ձևակերպումը: Ընդ որում՝ քննարկվող հոդվածներում նախատեսված է նաև քրեական հետապնդումը դադարեցնելու ոչ հայեցողական հիմք, օրինակ՝ (...) անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա ծառայությունից խուսափելու պահից երեք օրվա ընթացքում մեղայականով ներկայացել է ծառա-

յության վայր, իրավապահ կամ պետական իրավասու մարմիններ⁴:

Սույն հոդվածում կներկայացվեն հայեցողական քրեական հետապնդման ընդհանուր հիմք հանդիսացող գործուն զղջալու և դրա պայմանների վերաբերյալ ուսումնասիրություններ:

Գործուն զղջալը քրեական հետապնդման դադարեցման ամենաառանցքային հայեցողական հիմքերից մեկն է: Քրեական իրավունքի տեսության մեջ գործուն զղջալ հասկացության և իրավաբանական բնույթի հետ կապված առկա են տարբեր մոտեցումներ:

Ա.Վ. Ենդուցևան գործուն զղջալը դիտարկում է որպես «օրենքով նախատեսված ակտիվ կամավոր գործողություններ, որոնց միջոցով հանցանք կատարած անձը, առաջնորդվելով ցանկացած ներքին պատճառաբանություններով, կանխում, վերացնում կամ նվազեցնում է արարքի բացասական հետևանքների ծանրությունը կամ օգնություն է ցուցաբերում իրավապահ մարմիններին հանցագործության բացահայտման և քննության համար, ինչը հանգեցնում է օրենքով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատվելուն կամ պատիժը մեղմացնելուն»⁵:

Է.Դ.Դադակյանն առավել մեծ շեշտադրում է կատարում գործուն զղջալու սուբյեկտիվ կողմի վրա՝ դա սահմանելով որպես «հանցագործություն կատարած անձի դրական պահվածք, որի պարագայում անձը գիտակցում է իր արարքի անթույլատրելիությունը, հասկանում է դրանում իր պատասխանատվության աստիճանը, ամբողջովին իրեն մեղավոր է ճանաչում, կամավոր և ակտիվ գործում է, կամավոր ներկայանալով և այլ հանրային օգտակար արարքներ կատարելով՝ նպաստում է հանցագործության բացահայտմանը, պատճառված վնասի հարթմանը կամ կատարում այլ արարքներ, որոնք վկայում են իր զղջման մասին»⁶:

Որոշ հեղինակներ՝ նույնացնելով վնասը հարթելու և տուժողի հետ հաշտվելու հիմքերը,

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն Հ 247 (մինչդատական վարույթ): Մաս: 2/Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա.Ղամբարյան.– Եր.: Տիգրան Մեծ, 2017, էջ 469-472:
⁵ Տե՛ս Ендольцева А.В., Милевский А.И. Освобождение от уголовной ответственности: теория и практика применения. М., 2005, էջ 38:
⁶ Տե՛ս Дадакаев Э.Д. Институт деятельного раскаяния и его реализация при освобождении от уголовной ответственности. Автореф. Дис....канд. юрид. наук. М., 2002, էջ 13:

տուժողի հետ հաշտվելը համարում են գործուն զղջալու տեսակ⁷: Նման տեսակետի հետ դժվար է համաձայնել, քանի որ քրեական պատասխանատվությունից ազատվելու նշված հիմքերի իրավական բնույթն սկզբունքորեն տարբերվում է: Նախ՝ գործուն զղջալը փաստելու համար միայն վնասի հարթումը բավարար չէ, հարկավոր են նաև մեղադրյալի լրացուցիչ գործողություններ, որոնք կվկայեն վերջինիս զղջալու մասին: Երկրորդը՝ տուժողին վնասի հատուցումը և նրա հետ հաշտվելը ոչ միշտ են գործուն զղջալ:

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանության կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նա՝

1. հանցանք կատարելուց հետո կամովին ներկայացել է մեղայականով,
2. աջակցել է հանցագործությունը բացահայտելուն,
3. հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը:

Գործուն զղջալու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելն իրավաչափ է, եթե անձը ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքը կատարել է առաջին անգամ: Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված պայմաններից ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք «առաջին անգամ» կատարել հասկացության գնահատումը կարևորագույն խնդիր է, որն անհրաժեշտ է հստակեցնել՝ իրավակիրառ պրակտիկայում միասնական մոտեցում ապահովելու համար: Մասնավորապես՝ վերոնշյալ տերմինն անհրաժեշտ է գնահատել որպես առաջին անգամ կատարված՝ անկախ այն հանգամանքից, թե առկա է անձի վերաբերյալ մեղադրական դատավճիռ, որով մարվել կամ հանվել է դատվածությունը, կամ առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Նման պրակտիկայի ձևավորումն անհրաժեշտաբար բխում է անմեղու-

թյան կանխավարկածի սահմանադրական սկզբունքից, ըստ որի՝ հանված կամ մարված դատվածությունը կամ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդման դադարեցումը չի կարող անձի համար առաջացնել անբարենպաստ իրավական հետևանքներ: Այնուամենայնիվ, նշենք, որ առկա է նաև խնդրի վերաբերյալ հակառակ մոտեցում, մասնավորապես՝ պրակտիկայում հիմնականում կիրառվում է այն ուղղվածությամբ դիրքորոշումը, ըստ որի՝ «առաջին անգամ» կատարել հասկացության գնահատումը պետք է իրացվի միայն այն դեպքում, երբ անձը նախկինում որևէ կերպ առնչություն չի ունեցել հանցագործության կատարմանը՝ բացառությամբ վերջինիս նկատմամբ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ արդարացման դատավճիռ կայացնելու դեպքերում:

Քննարկվող խնդրի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել ՌԴ Գերագույն դատարանի պլենումը 2007 և 2013 թվականներին: Մասնավորապես՝ 11.01.2007թ. դատարանի պլենումի թիվ 2 որոշման համաձայն՝ ոչ մեծ և միջին ծանրության հանցանք առաջին անգամ կատարած պետք է համարել անձի, ով նախկինում կատարել է մեկ կամ մեկից ավելի հանցանք, որոնցից ոչ մեկի համար չի դատապարտվել, կամ նախկին դատավճիռը օրինական ուժի մեջ չի մտել: 27.06.2013թ. ՌԴ Գերագույն դատարանի պլենումն իր թիվ 19 որոշմամբ հստակեցրել է առաջին անգամ հանցանք կատարել հասկացությունը: Մասնավորապես՝ վերոնշյալ որոշման 2-րդ մասի համաձայն՝ հանցանքն առաջին անգամ կատարած պետք է համարել անձին, ով.

1. Կատարել է մեկ կամ մեկից ավելի հանցագործություն (որակումից անկախ), որոնցից ոչ մեկի համար նախկինում չի դատապարտվել,
2. Նախկին դատավճիռը նոր հանցագործության կատարման պահին իրավաբանական ուժի մեջ չի մտել,
3. Նախկին դատավճիռը նոր հանցագործության կատարման պահին ձեռք է բե-

⁷ Стѣн Сверчков В.В. Основания освобождения от уголовной ответственности и (или) наказания (система, законодательная регламентация, эффективность применения). Автореф. ... дисс. канд. юрид. наук. Н.Новгород, 1997, էջ 19, Новое уголовное право. Общая часть: Учебное пособие. М., 1996, էջ 126:

րել իրավաբանական ուժ, սակայն դրա կատարման ժամանակահատվածում ի հայտ է եկել որևէ հանգամանք, որի ուժով անձին քրեական պատասխանատվության ենթարկելու իրավական հետևանքները չեղարկվել են (օրինակ՝ դատվածությունը հանվել կամ մարվել է):

4. Նախկինում ազատվել է քրեական պատասխանատվությունից:

Անշուշտ, քննարկվող դիրքորոշումը ՀՀ իրավակիրառողների համար չի կարող համարվել ուղղորդող, սակայն այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է գերակա լինի քրեադատավարական գործընթացում, որևէ քննդատության ենթակա չէ⁸:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի փաստել, որ անձը համարվում է առաջին անգամ հանցանք կատարած, եթե՝

1. բացակայում է նրա վերաբերյալ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական դատավճիռ,
2. առկա է նրա վերաբերյալ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ արդարացման դատավճիռ,
3. առկա է նրա վերաբերյալ մեղադրական դատավճիռ, սակայն մարվել կամ հանվել է նրա դատվածությունը, կամ առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

ՀՀ քննչական կոմիտեն, վերլուծելով 2016թ. ընթացքում հայեցողական քրեական հետապնդման կիրառման պրակտիկան (ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդված), հանգել է այն եզրակացության, որ ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված ոչ մեծ կամ միջին ծանրության

հանցանք «առաջին անգամ» կատարել հասկացությունը գնահատել որպես առաջին անգամ կատարված՝ անկախ այն հանգամանքից, թե առկա է անձի վերաբերյալ մեղադրական դատավճիռ, որով մարվել կամ հանվել է դատվածությունը, կամ առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

Նման մոտեցումը բխում է անմեղության կանխավարկածի սահմանդրական սկզբունքից, ըստ որի՝ հանված կամ մարված դատվածությունը կամ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդման դադարեցումը չի կարող անձի համար առաջացնել անբարենպաստ իրավական հետևանքներ: Անձի կողմից նախկինում հանցանք կատարելը, որի համար նախատեսված դատավածությունը մարվել կամ հանվել է, կամ որի վերաբերյալ առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու մասին որոշում, կարող է հաշվի առնվել հայեցողական քրեական հետապնդման նպատակահարմարության սկզբունքը գնահատելիս: Այսպես՝ նախկինում հանցանք կատարելը, որի համար նախատեսված դատվածությունը մարվել կամ հանվել է, կամ որի վերաբերյալ առկա է ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու որոշում, կարող է դիտվել որպես նոր հանցանք կատարածի անձը բնութագրող հատկանիշ և դրա հիման վրա որոշվել քրեական հետապնդումը շարունակելու նպատակահարմարությունը: Առաջին անգամ հանցանք կատարելու նշված իրավիճակը դիտարկելով հայեցողական քրեական հետապնդման ոչ թե օրինականության, այլ՝ նպատակահարմարության սկզբունքի հարթությունում՝ վարույթն իրականացնող մարմինը և հսկողություն իրականացնող դատախազը հնարավորություն ունեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատել ինչքանով է նպատակահարմար անձի նկատմամբ կիրառել հայեցողական քրեական հետապնդում, եթե նա նախկինում կատարել է հանցանք, սակայն մարվել կամ հանվել է դատվածությունը, կամ նրա

⁸ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2016թ. ընթացքում հայեցողական քրեական հետապնդման կիրառման պրակտիկայի վիճակի (ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդված) ամփոփում:

նկատմամբ նախկինում կայացվել է ոչ արդարացման հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու կամ հետապնդումը դադարեցնելու որոշում:

Հանցագործություն կատարած անձի գործուն զղջալը ոչ միայն հակահրավական գործողությունների բացասական գնահատականի հետ կապված սուբյեկտի հոգեբանական հատկանիշների և վիճակի անհատական դրևորումն է, այլև վերջինիս կողմից ակտիվ և կամային արարքների ամբողջություն, որոնք օբյեկտիվորեն վկայում են զղջալու մասին: Այդ կամային արարքներից առաջինը մեղայականով ներկայանալն է:

Մեղայականով ներկայանալը նշանակում է, որ անձը կամավոր ներկայանում է իրավապահ մարմիններին (ուստիկանություն, դատախազություն և այլն) և հայտնում է իր կողմից միանձնյա կամ այլ անձի հետ կատարած հանցագործության մասին: Այլ կերպ ասած՝ մեղայականով ներկայացած անձը կամավոր, անկեղծ խոստովանություն է անում, քրեական հետապնդում իրականացնող մարմնին բանավոր կամ գրավոր կերպով հայտնում իր կողմից կամ իր մասնակցությամբ կատարված հանցագործության մասին: Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործություն կատարած անձը չի կարող անձամբ ներկայանալ և հայտնել հանցագործության մասին, և նման դեպքերում հեռախոսով կամ փոստով հաղորդումները ևս պետք է դիտվեն որպես մեղայականով ներկայանալ⁹:

Տեսությունում և պրակտիկայում որոշիչ նշանակություն ունի մեղայականով ներկայանալու կամավոր լինելը, ինչի մասին կարող է վկայել, մասնավորապես, հանցագործություն կատարած անձի գիտակցումը, որ իրավապահ մարմիններին դեռևս հայտնի չէ կատարված հանցագործության մասին, կամ հայտնի է հանցագործության մասին, սակայն տեղեկություններ չունեն հանցագործություն կատարած անձի կամ վերջինիս գտնվելու վայրի մասին: Սուբյեկտը պետք է տիրապետի ազատ կամքի, այն

է, որ վերջինիս կողմից կարող է ընտրվել վարվելաձևի երկու (կամ ավելի) հնարավորություններից մեկը: Հանցագործը պետք է քննությունից և դատարանից թաքնվելու, քրեական պատասխանատվությունից խուսափելու կամ էլ մեղայականով ներկայանալու օբյեկտիվ հնարավորություն ունենա:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից կատարված վերլուծությամբ պարզվել է, որ մի շարք դեպքերում մեղադրյալի կողմից սառը գենք հանդիսացող առարկան (կոփազենքը) ձեռք բերելու և ոստիկանների կողմից այդ զենքը հայտնաբերելու միջև ընկած է եղել կարճ ժամանակահատված, հետևաբար՝ մեղադրյալը ոչ միշտ է օբյեկտիվորեն հնարավորություն ունեցել իրավապահ մարմին ներկայանալու և նշված առարկան կամովին հանձնելու համար¹⁰:

Այսպիսով՝ մեղայականով ներկայանալը հանցանք կատարած անձի ցանկացած կամավոր գործողություններն են, որոնք ուղղված են իրավապահ մարմիններին կատարած հանցանքի մասին հայտնելուն:

Գործուն զղջալու հիմքով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հաջորդ պայմանը հանցագործության բացահայտմանն աջակցելն է: Այդ վարվելակերպն ասելով՝ պետք է հասկանալ հանցագործության մեջ ներգրավված անձանց մասին հաղորդելը, վերջիններիս հայտնաբերելու, անհրաժեշտության դեպքում՝ իրավապահ մարմիններ ներկայացնելու ուղղությամբ օգնություն ցուցաբերելը, արարքի բոլոր հանգամանքները ճշմարտացի հայտնելը, քննչական գործողություններում ակտիվ նախաձեռնողական մասնակցությունը և այլն:

Նման գործողությունների արդյունքը հիմնականում պետք է լինի հանցագործության բացահայտումը: Միևնույն ժամանակ՝ եթե կասկածյալի, մեղադրյալի ցուցաբերած օգնությունը, նրանց կամքին հակառակ, դրական արդյունք չի տվել, ապա դա ևս կարող է դիտարկվել որպես հանցագործության բացահայտմանը նպաստել¹¹:

⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 13.07.2011թ. ԵԱՆԴ/0091/01/09 որոշման 23-րդ կետ:

¹⁰ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի վարչություն 2016թ. ընթացքում հայեցողական քրեական հետապնդման կիրառման պրակտիկայի վիճակի (ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդված) ամփոփում:

¹¹ Տե՛ս Щерба С.П., Савкин А.В. Деятельное раскаяние в совершенном преступлении, К., 1997, էջ 19-20:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը որպես գործուն զղջալու պայման նախատեսում է հանցագործությունը բացահայտելուն աջակցելը: Բացահայտել՝ նշանակում է հայտնաբերել, հայտնի դարձնել, ինչ-որ գաղտնի, անհայտ բան բացատրել և այլն¹² (ինչ-որ հանցագործություն կամ դա կատարած անձ):

ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի կառուցվածքն իրավակիրառողներից պահանջում է ինքնակամ լայն մեկնաբանել այդ հասկացությունը՝ մեջն ընդգրկելով նաև քննության ընթացակարգը: Օրինակ՝ հանցագործությունը բացահայտելու ինչ աջակցության մասին կարող է խոսք լինել, երբ հանցագործը բռնվել է դեպքի վայրում: Նման դեպքերում հանցագործություն կատարած անձի օգնությունն իրավապահ մարմիններին արդեն բացահայտված հանցագործության քննության աջակցությունն է: Ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան հարկավոր է ընկալել «աջակցել է հանցագործության բացահայտմանը և քննությանը»:

Գործուն զղջալու հաջորդ պայմանը՝ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցել կամ այլ կերպ հարթելն է: Այդ գործողություններն ուղղված են կատարված արարքի հետևանքների նվազեցմանը կամ վերացմանը: Եթե տուժողի հետ հաշտվելու դեպքում քրեական հետապնդման դադարեցումը կապված է տուժողի կողմից կամավոր ակտի հետ, ապա գործուն զղջալու պարագայում խոսքը մեղադրյալի (կասկածյալի) կողմից համապատասխան պահվածքի դրսևորումն է:

Վերը նշված պայմանների առկայությունը կարևոր նշանակություն ունի քրեական հետապնդումը դադարեցնելու (քրեական գործը կարճելու) հիմքն ընտրելու հարցում: Այսպես՝ ՀՀ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով կարճված մի շարք գործերով կամ սխալ է ընտրվել քրեական պատասխանատվությունից ազատելու համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված հիմքը, կամ դրա

կիրառման նպատակահարմարությունը վիճարկելի է¹³:

Ուսումնասիրելով գործուն զղջալու էությունը կազմող սուբյեկտիվ պայմանները՝ հարկ է ուշադրություն դարձնել այն հարցին՝ արդյոք անձին քրեական պատասխանատվությունից ազատելու որոշում կայացնելու համար անհրաժեշտ է հանցագործությունից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված բոլոր դրական գործողությունների առկայությունը, թե՛ բավարար է դրանցից մեկի կամ մի քանիսի առկայությունը: Այս հարցին պատասխանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի 4-րդ պարբերությամբ սահմանված այն կանոնը, ըստ որի՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է: ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմանները բաժանված են ստորակետով, ուստի նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանները պարտադիր են:

Ե.Վ. Տերեխովը կարծում է, թե «առաջին անգամ» «գործուն զղջալու» պայմանների այս կամ այն ամբողջության առկայության պարտադիրության հարցը կապված է նշված հիմքով քրեական հետապնդման դադարեցման հայեցողական հիմքով: ՌԴ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի և ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի օրենսդրական կառուցվածքը դատավարության մարմիններին իրավունք է վերապահում գործուն զղջալու հետ կապված իրավակիրառողի ազատության բավականին բարձր աստիճան հանցանք կատարած անձի պահելաձևը հանցանքը կատարելուց հետո գնահատելու հարցում»¹⁴:

«Դիսկրեցիոն հայեցողությունը և հսկողություն իրականացնող մարմինների (դատարան, դատախազ) պատճառաբանված որոշումն այն երկու տարրերն են, որոնք թույլ են տալիս կա-

¹² Տե՛ս Ожегов С.И. Словарь русского языка. М., 1984, էջ 572:

¹³ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 15.11.2016թ. ընթացքում հայեցողական քրեական հետապնդման կիրառման պրակտիկայի վիճակի (ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդված) ամփոփում:

¹⁴ Տե՛ս Е.В.Терехов. Дискреционные полномочия прокурора в сфере уголовного судопроизводства России и Австрии, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2009, էջ 110:

նուցել «զսպումների և հակակշիռների համակարգ», որպեսզի, մի կողմից, կարելի լինի խուսափել իրավասու մարմինների կողմից իրենց իրավունքների ակնհայտ կամ ոչ ակնհայտ չարաշահումից, իսկ մյուս կողմից՝ ապահովել իրական, այլ ոչ թե ձևական արդարադատություն՝ մարդու ճակատագիրը կախվածության մեջ չդնելով որևէ իրավական կազուիստիկայի պատահականություններից կամ այլ հանգամանքներից»¹⁵:

Այսպիսով՝ ՀՀ քրեական դատավարության 37-րդ հոդվածով նախատեսված քրեական հետապնդման դադարեցման համար անհրաժեշտ է, որպես կանոն, գործուն զղջալու բոլոր պայմանների առկայությունը: Սակայն, կարծում ենք՝ թույլատրելի են նաև իրավիճակներ, երբ իրատեսական չէ անձից պահանջել ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր պայմանների ապահովումը: Ամեն դեպքում անձի գործողություններում գործուն զղջալու առկայության կամ բացակայության մասին կարելի է խոսել՝ միայն ելնելով անձի կոնկրետ վարքից հանցանքը կատարելուց հետո: Այդ իսկ պատճառով գործուն զղջալու բոլոր պայմանների ամբողջության առկայության պարտադիր լինելու պնդումը հակասում է նշված հիմքով քրեական հետապնդման դադարեցման հայեցողական բնույթին:

Այդ կապակցությամբ գործուն զղջալու հիմքով քրեական հետապնդման դադարեցման կարևոր պայման է դառնում անձի հանրային վտանգավորության վերացումը: Իսկապես, ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ անձին պատասխանատվությունից ազատելը կախվածության մեջ է դրվում այն հանգամանքից, որի համաձայն՝ անձը գործուն զղջալու հետևանքով դադարել է

հանրորեն վտանգավոր լինելուց: Ընդ որում՝ օրենսդիրը չի պարզաբանում այն հատկանիշները, որոնց պարագայում գործուն զղջացող անձը դադարում է հանրորեն վտանգավոր լինելուց, կամ հատկանիշներ, որոնք վկայում են այն մասին, որ անձը շարունակում է հանրորեն վտանգավոր լինել: Ուստի նշված հասկացությունը գնահատողական է, որը սահմանելիս պետք է առաջնորդվել բոլոր հանգամանքներով, որոնք բնութագրում են ինչպես անձի վարքը հանցագործությունից հետո, այնպես էլ նրա անձը: Մեղավոր անձի վարքի վերաբերյալ վերլուծությունը և գնահատականը ինչպես քննության ընթացքում, այնպես էլ հանցագործություն կատարելուց առաջ պետք է արտացոլված լինեն քրեական գործի նյութերում¹⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է փաստել, որ ներկայումս գործուն զղջալու հետ կապված քրեական հետապնդման դադարեցման պրակտիկան, ցավոք սրտի, իր նշանակությանը համապատասխան պատշաճ տարածում չի ստացել: Կասկածյալի (մեղադրյալի) գործուն զղջալու դեպքում արդեն քննության հենց սկզբնական փուլում փոխվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների ծավալը, բնույթը և ուղղությունը: Գործուն զղջալու հնարավորություն է ստեղծում կրճատելու հանցագործության բացահայտման նյութատեխնիկական ծախսերը և նախաքննության ժամկետները: Մինչդեռ տական վարույթում գործուն զղջալու առավել լայն կիրառումը քրեական դատավարության բնագավառում նպաստում է հանցանք կատարած անձանց նկատմամբ տարբերակված, անհատական մոտեցում ցուցաբերելուն: Չնայած այս ամենին՝ դատախազությունը հաճախակի չի կիրառում գործուն զղջալու ինստիտուտը:

¹⁵ Տե՛ս Головки Л.В. Альтернативы уголовному преследованию в современном праве. 2002, էջ 433:

¹⁶ Տե՛ս Хамаганова А. X-И. Проблемы уголовно-правового значения данных о личности виновного при освобождении его от уголовной ответственности в связи с деятельным раскаянием // Журнал российского права.– 2007. №8, էջ 52-57.

ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ՊԵՏՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՃՄԱՆ
ՀԻՄՆԱՆՆԳԻՐՆԵՐԸ**

Ազգային և արտասահմանյան իրավաբանական գրականության մեջ ավանդաբար մեծ դեր է տրվել հռոմեական իրավունքին: Տարբեր ժամանակաշրջաններում առաջացող իրավական համակարգերի վրա վերջինս ունեցել է ահռելի ազդեցություն: Նշվածը տեղի է ունեցել ոչ միայն նախկին Հռոմեական կայսրության տարածքում, այլ նաև դրա սահմանից դուրս¹:

XIX-րդ դարի վերջում Ռ. Իերինգը հայտարարել է այն մասին, որ Հռոմի համաշխարհային պատմական նշանակությունն ու կոչումը կազմում են ազգայնության սկզբունքի հաղթահարումն ի օգուտ համընդհանրության գաղափարի: Նա իր «Հռոմեական իրավունքի ոգին իր զարգացման տարբեր փուլերում» հայտնի աշխատության մեջ նշել է, որ ծանր ճակատամարտի շնորհիվ հռոմայեցիներն ազատվել են լծից: Սակայն պատմական տեսանկյունից՝ իրենց կողմից ստացված օգուտը գերազանցել է այն տառապանքները, որոնց պետք է դիմակայեին²:

Նախ և առաջ՝ այդ օգուտի էությունն այն է, որ հռոմեական հասարակության զարգացման վաղ շրջանում արդեն իսկ ձևավորվել է ողջ հնագույն աշխարհի բարերարական միասնությունը, իսկ ավելի ուշ շրջանում Հռոմի համաշխարհային տիրապետության արդյունքը դարձել է նոր ժողովուրդների կրոնական և բարոյական դաստիարակությունը: Հռոմեական իրավունքի օգուտը համաշխարհային հանրության նորագույն ժամանակների զարգացման

փուլում կատարել է մի ամբողջ ներքին հեղաշրջում և ձևափոխել ողջ իրավաբանական մտածելակերպը:

Հռոմեական իրավունքը, ինչպես և քրիստոնեությունը, դարձել է նոր աշխարհի մշակութային տարր³:

Հռոմեական իրավունքի նկատմամբ մեծարող վերաբերմունքը եղել է լիովին արդարացված, քանի որ իր դրական ազդեցությամբ հանգեցրել է շատ երկրների իրավական համակարգերի ձևավորմանն ու զարգացմանը:

Մի շարք հրատարակումների առկայությունը վկայում է վերոնշյալի շարունակական բնույթի մասին ինչպես XX, այդպես էլ XXI դարերում⁴:

Ընդգծելով հռոմեական իրավունքի նշանակալից դերը ժամանակակից եվրոպական իրավունքի կայացման և զարգացման մեջ և նշելով հռոմեական օրենսդրության անվիճելի հեղինակությունը ողջ Արևմտյան Եվրոպայի տարածքում՝ իրավաբանները, մասնավորապես՝ հռոմեական իրավունքի մասնագետները, իրենց ուշադրությունը կենտրոնացրել են իրավական համակարգերի, ինչպես և ժամանակակից իրավունքի վրա հռոմեական իրավունքի ամենատարբեր՝ ընդհանուր և մասնավոր ազդեցությանը:

Ավելին՝ հռոմեական իրավունքն իր զգալի մասով ծառայել է որպես ուսանելի օրինակ բոլոր հաջորդող հասարակությունների իրավական համակարգերի համար, իսկ ավելի ուշ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

¹ Տե՛ս Գալանզա Ս. Ն., Государство и право Древнего Рима, М., 1963: Косарев А. И., Римское право, М., 1994: Хвостов В. М., Система римского права, М., 1996: Скрипилев Е. А., Основы римского права, М., 2000: Чезаре С., Курс римского частного права, М., 2002:
² Տե՛ս Իերինգ Ք., Дух римского права на различных ступенях его развития, Ч. 1. С.-Петербург, 1875, էջ 1-2:
³ Տե՛ս, նույն տեղը, էջ 1-2:
⁴ Տե՛ս, Покровский И. А., История римского права, С.-Петербург, 1915: Моммзен Т., История Рима, М., 1936: Савельев В. А., История римского частного права, М., 1986: Салогубова Е. В., Римский гражданский процесс, М., 1997: Омельченко О. А., Римское право, М., 2000:

շրջանում անվանվել է դատական կամ նախադեպային իրավունք: Այդ հանգամանքը նկատվել է մի շարք իրավագետների կողմից, ովքեր մատնանշել են հռոմեական իրավունքի միայն որոշ հատվածի նախադեպային բնույթը: Նրանց կարծիքով՝ մասնավորապես՝ դասական հռոմեական իրավունքն է եղել նախադեպային, քանի որ հռոմայեցի իրավաբանները չեն ցանկացել կապվել կարծր նորմերով և նախընտրել են զարգացնել սեփական իրավունքը:

Հավաստված է, որ նախադեպային իրավունքը ծագել է Հին Հռոմում՝ որպես պրետորական իրավունք⁵: Այսինքն՝ դիտարկումները սահմանափակվել են միայն հռոմեական իրավունքի նախադեպային բնույթով՝ որպես մյուս հիմնական հարցերից անկախ կողմնակի հարց, ուստի և հիշատակվել է այն մասին, որ նախադեպի ծննդավայրը ոչ թե Անգլիան է, ինչպես սովորաբար ընդունված է համարել, այլ՝ Հին Հռոմը⁶:

Պատմականորեն հենց այդ ժամանակաշրջանի հասարակության համաշխարհային զարգացման փուլում է ստեղծվել այն իրավական և քաղաքական երևույթը, որն իրավագիտության մեջ և պրակտիկայում դարեր անց անվանվել է նախադեպ, իսկ իր հիման վրա ստեղծված իրավունքը՝ նախադեպային իրավունք, ընդհանուր իրավունքի համակարգում գերակայող: Սկզբնականորեն վերջինիս անվանումը եղել է «պրետորական իրավունք», որը դատավարությունը ղեկավարող հռոմեական պաշտոնատար անձի՝ պրետորի կողմից ստեղծված նորմերի համակարգ էր կամ վարքագծի համապատասխան կանոն:

Հռոմեական իրավունքի բնագավառում պատմաբան մասնագետների հետազոտությունների համաձայն՝ պրետորների ինստիտուտը (պրետորա) իր հատուկ նշանակությամբ առաջին անգամ հայտնվել է մ. թ. ա. 366 թվականին: Պրետորը կարևորագույն տեղ է զբաղեցրել հռոմեական պաշտոնների համակար-

գում և մյուս պաշտոնատար անձանց հետ մեկտեղ տիրապետել է «imperium» անվանմամբ հատուկ պետական իշխանությանը: Պրետորի գործառույթների շրջանակում հատկապես առանձնացել է դատական գործունեության կառավարումը, որտեղ վերջինս դատական կարգով պաշտպանություն է իրականացրել դրա կարիքն ունեցող և դրան արժանացած նոր հարաբերությունների նկատմամբ⁷:

Հանդիսանալով հանրապետական Հռոմի պետական կառուցակարգի անփոխարինելի մասը՝ պրետորը «imperium» ունեցող մյուս բոլոր պաշտոնատար անձանց (կոնսուլներ, բռնապետներ, տրիումվիրներ և այլք), ովքեր անվանվել են մագիստրատներ, հետ մեկտեղ տարբերվել է իր գործունեության արդյունավետությանը նպաստող հետևյալ հատկանիշներով.

1. Ընտրվելու հատկանիշը, որի համաձայն՝ պրետորն ընտրվել է ցենտուրիատ աշխարհաժողովների (comitia centuriata) միջոցով: Պրետորին շնորհված լիազորությունների ուժով նա ազնվականների և հարուստ ստրկատերերի շահերի համար ընդունել է համապատասխան որոշումներ⁸:

2. Անհատույցության հատկանիշը, որի համաձայն՝ պրետորի պաշտոնի զբաղեցումը, մյուս պետական պաշտոնների նման, շատ պատվավոր է համարվել և անհամատեղելի աշխատավարձի ստացման հետ⁹:

3. Ժամկետային գործունեության հատկանիշը, որի համաձայն՝ պրետորը, ինչպես և հանրապետական Հռոմի մի շարք այլ պաշտոնատար անձինք, ընտրվել է մեկ տարի ժամկետով:

4. Համապարտադիր ակտեր՝ էդիկտներ արձակելու իրավունքը:

5. Կոլեգիալ լինելու հատկանիշը, որի համաձայն՝ պրետորան դարձել է կոլեգիալ մարմին իր ստեղծման պահից երկար ժամանակ անց՝ մ. թ. ա. 242 թվականին, երբ սկսվել է ընտրվել երկրորդ պրետորը¹⁰:

⁵ Տե՛ս Червонюк В. И., Теория государства и права, М., 2003, էջ 117:

⁶ Տե՛ս Schulz F., Geschichte der Römischen Rechts-Wissenschaft, Bonn, 1961, էջ 112-117: Monair A., Roman Law and Common Law, L., 1965, էջ 3-18: Kasers M., Römisches Privatrecht, Berlin, 1990, էջ 1-6:

⁷ Տե՛ս Новицкий И. Б., Римское право, М., 1993, էջ 20:

⁸ Տե՛ս Жидков О. А., Крашенинникова Н. А., История государства и права зарубежных стран: Ч. 1, М., 1996, էջ 131:

⁹ Տե՛ս Ковалев С. И., История Рима, М., 1948, էջ 101:

¹⁰ Տե՛ս Пухан И., Поленак-Акимовская М., Римское право (базовый учебник), В. А. Томсинов, М., 1999, էջ 18:

Հանրապետական Հոռոմում առաջին պրետորները հայտնվել են 366 թվականին՝ որպես բարձր պաշտոնատար անձանց՝ կոնսուլների, օգնականներ:

Սակայն, բանակը ղեկավարելու լիազորության պատճառով, կոնսուլները հաճախ բացակայել են Հոռոմից, և դրա հետևանքով քաղաքի կառավարումը փոխանցվել է պրետորներին: Այսպիսով՝ պրետորներին է փոխանցվել նաև դատական գործունեության կառավարումը, որն իմպերիումի ուժով իրենց թույլատրել է արձակել համապարտադիր որոշումներ և դրանով իսկ ստեղծել իրավունքի նոր նորմեր¹¹:

Առաջին պրետորն անվանվել է «քաղաքի» պրետոր: Ժամանակի ընթացքում առաջին պրետորները՝ որպես դատավարության բարձրագույն կառավարողներ, իրականացնելով իրենց հիմնական գործառույթները, հանգել են այսպես կոչված վիճելի արդարություն (jurisdictio contentiosa) իրականացնելու հնարավորության, այն պարագայում, երբ մինչ այդ կոնսուլներն իրականացրել են անվիճելի արդարություն (jurisdictio voluntaria)¹²:

Գործելով բարձր իշխանության կողմից իրենց տրված կանոնակարգին համապատասխան և իրականացնելով դատական գործունեության կառավարումը՝ առաջին պրետորները պետության անունից սահմանել են քաղաքացիական գործերով պաշտպանության ենթակա կողմերի իրավունքները, որոշել են վարույթում կողմերի մասնակցության (թույլատրման) հարցը, հաստատել են հայցի ընդունման և մերժման դեպքերը:

«Actionem dabo», այսինքն՝ «ես հայց կտամ» բանաձևը հանդես է եկել որպես պրետորի կողմից կոնկրետ գործը քննելու նպատակով հայցը վարույթ ընդունելու փաստ:

Միաժամանակ, պրետորները, առանց տեղեկանալու տվյալ պահանջները հիմնավորող համապատասխան օրենքի կամ սովորույթի առկայության մասին, նշանակել են դատավորներ և բանաձևերի տեսքով ուղղորդել՝ գործն ըստ էության քննելու և համապատասխան որոշումներ կայացնելու համար¹³:

Քրեական գործերի քննության ընթացքում առաջին պրետորները նախագահել են դատական հանձնաժողովներում:

Ի դեմս արդարության, առաջին պրետորի գործառույթների իրականացումն առնչվել է միայն Հոռոմի քաղաքացիների հետ: Համապատասխանաբար, բոլոր արձակվող ակտերը՝ էդիկտները, վերաբերել են Հոռոմի քաղաքացիներին և վերջիններին վրա տարածվող Հոռոմի մասնավոր իրավունքի համապարտադիր նորմերին:

Հռոմեական հասարակության զարգացումը և պետության ընդլայնումը Հոռոմն ուղղորդել են դեպի համաշխարհային առևտրային շրջանառություն: Դրա հետևանքով Հոռոմի քաղաքացիների իրավունքներով չօգտվող օտարերկրացիների՝ պերեգրինների առեւտրի քանակն առաջացրել է պերեգրինների պրետորի ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունը: Սա եղել է երկրորդ պրետորը, ով անվանվել է նաև «այլ քաղաքի» պրետոր: Երկրորդ պրետորը, ինչպես և առաջինը, արձակել է համապարտադիր ակտեր՝ էդիկտներ, որոնցում պարունակվող նորմերը սահմանել են համապատասխան դատական գործունեության շրջանակները¹⁴:

Ի տարբերություն քաղաքի պրետորի, ում իրավասությունը տարածվել է Հոռոմի քաղաքացիների միջև քաղաքացիական իրավահարաբերությունների վրա, երկրորդ՝ պերեգրինյան պրետորի էդիկտները վերաբերել են միայն պերեգրինների միջև իրավահարաբերություններին, ինչպես նաև պերեգրինների և հռոմեական քաղաքացիների միջև ծագող վեճերին: Այսպիսով՝ երկրորդ պրետորն ունեցել է իրավասություն միայն վերը նշված անձանց միջև հարաբերությունների նկատմամբ: Երկրորդ պրետորի ինստիտուտի ստեղծումը, անկասկած, աջակցել է և՛ հանրապետական Հոռոմի պետական մեխանիզմի, և՛ հռոմեական իրավունքի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը¹⁵:

¹¹ Sեն, История государства и права зарубежных стран, Том 1, М., 2014, էջ 133:

¹² Sեն, Пухан И., Поленак-Акимовская М., նշվ. աշխ., էջ 18:

¹³ Sեն, Новицкий И. Б., Перетерский И. С, Римское частное право, М., 1999, էջ 8:

¹⁴ Sեն, Hausmaninger H., Casebook zum Römischen Sachenrecht., Berlin, 1990, էջ 35-72:

¹⁵ Sեն, Машкин Н. А., История Древнего Рима, М., 1948, էջ 351-353:

Հարկ է նշել, որ պրետորների ինստիտուտի ընդլայնումը չի սահմանափակվել քաղաքի և այլ քաղաքների պրետորների առկայությամբ, վերջիններիս իրավաստեղծ գործունեության ծավալի աճը շարունակվել է նաև հետագայում:

Հուստինիանոսի Դիգեստներում այս կապակցությամբ ասվել է հետևյալը.

«Սարդինիայի, իսկ շուտով նաև Սիցիլիայի, Իսպանիայի և այնուհետև Նարբոնյան պրովինցիաների գրավումից հետո նշանակվել են այնքան պրետորներ, որքան ենթարկված պրովինցիաներն են՝ զորամասի կողմից քաղաքի, մասնակիորեն պրովինցիաների գործերը ղեկավարելու համար: Այնուհետև Կոռնելիոս Սուլլան հաստատել է կեղծարարությունների, ազգակիցների սպանության (parricidium), ավազակության (sicarius) վերաբերյալ պետական քննություն և ավելացրել չորս պրետորների: Այնուհետև Գայոս Հուլիոս Կեսարն ավելացրել է երկու պրետորների և երկու էդիլների... Այսպիսով՝ հաստատվել են տասներկու պրետոր և վեց էդիլ: Այնուհետև աստվածային Օգոստոսը հաստատել է տասնվեց պրետորների, այնուհետև աստվածային Կլավդիոսը ավելացրել է (fideicommissum) վստահության վրա հիմնված գործերով երկու պրետորների... Այսպիսով՝ պետության մեջ որոշում են կայացնում տասնութ պրետոր»¹⁶:

Հին Հռոմում պրետորների ինստիտուտի զարգացումը շարունակվել է հանրապետության գոյության ողջ դարաշրջանի ընթացքում և թողել մեծ ազդեցություն հռոմեական իրավունքի վրա: Հռոմեական իրավունքը, նախ և առաջ, վերաբերել է գոյություն ունեցող քաղաքական հաստատություններին, ներառյալ՝ պրետորների ինստիտուտին և ձևականորեն ստեղծված է եղել հռոմայեցի նոբիլների համար, սակայն փաստացի իրականությունում գործել է ազնվական խավի օգտին: Այսինքն՝ պետական կառուցվածքի հնացած և քողարկված ձևին շնորհվել է հանրապետական կառավարման իշխանության տեսանելիություն:

Հետագայում հանրապետական Հռոմի ճգնաժամն ու կայսրությանն անցումը հանգեցրել են Հռոմի իրավական համակարգի անկ-

մանը և, հատկապես՝ պրետորների ինստիտուտի՝ պրետորայի թուլացմանը: Պրետորների և այլ դատական մագիստրատների իրավաստեղծ գործունեությունը՝ որպես անխուսափելի հետևանք, կորցրել է իր զգալի նշանակությունն այն պարզ պատճառով, որ կայսերական իշխանության ուժեղացումն էլ ավելի է ձգտել վերահսկել դատական մարմինների գործունեությունը: Պրետորների ինստիտուտը՝ պրետուրան, իրեն վերապրել է մյուս իրավական և քաղաքական ինստիտուտների հետ մեկտեղ, քանի որ փոփոխված պայմաններում դատական գործունեության կառավարումը, ինչպես և հենց դատական գործունեությունը, առավելապես փոխանցվել է կայսեր ամրապնդված իշխանությանը:

Հռոմեական պետությունում կայսրության հաստատումից հետո Հռոմի քաղաքական համակարգում աստիճանաբար փոխվել է նաև պրետորների դիրքը: Պրետորները ձևականորեն պահպանել են դեռևս նախկին ժամանակներից ընդունված համապարտադիր իրավական ակտերի արձակման իրավունքը: Սակայն նոր իրավաստեղծումն սկսել է բացահայտ հակասել կայսրերի աճող ինքնիշխանությանը: Այդ իսկ պատճառով, խուսափելով կայսրերի իշխանության հետ բախումներից՝ պրետորները, որպես կանոն, դադարել են ստեղծել նոր նորմեր և, փոխարենը՝ սկսել են ամբողջությամբ կրկնապատկել նախորդ պրետորների էդիկտները:

Հաջորդող պրետորական իրավունքի կոդիֆիկացումը տեղի է ունեցել մ. թ. II դարի ընթացքում Հադրիանոս կայսրի որոշմամբ: Այնուհետև՝ կոդիֆիկացված ակտին (հավերժ էդիկտին) պարտադիր բնույթ շնորհելը, ըստ էության, հանգեցրել է բոլոր հաջորդող մագիստրատների և, հատկապես, պրետորի ակտերի իրավաբանական ուժի չեղյալ հայտարարմանն ու հռոմեական իրավունքի աղբյուրների ցանկից բացառմանը¹⁷: Այսինքն՝ պրետորների էդիկտները կորցրել են իրենց իրավաբանական ուժի բարձր աստիճանը, և նվազել է պրետորների իրավաստեղծ գործունեության ծավալը: Նշվածի հիմքում ընկած են եղել շատ կարևոր

¹⁶ S՛նu Памятники Римского права, Законы XII таблиц, Институции Гая, Дигесты Юстиниана, М., 1997, էջ 163:

¹⁷ S՛նu История государства и права зарубежных стран, Т. 1, М., 2014, էջ 156:

սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներ, որոնք կապված չեն եղել միայն կայսերական իշխանության հզորացման հետ: Օբյեկտիվ պատճառներից մեկն արտահայտվել է այն հանգամանքում, որ քաղաքական ճգնաժամի առաջացման և հանրապետության անկման պահին հռոմեական իրավունքը՝ իր նախկին հանրապետական համակարգի տեսքին համապատասխանող, հասել է իր զարգացման բարձրագույն կետին, ինչի հետևանքով գործնականում դադարել է պրետորական էդիկտների առկայության անհրաժեշտությունը: Սակայն էդիկտները, մինչ այդ, ունեցել են զգալի ճկունություն և կայունություն և հռոմեական իրավունքի զարգացումը հասցրել են «դասական» ճանապարհի: Գիտական գրականության մեջ այս կապակցությամբ նշվել է, որ պրետորական իրավունքի զարգացումն ու իրավունքի վրա պրետորական ազդեցության աճը կախված է եղել ոչ միայն վերջինիս տրամադրվող որևէ նոր լիազորությունից, այլև քաղաքացիական կյանքի պահանջների աճից¹⁸:

Պրետորական իրավաստեղծումը կյանքի է կոչվել տնտեսության զարգացմամբ, ստրկա-

տիրության աճով, ստրկատիրական դասի տիրող վերնախավի ձեռքերում առևտրային և վաճառության կապիտալի և խոշոր հողային սեփականության կենտրոնացմամբ: Բոլոր նոր սոցիալական և տնտեսական պայմանները Հռոմի մասնավոր իրավունքի հին որոշումները դարձրել են անբավարար և քանակի, և որակի տեսանկյունից¹⁹:

Նշվածն ընդգծել է որոշումներում էական լրացումներ և նույնիսկ ուղղումներ կատարելու անհրաժեշտությունը: Եվ հենց դատական մագիստրատներն են, իսկ գլխավորապես՝ պրետորները, կրել այդ գործողությունները կատարելու պարտականությունը: Վերջիններս էդիկտների շնորհիվ ներկրել են «արտախորհրդարանական» իրավաստեղծում և գործող օրենսդրության մեջ կատարել էական ուղղումներ:

Երկարատև ժամանակի ընթացքում աստիճանաբար կատարվող աշխատանքի շնորհիվ՝ ձևավորվել են մի շարք իրավական ինստիտուտներ, որոնք մշակվել են պրետորների էդիկտների միջոցով և պարունակել են նորաստեղծ պաշտպանության մեխանիզմներ²⁰:



¹⁸ Տե՛ս Седиков С. Ю., Роль квинтитского претора в создании норм римского частного права предклассического периода, Древнее право, 1996, №1, էջ 128:

¹⁹ Տե՛ս Новицкий И. Б., Перетерский И. С., նշվ. աշխ., էջ 18:

²⁰ Նույն տեղը:

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան,
Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի հայցորդ

ԿԼՈՆԱՎՈՐՄԱՆ, ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ, ԱԲՈՐՏԻ ՀԱՐՁԵՐԸ ՄԱՐԴՈՒ ՍՈՄՍՏԻԿ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սոմատիկ իրավունքներն անձի հետ կապված իրավունքներ են, որոնք վերաբերում են մարդու կյանքի, մարդու մարմնի՝ որպես ամբողջության, ինչպես նաև այդ ամբողջության առանձին մասերի (օրգաններ, հյուսվածքներ, բջիջներ) նկատմամբ մարդու ըստ իր հայեցողության տնօրինման, տիրապետման, օգտագործման հետ, այլ կերպ ասած՝ դրանք մարդուն տրված հնարավորություններ են՝ ազատորեն ղեկավարելու, վերահսկելու, կառավարելու իր կյանքը և մարմինը:

Մարդու սոմատիկ իրավունքները կազմում են մեկ ամբողջություն, որտեղ ներառված են կյանքի (ապրելու) իրավունքը, մարդու մարմնի մասերի, օրգանների, հյուսվածքների փոխպատվաստման իրավունքը, կլոնավորման իրավունքը, արտաքինը փոփոխելու իրավունքը, թմրանյութեր և հոգեներգործուն նյութեր օգտագործելու իրավունքը, բժշկական կամ գիտական հետազոտություններին մասնակցելու իրավունքը, գենետիկ փոփոխման իրավունքը, սեռականության իրավունքը, մահանալու իրավունքը, վերարտադրման իրավունքը, ստերջացման (ամլացման) իրավունքը, կաստրացիայի իրավունքը, աբորտի իրավունքը:

Սույն գիտական հոդվածում կանդիդատանք մարդու այնպիսի սոմատիկ իրավունքների ընդհանուր բնութագրին, էությանը, ինչպիսիք են մարդու մարմնի մասերի, օրգանների, հյուսվածքների փոխպատվաստման իրավունքը, կլոնավորման իրավունքը, աբորտի իրավունքը:

Կլոնավորում

Կլոնավորման հետ կապված հարցերի ուսումնասիրությունը վկայում է, որ կլոնավորման

գործնական ակունքները բխում են 20-րդ դարից, քանզի կլոնավորում իրականացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն լուրջ գիտական ուսումնասիրություն, այլ նաև անհրաժեշտ բժշկատեխնոլոգիական ձեռքբերումներ:

Գրականության մեջ նշվում է կլոնավորման 2 տեսակի մասին՝

- ✓ վերարտադրողական կլոնավորում,
- ✓ բուժական կլոնավորում¹:

Առաջինի դեպքում նպատակը գենետիկորեն նույնական սուբյեկտի ստեղծումն է (մարդու վերարտադրումը, բազմանալը), իսկ երկրորդի դեպքում՝ բջիջների, օրգանների, հյուսվածքների, ցողունների ստեղծումը (մարդու առողջության պահպանության նպատակներից ելնելով):

Առաջինի դեպքում դա արգելված է. չէ որ մարդու կլոնավորումը ենթադրում է բժշկական-կենսաբանական, կազմակերպչական, տեխնիկական-իրավաբանական, էթիկական-իրավական հարցերի հստակ քննարկում², իսկ երկրորդի պարագայում գրեթե բացասական մոտեցում չկա:

Այսինքն՝ կարող ենք փաստել, որ կլոնավորման մասին խոսելիս մի դեպքում նկատի ունենք մարդկային էակի, մարդու կլոնավորումը (վերարտադրողական կլոնավորում), իսկ մեկ այլ դեպքում՝ մարդու օրգանի, հյուսվածքի, ցողունային բջիջների կլոնավորումը (բուժական կլոնավորում):

2001 թվականի հունվարին Մեծ Բրիտանիայի կառավարությունը թույլատրեց բժշկական հետազոտություններում կիրառել կլոնավորված սաղմեր: Դա հիմնականում բացառվում էր այն հանգամանքով, որ այդպիսի էմբ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

¹ Տե՛ս Ներսեսյան Լ.Ս., Խաչատրյան Զ. Ա., Մկրտչյան Ս. Ա., Կենսաէթիկայի ներածություն, Երևան, 2012, էջ 150:
² Տե՛ս Сальников В.П., Старовойтова О.Э. Клонирование человека как правовая категория. Вестник Санкт-Петербургского университета МВД России № 1 (29), Санкт-Петербург, 2006. С. 33.

րիոններն անհրաժեշտ են ցողունային բջիջների ուսումնասիրման համար, ինչը հնարավորություն կտա ստեղծելու փոխարինվող բջիջներ շատ հիվանդությունների դեպքում³: Կլոնավորման այդ տեսակը դասական իմաստով չենք կարող դիտարկել ո՛չ վերարտադրողական, ո՛չ էլ բուժական կլոնավորում: Կլոնավորման այս տեսակը կարող ենք անվանել հետազոտական կլոնավորում:

Մարդու վերարտադրողական կլոնավորումն արգելված է թե՛ միջազգային, թե՛ հիմնականում նաև ներպետական մակարդակով: Որպես միջազգային-իրավական փաստաթուղթ՝ Բժշկության և կենսաբանության (բիոլոգիայի) կիրառման հետ կապված մարդու կլոնավորումն արգելելու վերաբերյալ Օվիեդոյի կոնվենցիային կից լրացուցիչ արձանագրությունն է, իսկ ներպետական-իրավական փաստաթուղթ է, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում, մասնավորապես, արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, **մարդու վերարտադրողական կլոնավորումը**:

Ամփոփելով կլոնավորման հարցի ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ այսօր մարդկային էակի կլոնավորումն արգելված է, ունի հստակ ամրագրում, հստակ հիմնավորումներ: Երբ հարցը վերաբերում է մարդկային սաղմը հետազոտության շրջանակում կլոնավորման հարաբերությունների օբյեկտ դիտարկելուն (սաղմի որոշակի օրական լինելու հանգամանքից անկախ), կարծում ենք՝ դա չպետք է թույլատրել, քանզի բեղմնավորման պահից հատուկ պաշտպանության տակ պետք է վերցնել: Ինչ վերաբերում է բուժական կլոնավորմանը (ցողունային բջիջների, օրգանների ստացման նպատակով)՝ դա խրախուսելի է, քանզի այսօր աշխարհը փոխապատվաստման ընթացքում ահռելի պահանջ ունի դոնորական նյութի (օրգան, հյուսվածք), ինչը առաջարկի սակավության հետևանքով անդառնալի կորուստներ է ստեղծում: Բուժական կլոնավորումը պետք է խրախուսվի, դրա համար անհրա-

ժեշտ իրավական, տեխնիկական, տեխնոլոգիական պայմաններ պետք է ստեղծվեն, հատուկ ուշադրություն պետք է դարձնել այդ հարցի գիտահետազոտական ուսումնասիրմանը:

Աբորտ

Աբորտի իրավունքը կարելի է դիտարկել 2 հարթությունում՝

- ✓ սելեկտիվ (ընտրողական) աբորտ, երբ դա կատարվում է՝ ապագա երեխայի սեռով պայմանավորված,
- ✓ ընդհանուր աբորտ, երբ դրա հիմքում դրվում է պարզապես մոր ցանկությունը կամ որևէ ցուցում:

Կրկին, եթե հարցը դիտարկենք աստվածաբանական տեսանկյունից, ապա աբորտի իրավունք գոյություն չունի, անթույլատրելի է, իսկ եթե իրավական առումով, ապա կարող ենք փաստել, որ դա տարաբնույթ է. մի դեպքում՝ թույլատրվում է պայմանով (այսինքն՝ մինչև X շաբաթական լինելը մայրն իրավունք ունի ազատորեն, իսկ դրանից հետո՝ որոշակի բացառիկ, օբյեկտիվ հիմքերի դեպքում), իսկ մյուս դեպքում՝ արգելվում:

Օրինակ՝ ՀՀ-ում յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման (աբորտի) իրավունք⁴:

Հղիության արհեստական ընդհատումը՝

1) մինչև 12 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է՝ կնոջ գրավոր դիմումի համաձայն: Բժշկական ցուցումների դեպքում ընդհատումը մինչև 12 շաբաթական հղիության ժամկետն իրականացվում է կնոջ գրավոր համաձայնությամբ:

2) 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (ներառյալ՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ:

Այսինքն՝ վերը նշվածից բխում է, որ ՀՀ-ում կինն իրավունք ունի իր հայեցողությամբ ընդհատելու հղիությունը մինչև 12 շաբաթական դեպքում, հետևաբար՝ կարելի է փաստել, որ օրենսդիրը հենց 12 շաբաթականն է դի-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

³ Տեն Գևորգյան Ա., Գիտության փիլիսոփայություն, դասախոսությունների կուրս, Երևան, 2012, էջ 57:

⁴ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 10:

տարկել կենսունակության սկիզբ և հենց այդ պահից է պայմանավորել պտղի պաշտպանությունը: 12 շաբաթականից հետո գործ ունենք 2 տարբեր շահերի հետ. մի դեպքում՝ պտղի, դեռևս չծնված երեխայի կյանք ունենալու իրավունքն է, մյուս դեպքում՝ մոր՝ հղի կնոջ բժշկական կամ սոցիալական, մասնավոր, այդ թվում՝ կյանքին վտանգ ստեղծող, շահն է:

Նրանք, ովքեր բացարձակ մոտեցում են ցուցաբերում աբորտի իրավունքին և դա պայմանավորում միայն հղի կնոջ շահով, այդ թվում՝ ցանկացած շահով, համարում են, թե աբորտի սահմանափակումը չպետք է պայմանավորված լինի սաղմի, պտղի, «ապագա երեխայի» շահով, քանզի հենց սաղմը մոր մարմնի մեջ է ձևավորվում և որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մինչև 9 ամիս) մոր մարմնի մի մասն է, հետևաբար՝ մոր սեփականությունը, այդ թվում՝ մարմնի անձեռնմխելիության համատեքստում:

Հղիության արհեստական ընդհատումը մոր անուղղակի կամքի արտահայտումն է՝ իր մարմնից հեռացնելու պտուղը՝ արհեստական կամ այլ եղանակով⁵:

Աբորտի իրավունքի իրացումը պետք է պայմանավորված լինի պաշտպանվող շահերի առավելագույն արժեքի սկզբունքով: Հաճախ կինը դիմում է աբորտի ոչ այն նպատակով, որ առկա են առողջական խնդիրներ իր կամ պտղի պարագայում, կամ հղիությունը բռնաբարության արդյունք է, կամ առկա է սոցիալական այլ լուրջ խնդիրներ, այլ՝ այն նպատակով, որ չի ցանկանում մարմնի սլացիկությունը կորցնել, ցանկանում է կարիերա անել և այլ սուբյեկտիվ քմահաճ ցանկություններ բավարարել:

Սակայն աբորտի իրավունքի չարաշահումը, այն է՝ սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը, չպետք է վնաս պատճառի նաև մեկ այլ կարևոր շահի, արժեքի: Եթե չարաշահման հետևանքով ոտնահարվում են նաև այլ արժեքներ, ապա պետք է սահմանվեն որոշակի ոչ ցանկալի իրավական հետևանքներ:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ աբորտի իրավունքի համատեքստում ան-

տեսվում է հոր, տղամարդու շահը, քանզի մինչև 12 շաբաթական լինելը բավարար է միայն մոր համաձայնությունը: Երբ անտեսվում է հոր շահը, մեխանիկորեն ընդունում ենք այն փաստը, որ սաղմը կնոջ մարմնի մի մասն է, հետևաբար՝ կինն ազատ է իր հայեցողությամբ դա կառավարել, վերահսկել:

Ամփոփելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է փաստել, որ աբորտի իրավունքն անձին ընձեռված հնարվորություն է՝ կառավարելու, վերահսկելու իր մարմինը, այդ թվում՝ փոփոխության ենթարկելու, սակայն այդ իրավունքի իրացումը չպետք է չարաշահման, այլ սուբյեկտի շահերի ոտնահարման տարրեր պարունակի: «Այլ սուբյեկտ» ասելով՝ անհրաժեշտ է հասկանալ նաև ապագա երեխայի⁶, նաև հոր օրինական շահերն ու պահանջունքները: Աբորտի իրավունքի իրացումն ամենախոցելի ոլորտներից մեկն է, որտեղ անհրաժեշտ է գտնել ողջամիտ հավասարակշռում տարբեր շահերի միջև՝ ապագա երեխայի ծնվելու իրավունքը, հոր իրավունքը, մոր իրավունքը:

Փոխպատվաստում

Փոխպատվաստումը բացակայող կամ վնասված հյուսվածքների կամ օրգանների փոխարինումն է սեփական կամ այլ օրգանիզմից վերցված հյուսվածքներով կամ օրգաններով: Հիմնականում հենց այս սահմանումն է, որ պետություններն ամրագրել են ներպետական մակարդակով, սակայն կարող ենք նաև արձանագրել, որ արյունը ոչ օրգան է, ոչ էլ հյուսվածք: Երբեմն օրգանի կամ հյուսվածքի փոխպատվաստումն անվանում են անատոմիական նվեր: Սրա հիմքում ընկած է այն գաղափարը, որ դոնորը սեփական կամքով, ցանկությամբ իր օրգանը կամ հյուսվածքը, որպես նվեր, տրամադրում է մեկ այլ անձի: Փոխպատվաստման իրավունքի հիմքում ընկած է մարդու՝ իր մարմնի մասերի, օրգանների, հյուսվածքների և բջիջների նկատմամբ սեփական հայեցողությամբ վերահսկելու գաղափարը:

Փոխպատվաստման գիտական ակունքները գալիս են 19-րդ դարից, իսկ գործնական ակունքները՝ 1967 թվականից, երբ առաջին ան-

⁵ Стен Романовский Г. Б., Гносеология права на жизнь, М., 2003. С. 163.

⁶ Միևնույն ժամանակ, ընդունում ենք, որ դասական եղանակով սաղմը և պտուղը չեն կարող համարվել իրավունքի, իրավահարաբերության սուբյեկտ:

գամ կատարվեց սրտի փոխպատվաստում: Առաջացել է transplantare բառից, որը նշանակում է տեղափոխել: Հավելենք, որ փոխպատվաստման գիտությունը ներառում է փորձարարական և կլինիկական վիրաբուժության, դոնորական օրգանների կոնսերվացման, գենային ինժեներիայի, իմունաբանության, կենսամեխանիկայի լավագույն ձեռքբերումները⁷:

Ժամանակի ընթացքում նկատվեց, որ փոխպատվաստման համակարգում առկա է առաջարկի և պահանջարկի անհամաչափություն, քանզի պահանջարկն ավելին է, քան առաջարկը, այսինքն՝ կարող ենք փաստել, որ դոնորական նյութի առկայությունը խնդիր է: Փոխպատվաստումը դիտարկվում է որպես մարդկային կյանքը փրկելու միջոց⁸: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ դա բժշկական միջամտություն է, որն առնչվում է օրգաններին կամ հյուսվածքներին, ունի գիտակցական-կամային բնույթ, նպատակը մարդկային կյանքի երկարացումն է կամ առողջության լավացումը, որն իրականացվում է սահմանված ընթացակարգով:

Փոխպատվաստման իրավունքը սուբյեկտի իրավունքն է՝ հանդես գալ որպես դոնոր, ռեցիպիենտ, տրամադրել իր օրգանը կամ հյուսվածքը կամ բջիջը՝ այլ սուբյեկտի փոխպատվաստելու համար: Այս իրավունքի կենսագործումը մեծապես բխում է բժշկագիտության զարգացումից, քանզի այս իրավունքի կենսագործման (գործնական և արդյունավետ լինելու) մասին չէինք կարող խոսել հին կամ միջին դարերում: Փոխպատվաստման իրավունքը որպես իրացվող երևույթ լայն տարածում գտավ 21-րդ դարից, երբ բժշկության զարգացումը հնարավորություն տվեց փրկելու մեկ անձի կյանքը մեկ այլ անձի օգնությամբ՝ առանց վերջինիս կյանքին կամ առողջությանը էական վնաս հասցնելու:

Փոխպատվաստման հիմքում դրված է կամավոր և անվճար հիմունքներով դոնորության գաղափարը: Փոխպատվաստման թեման քննարկելիս բախվում ենք ոչ միայն բժշկական, կրոնական, այլ նաև իրավական հարցերի:

Օրգանների, հյուսվածքների փոխպատվաստման իրավունքի իրացման շրջանակում առկա է 3 մոտեցում:

Առաջին մոտեցման համաձայն՝ փոխպատվաստումն ինքնին արգելված է, քանզի դա հակակրոնական երևույթ է, հետևաբար՝ յուրաքանչյուր սուբյեկտ (դոնոր, բժիշկ, համապատասխան հաստատություն), ով որևէ կերպ կներգրավվի այդ գործընթացին, կենթարկվի պատասխանատվության:

Երկրորդ մոտեցման համաձայն՝ դա թույլատրելի է, կարգավորվում է պետության կողմից ընդունված փաստաթղթերով:

Երրորդ մոտեցման համաձայն՝ թույլատրվում է օրգանների ներկրումը, սակայն չի թույլատրվում արտահանումը⁹:

Փոխպատվաստման իրավահարաբերությունների շրջանակում երբեմն կարող ենք բախվել այնպիսի հարցերի, որոնք ոչ թե փոխպատվաստման էությունից բխող հիմնահարցեր են, այլ՝ փոխպատվաստման իրավունքի իրացումից ածանցվող հարցեր, օրինակ՝ ռասայական կոլիզիան¹⁰: Որպես օրինակ՝ կարելի է նշել այն դեպքը, երբ սպիտակամորթ տղամարդուն սևամորթի սիրտ էին փոխպատվաստել, և տղամարդու կյանքը հնարավոր էր եղել փրկել, սակայն տղամարդը դժգոհել էր, քանզի գերադասել էր մահանալ, քան թե սևամորթի սիրտ փոխպատվաստեին: Կարծում ենք՝ նման իրավիճակներում պետք է առաջնայնություն տրվի հիվանդի ցանկությանը, եթե այդպիսին առկա է, իսկ եթե այդ ցանկությունը առկա չէ կամ առկա է, սակայն հստակ կամ իրատեսա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

⁷ Sfin Korotkih E.B., Ретроспективный анализ отечественного законодательства о трансплантации органов и тканей человека. Вестник Вятского государственного гуманитарного университета. N 2, Киров, 2010. С. 68.
⁸ Sfin Салагай О.О., Трансплантация органов и тканей человека в международно-правовом и сравнительно-правовом аспектах // Российская юстиция. N7, Москва, 2010. С. 59.
⁹ Օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում արգելված չէ օրգանների վաճառքը, եթե դա ներքին շուկայի բավարարմանն է ուղղված, իսկ արտահանումն արգելված է (օրինակ՝ երիկամի վաճառքի շուկայական միջին գին է նշվում 4000 ԱՄՆ դոլարը): ՀՀ-ում արտահանումը ևս արգելված է, սակայն արգելված է նաև օրգանների վաճառքը, քանզի թույլատրելի, խրախուսելի է համարվում օրգանի դոնորությունը՝ նվիրատվությունը՝ որպես բարի կամքի դրսևորում՝ անհատույց հիմունքով:
¹⁰ Կոլիզիա նշանակում է բախում:

կան չէ, ապա առաջնայնություն պետք է տրվի փոխպատվաստաման ընդհանուր հիմունքներին:

Փոխպատվաստման դոնոր կարող է հանդիսանալ ինչպես կենդանի, այնպես էլ անկենդան դոնորը: Անկենդան դոնորից օրգաններ վերցնելու 2 եղանակ կա՝

- ✓ համաձայնության առկայություն (կտակած համաձայնություն),
- ✓ անհամաձայնության բացակայություն (ենթադրյալ համաձայնություն):

Անկենդանության օրոք դոնորության մասին խոսելիս Մ. Մալեինան նշում է, որ գործ ունենք անսուբյեկտ իրավունքի հետ, որն իրականացվում է մահացածի մերձավորների կողմից¹¹:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք փաստել, որ մարդու օրգանի, հյուսվածքի կլոնավորման, աբորտի, մարդու օրգանի, հյուսվածքի փոխպատվաստման դեպքում գործ ունենք մարդու սոմատիկ իրավունքների հետ, քանզի մարդն իր հայեցողությամբ որոշում է ընդունում ինքնուրույն կառավարել, վերահսկել իր մարմինը: Ուստի, պայմանավորված դրանով՝ անհրաժեշտ է հստակ իրավական կարգավորման ենթարկենք այդ ոլորտում առկա հարաբերությունները՝ հստակեցնելով այդ իրավունքների բովանդակությունը, կենսագործման շրջանակները, մարդու ազատության չափը՝ սուբյեկտիվ իրավունքների իրացման, այդ իրավունքներից հրաժարման դեպքերում, ինչպես նաև պատասխանատվության տեսակը:



¹¹ Стёу Малейна М.Н., Право индивида на телесную (физическую) неприкосновенность. Государство и право, N4, М., 1993. С. 105.

ՍԱՄՎԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

Հարյուրամյակներ պահանջվեց, որպեսզի մարդկությունը հանգի այն ճշմարտությանը, որ սոցիալական կյանքում առաջնայինը մարդն է և նրա իրավունքները՝ որպես անմիջական գործող իրավունք և պոզիտիվ օրենսդրական հիմք¹:

Այս առումով՝ բոլոր մարդիկ հավասար են որպես անհատներ, օժտված են անձի անձեռնմխելիության, մասնավոր կյանքի, անհատական ազատության, խղճի ազատության և այլ իրավունքներով: Այդ իսկ պատճառով հավասարապես ճանաչվում է հասարակության յուրաքանչյուր անդամի մարդկային արժանապատվությունը²:

Հասարակության նպատակների աստիճանակարգությունում (հիերարխիայում) մարդու շահերը պետք է զբաղեցնեն առաջնային տեղ: Անշուշտ, հնարավոր են պետական միջոցառումներ ու գործողություններ, որոնք այս կամ այն չափով սահմանափակում են առանձին մարդկանց շահերը: Սակայն պետական այդ քայլերը պետք է ուղղված լինեն հասարակության իրական բարիքին, և բացի դրանից՝ այդպիսի բնական սահմանափակումները պետք է համապատասխանեն նման սահմանափակումների միջազգային իրավական չափանիշներին, ամրագրված լինեն ազգային օրենսդրության մեջ, իրականացվեն խստիվ չափավոր մասշտաբով և միայն այն դեպքերում, երբ այլ մեթոդներով հնարավոր չէ լուծել այս կամ այն սոցիալական խնդիրները³:

Բուն այն նպատակները, որոնք իրենց առջև դնում են հասարակությունը և պետությունը,

պետք է համապատասխանեն մարդասիրության (հումանիզմի) սկզբունքներին: Այդ նպատակադրումը պետք է իրականացվի արժեքների կշռադատման և դրանց իրագործման համար մարդասիրական միջոցների հիման վրա: Այստեղ մոտենում ենք նպատակի և դրան հասնելու միջոցի հարաբերակցության հավերժ արդիական հիմնախնդրին: Հայտնի է Մաքիավելլի բանաձևը. «Նպատակն արդարացնում է միջոցները»:

Այս աշխատանքում, սակայն, տեղին չէ դավերլուծել փիլիսոփայական դիրքորոշումից, բավական է միայն նշել այդ բանաձևի անհամապատասխանությունը «մարդը նպատակ է, այլ ոչ միջոց» կանխադրույթին, որը դարձել է միջազգային հումանիտար իրավունքի հիմնարար սկզբունք⁴, քանի որ ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948թ.), Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (1966թ.), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (1950թ.) և միջազգային այլ ակտերում⁵:

Միջազգային դաշնագրերն ու հռչակագրերը նպաստում են, որպեսզի «մարդը նպատակ է, այլ ոչ միջոց» սկզբունքը ներթափանցի նաև ազգային օրենսդրությունների մեջ:

Սակայն ինչպես պատմության, այնպես էլ արդիականության մեջ բազում է այս սկզբունքի մերժումը, իսկ որոշ երկրներում նման մերժումը դարձել է ներքին և արտաքին քաղաքա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 103 2018

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանությունները: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի: Երևան, 2010, էջ 63:
² Տե՛ս Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации. Под ред. О.И.Туинова. М.,2005, с.IV-XVI.
³ Տե՛ս Մարդու իրավունքների սահմանափակման չափանիշները սահմանադրական արդարադատության պրակտիկայում (Միջազգային խորհրդաժողովի նյութերի համառոտ ամփոփում), Երևան, 2005, էջ 9:
⁴ Տե՛ս Туинов О.И.Международное гуманитарное право. М., 1999, с. 1-9; Российское гуманитарное право. Под ред. Ю.А.Тихомирова. М., 1998, с.45-56.
⁵ Տե՛ս Մարդու իրավունքները և դատավարությունը: Միջազգային փաստաթղթերի ժողովածու: Երևան, 1996, էջ 3-31:

կանության անկյունաքար: Դա հիմնավորվում է այն պնդմամբ, որ հասարակական, համագային շահը շատ ավելի կարևոր է, քան անձնականը: Այդպիսին էր մարքս-լենինյան գաղափարախոսությունը, որը մարդուն դիտարկում էր որպես հասարակական կարևոր նպատակներին հասնելու միջոց և նրանից զոհողություններ էր պահանջում հանուն պայծառ ապագայի: Այս գաղափարախոսությունը քարոզում է կոլեկտիվիզմի ոգի՝ ի տարբերություն «բուրժուական անհատականության», որն իբր քայքայում ու տարրալուծում է հասարակությունը: Կոլեկտիվիզմի համար բնորոշ էին մարդու հրաժարումն իր իրավունքներից, նրա պատրաստականությունն ինքնազոհողության, իշխանության համակարգի ենթակարգությունը (հիերարխիա) և կարգապահությունը, փոքրամասնության կարծիքի անտեսումը և դա կրողների հետապնդումը, մարդու նշանակության հանգեցումն ընդամենը սոցիալական կառավարման մեխանիզմի աննշան «պտուտակի» գործառույթի, անհատականությունների համահավասարեցումը միասնական չափորոշիչներին (ստանդարտներին) ենթարկելու ճանապարհով, «նոր», «սոցիալիստական» մարդու ստեղծումը, ով ընդունակ չէ առարկելու իշխանությունների դեմ ու հանդես գալու իշխող գաղափարախոսության դեմ, հասարակական և անձնական կյանքի մանրամասն ու բծախնդիր կանոնակարգումը, սոցիալական ուժեղացված վերահսկողությունը և պետական ապարատի բյուրոկրատացումը:

Կոլեկտիվիզմը տարբեր առումներով դիտարկվել է սոցիոլոգների, քաղաքագետների, իրավագետների կողմից: Այսպես՝ Գյուստավ Լեբոնը կարծիք է հայտնել, թե՛ «կոլեկտիվիստական պետությունն ամեն ինչ կառավարելու է պաշտոնյաների հսկա բանակի միջոցով, որոնք էլ կանոնակարգելու են քաղաքացիների կյանքի նույնիսկ ամեն ինչի մանրուքները»⁶:

Կոլեկտիվիզմի գաղափարախոսության հետ են կապված պատերնալիզմն ու էտատիզմը, պետությունը «հայրաբար» հոգ է տանում իր

յուրաքանչյուր հպատակի մասին, նյութապես օգնում և բարոյապես աջակցում է իր քաղաքացիներին, ինչի համար վերջիններս պետք է հավատարիմ մնան իշխանություններին:

Ընդ որում՝ իշխանություններն իբր թե շնորհում են նրանց որոշակի իրավունքներ և ազատություններ: Նման սոցիալական համակարգում մարդն իշխանությունների համար դառնում է հաճո և շահավետ նպատակներին հասնելու դյուրին միջոց: Այնուամենայնիվ, պետությունն անտարբեր չէ իր քաղաքացիների ճակատագրի հանդեպ և պետք է հնարավորինս օժանդակի նրանց բարեկեցությանը, մասնավորապես՝ նյութապես օգնի և օժանդակի կարիքավորներին, հոգ տանի առողջապահության, քաղաքացիների սոցիալական ապահովագրության, գործազուրկների աշխատանքի տեղավորման և շատ այլ հանգամանքների մասին: Այլ կերպ ասած՝ պետությունը պետք է լինի սոցիալական (<< Սահմանադրության 1-ին հոդված), թեև «սոցիալական պետություն» հասկացությունը միանշանակ չի ընկալվում⁷:

Ապահովելով անձի ազատությունը՝ հասարակությունը չի կարող թույլատրել անարխիա, անօրինականություններ, այլ քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի ոտնահարում: Այդ իսկ պատճառով հասարակության մեջ պետք է հաստատվի ազատության որոշակի աստիճան, որը բավական կլինի մարդուն ինքնադրսևորման համար և, միաժամանակ, թույլ չի տա անձին չարաշահել իրեն տրամադրված ազատության չափը՝ ի վնաս պետության, հասարակության, համաքաղաքացիների:

Ազատությունը սովորաբար հարադրում են անհրաժեշտության հետ: Ազատությունն ու անհրաժեշտությունը զուտ փիլիսոփայական կատեգորիաներ են, որոնք կազմում են հակադրությունների դիալեկտիկական միասնություն: Սակայն բավական հաճախ անհրաժեշտությունը դարձվում էր ու դարձվում է բացարձակ կատեգորիա, որով էլ բնորոշվում էին մարդկանց արարքները: «Դետերմինիզմի գաղափարը,

⁶ Лебон Г. Психология социализма. СПб., 1995. С. 230.

⁷ Գոյություն ունի որոշակի հակասություն «քաղաքացիական հասարակություն» և «սոցիալական պետություն» հասկացությունների միջև: Առաջինը չի հանդուրժում պետական միջամտությունը, իսկ երկրորդը հավակնում է այդպիսի միջամտության:

գրում է Վ.Լենինը,- սահմանելով մարդկային արարքների անհրաժեշտությունը, մերժելով մարդու կամքի ազատության մասին հիմար հեքիաթը, ամենևին էլ չի ոչնչացնում ո՛չ մարդու բանականությունը, ո՛չ խիղճը, ո՛չ էլ նրա արարքների գնահատականը»⁸: Մարքս-լենինյան դոգմատիկայի աքսիոմ դարձած այս բանաձևը, ըստ էության, մերժում է կամքի ազատությունը («հիմար հեքիաթը»), քանզի մարդու ողջ մտածողությունն ու վարքը դնում է ճակատագրական կախման մեջ պատմության ընթացքից, որի օրենքները շատերը հասկանում են այլ կերպ, քան մարքսիզմ-լենինիզմի գաղափարախոսները: Դետերմինիզմը (պատճառական կապը), ըստ էության, մերժում է ազատությունը: Մարդուն առաջարկում են գործել ոչ թե ըստ սեփական կամքի, այլ՝ կույր անհրաժեշտությանը համապատասխան: Դետերմինիզմն անազատություն է, իսկ լենինյան բանաձևը, փաստորեն, կոչ է անում համակերպվել դրան: Պատմական դետերմինիզմի գաղափարը, որն իբր հասկանալի է միայն մասնագիտացված քաղաքագետների նեղ շրջանակի, ներթափանցել է ժամանակակից քաղաքականություն⁹:

Առանձին մարդու և հասարակության ազատությունը դրսևորվում է տարբեր ոլորտներում: Դրանք են.

- բնության հանդեպ տիրապետման ընդլայնումը և արտադրության գործընթացի ու նյութական բարիքների բաշխման ընթացքում ծագող հասարակական հարաբերությունների կատարելագործումը (սոցիալ-տնտեսական ազատություն),
- հասարակությունը կառավարող օրենքներին տիրապետելը և դրանց հիման վրա պետության հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիների միջև հարաբերությունների կարգավորումը (քաղաքական ազատություն),
- գիտության, արվեստի, մշակույթի զարգացումը, հասարակության հոգևոր հարստացումը (հոգևոր ազատություն),
- հասարակության բարոյական արժեք-

ների զարգացումը և հաստատումը (բարոյական ազատություն),

- մարդու և պետության շահերը պաշտպանող իրավական թույլտվությունների, հրահանգավորումների ու արգելքների սահմանումը և իրագործումը (իրավաբանական ազատություն):

Ազատության բոլոր տեսակներն այս կամ այն չափով, ամբողջովին կամ մասնակիորեն հանդես են գալիս իրավաբանորեն միջնորդավորված ձևով, այսինքն՝ ընդունում են իրավաբանական ազատության ձև¹⁰:

Սոցիալիզմի պայմաններում մարդկանց նյութական բարեկեցությունն այնքան էլ մեծ չէր, սակայն որոշ առումներով նրանք իրենց պաշտպանված էին զգում (անվճար առողջապահության, կրթություն, հանգստյան տների արհմիութենական ուղեգրեր ր այլն):

«Վերակառուցման» և բարեփոխումների տարիներին մարդիկ ստացան ազատության բարձր աստիճան: Ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, աշխատանքի ազատ ընտրությունը, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում կրթություն ստանալու հնարավորությունն էապես ընդլայնեցին մարդու ստեղծագործական հնարավորությունները: Քաղաքական բազմակարծությունը, հրապարակայնությունը, ժողովրդավարական ընտրությունները, զանգվածային լրատվամիջոցների ազատությունը (որոշակի չափով), ցանկացած պաշտոնատար անձի որոշումների ու գործողությունների քննադատության հնարավորությունը, քաղաքական պատճառներով հետապնդման վերացումը Հայաստանում իրականացված բարեփոխումների անվիճելի և ակներև արդյունքն է:

Մարդկության ողջ պատմությունը վկայում է, որ քաղաքական գործիչները և իշխանությունները միշտ էլ օգտագործել ու օգտագործում են մարդուն իրենց եսասիրական նպատակներին հասնելու համար՝ արդարանալով այն հանգամանքով, որ դա անհրաժեշտ է հասարակական շահերի տեսանկյունից և, հետևաբար՝ նույն այդ մարդու բարօրության համար:

⁸ Лении В.И. Поли. собр. соч.Т. 29. С. 148. Кривогуз И. М. Постигание современной политики. М., 1995. С. 43.

⁹ Кривогуз И.М. Постигание современной политики. М., 1995. С.43.

¹⁰ Стѣи Ильин Ю.Д. Право человека и государства на безопасность в современном мире. М., 2007, с. 9-11.

Մարդիկ մահվան են գնում հանուն այդ բարության, սակայն, վերջին հաշվով՝ համոզվում են, որ իրենց խաբել են: Ամեն մի հեղափոխություն գոհեր է պահանջում՝ իբր մեծ և վեհ նպատակների համար: Գահընկեց անելով բռնապետին՝ հեղափոխականներն ի վիճակի են պահպանելու իշխանությունը միայն նոր, էլ ավելի արյունալի և անողոր ղեկատարության շնորհիվ:

Նոր ղեկատարության գոհերի մասին Ժան-Պոլ Մարատն ասել է. «Ես պնդում եմ, որ պետք է մի քանի կաթիլ արյուն թափել արյան գետեր հեղելուն խանգարելու համար»¹¹: Սակայն հենց կաթիլներից է հետագայում գոյանում արյան ծովը: Ըստ էության՝ դա ամեն տեսակ բռնադատումների արդարացում է: Վ. Լենինն էլ ավելի հստակ է ձևակերպել այս միտքը, ով պնդում էր, որ պրոլետարիատի ղեկատարան «ոչնչով չսահմանափակված, ոչ մի օրենքով, բացարձակապես ոչ մի կանոնով չճշտված, անմիջականորեն բռնության վրա հիմնված իշխանություն է»¹²: Այս բնորոշումը փաստացիորեն իրագործվեց պրակտիկայում տեռորի, գյուղացիներից պարենի բռնազանձման, հոգևորականության, իշխող դասակարգերի ներկայացուցիչների, սպայակույտի, ազատական մտավորականության զանգվածային գնդակահարությունների և նրանց ունեցվածքին տիրանալու միջոցով: Տեղի էր ունեցել մարդկային կյանքի համընդհանուր արժեզրկում իբր թե հանուն գերագույն նպատակի՝ հեղափոխության հաղթանակի: Նույնիսկ դատարանը դարձավ դասակարգային պայքարի գործիք: «Դատարանը պետք է ոչ թե վերացնի տեռորը, ինչը խոստանալը կլինի ինքնախաբեություն կամ խաբեություն, այլ պետք է հիմնավորի ու օրինականացնի դա», – գրել է Վ. Լենինը¹³:

Հետագայում, դարձյալ «ժողովրդի շահերից» ելնելով, ինչպես նաև սոցիալիզմի լիակատար հաղթանակն արագացնելու նպատակով բոլշևիկներն անցան երկրի արդյունաբերականացման (ինդուստրիալացման) քաղաքականության (հնգամյակներ), թեև գյուղացիությունը սովի էր մատնված, իսկ երկրում կենսամա-

կարդակը ծայրահեղ ցածր էր: Նույն «ժողովրդի շահերով» էին արդարացնում գյուղացիության «կուլակաթափումը» և գյուղատնտեսության «կոլեկտիվացումը», որոնց հետևանքով միլիոնավոր, այդ թվում՝ նաև միջին ունևորությամբ գյուղացիներ, զրկվեցին իրենց ունեցվածքից և արտաքսվեցին երկրի հեռավոր ծայրամասեր, որտեղ նրանցից շատերը մահացան: Իսկ այս ամենի արդյունքով ստեղծված կոլտնտեսությունները, ինչպես պարզվեց, տնտեսապես անարդյունավետ չէին:

1945թ. Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրմամբ և անհատի պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պայմանագրերի ընդունմամբ մարդու իրավունքները դադարեցին համարվել բացառապես պետության ներպետական խնդիրը՝ վերածվելով միջազգային հանրության հիմնախնդրի:

Մարդու իրավունքները կարող են ընկալվել որպես հասարակության մեջ ապրող մարդկանց բնական իրավունքներ և դրանք գործնականում իրականացնելու հնարավորություններ: Մարդու իրավունքների հիմնական առանձնահատկությունները դրանց համընդհանրության ու ամբողջականության մեջ են. դրանք փոխապայմանավորված են և խարսխված իրավահավասարության և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքների վրա:

Բնական իրավունքի հայեցակարգի համաձայն՝ մարդու հիմնական (սահմանադրական) իրավունքները բնածին են և տրված են ամենքին ծնվելու պահից: Սակայն բնական իրավունքների հետևում գտնվում են արժեքներ, որոնք մարդկային պատմության տարբեր փուլերում տարբեր կերպ էին ընկալվում: Չի կարելի ասել, թե բնական միևնույն իրավունքներն անփոփոխ են ու հավերժ: Այն, ինչ մենք հասկանում ենք որպես կյանքի, ապրելու իրավունք, որպես սոցիալական արժեք, ամենևին էլ այդպես չէր ընկալվում արյան վրեժի ինստիտուտի գոյության օրոք (արյան վրեժի կարգով սպանությունը ոչ միայն չէր արգելվում, այլև խրախուսվում էր): Նախնադարյան դարաշրջանում հազիվ թե գոյություն ունենային

¹¹ Մեջբերվում է ըստ История политических и правовых учений. Под, ред. В.С. Нерсисянца. М., 1995, с. 299.

¹² Ленин В.И. Полн. собр. соч. Т. 12, с. 320.

¹³ Ленин В.И. Соч. Изд. 4-ое. Т. 33, с. 321-322.

անձի պատվի և արժանապատվության հասկացությունները:

Սեփականության իրավունքը ծագեց միայն այն ժամանակ, երբ նյութական բարիքները սկսեցին օտարվել ու բաշխվել: Ստրկատիրական և ավատատիրական հասարակություններում ազատության, հավասարության և եղբայրության գաղափարները ոչ մի հող չէին կարող ունենալ: Ինչպես տեսնում ենք՝ բնական իրավունքների բովանդակությունը փոխվում էր դարաշրջանից դարաշրջան: Յուրաքանչյուր դարաշրջանին բնորոշ էին իրավական վարքագծի ուրույն չափորոշիչներ, օրենքով պաշտպանվող սեփական արժեքներ: Դրանք փոփոխվելու են նաև ապագայում: Բնական իրավունքի ուսմունքն ընդգրկելն ամրագրել է մարդկության զարգացման ինչ-որ մի փուլ: Նրա կողմից ձևակերպված բնական իրավունքները ժամանակին թվացել են անբնական և հեռավոր ապագայում նույնպես կթվան անբնական: Սակայն ներկայումս դրանք վարքի չափանմուշներ են՝ քաղաքակիրթ ողջ հանրության կողմից ճանաչված և պետական սահմաններից անկախ: Դրանց չափորոշայնացմանը (ստանդարտացմանը) և ներդրմանն են ծառայում մարդու իրավունքների մասին միջազգային ակտերը, որոնց շնորհիվ իրականացվում է իրավական զարգացման տարբեր փուլերում գտնվող երկրների յուրատեսակ իրավական «համահավասարեցում»:

Կոնկրետ անձի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները ծագում են ոչ թե ծնվելու պահից, այլ՝ օրենքում նշված իրավական փաստերի հայտնվելու հետ մեկտեղ:

Այսպես, օրինակ՝ սեփական կարողությունները ձեռնարկատիրական և այլ գործունեության համար ազատորեն օգտագործելու իրավունքը, ըստ տարիքի սոցիալական ապահովության իրավունքը, կրթություն ստանալու իրավունքը, ստեղծագործության ազատությունը և այլն սկզբունքորեն պատկանում են յուրաքանչյուրին, սակայն իրականում անձն այս կամ այն իրավունքը ձեռք է բերում որոշակի տարիքի հասնելուն պես կամ որևէ այլ իրավաբանական փաստի երևան գալուց հետո:

Պարզաբանումների կարիք ունի նաև բնական իրավունքների անօտարելիության գաղափարը: Դրանք անօտարելի են այն առումով,

քանի որ պետությունը չի շնորհել իր քաղաքացիներին այդ իրավունքները, ուստի չի կարող նաև հետ վերցնել դրանք: Սակայն պետությունն իրավունք ունի սահմանափակելու մարդու այս կամ այն իրավունքը կոնկրետ իրավա-հարաբերություններում, եթե նման իրավունքը վերապահված է պետությանը Սահմանադրությամբ և դրա վրա հիմնված օրենքով:

Անձի ու մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կարող է սահմանափակվել օրինական հիմքով՝ խուզարկության, ձերբակալման, կալանավորման, հեռախոսային և այլ հաղորդակցությունները լսելու անհրաժեշտության պատճառով: Ընդհանուր առմամբ՝ դա կարող է տեղի ունենալ միայն դատարանի որոշման հիման վրա:

Անձի սոցիալ-իրավական արժեքը ժամանակակից իրավունքի արքսիոմ է: Ինչպես և ցանկացած արքսիոմ՝ դա ենթակա չէ ապացուցման, բավական է ինքնին, որ այդ գաղափարի վերաբերյալ գոյություն ունի հասարակական համաձայնություն:

1993թ. հունիսի 25-ին Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի ընթացքում ՄԱԿ-ի 171 անդամ պետությունների կողմից ընդունվեց «Վիեննայի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը», որով անդամ պետություններին կոչ էր արվում մշակելու և հաստատելու մարդու իրավունքների գործողությունների ազգային ծրագրեր:

Մասնավորապես՝ «Վիեննայի հռչակագրի և գործողությունների ծրագրի» երկրորդ մասի 71-րդ կետին համապատասխան՝ «Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովը հորդորել է, որ յուրաքանչյուր պետություն քննության առնի ազգային գործողությունների ծրագրի մշակման հարցը՝ նախանշելով այն քայլերը, որոնց միջոցով կբարելավվի մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը»:

1991թ. Անկախության հռչակագրից ի վեր՝ Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպությանը, Եվրոպայի խորհրդին, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը և այլն: Եվրոպական ընտանիքին սերտորեն ինտեգրվելու՝ Հայաստանի Հանրապե-

տության պատրաստակամությունն արտահայտվել է նաև այն փաստում, որ Հայաստանն ընդգրկվել է «Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրում»: Անդամակցությունը վերոնշյալ կազմակերպություններին և սերտ համագործակցությունը վերջիններիս հետ ենթադրում են նաև պետության կողմից որոշակի պարտավորությունների ստանձնում՝ ժողովրդավարության ամրապնդման, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովման մակարդակի բարձրացման ուղղությամբ:

Այս իմաստով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է քաղաքական, քաղաքացիական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների լայն շրջանակ՝ անձի արժանապատվության պաշտպանությանը, նրա ազատությունների իրականացման և անվտանգության ապահովմանը, նրա ինքնիրացման համար հավասար հնարավորությունների ստեղծմանն ուղղված:

Տնտեսական և սոցիալական ու մշակութային իրականացման ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունը միացել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, վավերացրել է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի մի շարք պայմանագրեր: Տարածաշրջանային փաստաթղթերի թվում կարևորվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (Առաջին արձանագրությունը) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան: ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունները, Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի մեկնաբանությունները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հատկապես կարևորվում են այս իրավունքների գործնական իրականացման ապահովման գործընթացում:

Տնտեսական և սոցիալական իրավունքների ապահովման սահմանադրական երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ:

Տնտեսական և սոցիալական իրավունքների ոլորտում առկա համակարգային խնդիրների, դրանց հասարակական հնչողության, միջազգային և ազգային համապատասխան կազմակերպությունների կողմից բարձրացված հիմնախնդիրների տեսանկյունից դեռևս հսկայական անելիքներ կան՝

- բավարար կենսամակարդակի իրավունքի,
- սեփականության իրավունքի,
- առողջության պահպանման իրավունքի,
- սոցիալական ապահովության իրավունքի,
- աշխատանքի իրավունքի,
- կրթության իրավունքի իրացման ոլորտներում:

Մարդու նշված իրավունքների իրականացման ոլորտում առանձնահատուկ շեշտադրություն պետք է դրվի հատուկ և խոցելի խմբերի իրավունքների պահպանության և պաշտպանվածության մակարդակի բարձրացման վրա՝ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորություններին համապատասխան:

Սոցիալական հավասարության ապահովման և այս խմբերի իրավունքների խթանման և պաշտպանության սպառողական նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին և վավերացրել է հատուկ և խոցելի խմբերին ուղղակիորեն առնչվող մի շարք պայմանագրեր: Դրանց թվում կարևորվում են ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և այլն:

Հատուկ և խոցելի խմբերի իրավական պաշտպանության հիմնական երաշխիքները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: Բացի այդ՝ ընդունվել են հատուկ և խոցելի խմբերին առնչվող առանձին օրենքներ և գործողությունների ծրագրեր:

ЛУСИНЕ ВАРДАНЯН

Кандидат юридических наук

СОВРЕМЕННЫЙ ФИЛОСОФСКО-ПРАВОВОЙ ДИСКУРС ТЕЛА И ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СОМАТИЧЕСКИХ ПРАВ ЧЕЛОВЕКА

Еще совсем недавно философия доказывала, что человек – «венце творения», его стремление к совершенству и совершенствованию благородно и не может иметь пределов. Картезианский дуализм рассматривал «естественное» как «внешнее» к человеку, где человек не часть природы, а хозяин по отношению к ней, он прекрасно описан в высказывании Сен-Симона: «Человек может и должен использовать природу, как ему заблагорассудится».

Очень скоро человек, обуздавший природные силы, начинает задумываться о возможности совершенствования себя же. Постнеклассическая наука, включившая человека в объект познания, превратила его, с одной стороны, в полигон приложения «обузданной природы», с другой стороны поставила его на один и тот же уровень с природой – теперь вышеуказанное утверждение Сен-Симона можно перефразировать, как «человек может и должен использовать свою природу (себя), как ему заблагорассудится».

Современное отношение к телу формируется философией постмодерна, идейной основой которого стали переходы от вербального к визуальному, от мысли к плоти. Дуалистический подход относительно соотношения личности и тела переходит в идеалистический, где внетелесное «Я» становится собственником тела и свободно в вопросах его трансформации и распоряжения. Тело превращается в товар, «в

плоть» (в «сому»), как материал для функционирования других систем.¹ Вместо индивидуальности появляется дивидуум – человек делимый.² В мире, где наличествует фрагментация индивидуальной идентичности, которая усугубляется существованием «клип-культуры», человек все время находится в поисках себя и своей идентичности, пытается конструировать все, и даже свое тело.

Современный правовой дискурс тела и телесности человека рождается именно на этом фоне. С этим связано и появление в теории права дискуссий по поводу появления так называемых «соматических прав» – прав человека, связанных с правом свободно распоряжаться своей жизнью и телом.³ К соматическим правам В.И.Крусс относит право на смерть, изменение пола, гомосексуальные контакты, трансплантацию органов, употребление наркотиков или психотропных средств, право на искусственное репродуктивное, стерилизацию, аборт, клонирование, виртуальное моделирование.⁴ А.И.Ковлер указывает, что, по существу, речь идет о правах на манипуляции с телесной субстанцией.⁵ Однако исчерпывающий и единственный перечень этих прав даже на теоретическом уровне пока не разработан.

Один из дискуссионных вопросов – место соматических прав в системе прав человека – также не нашел пока своего решения. В научно-правовой литературе отмечается полифония мнений, согласно которым, эти права являются

¹ Кутырев Е.А. Философия постмодернизма. – Н. Новгород: Изд-во Волго-Вятской академии гос. службы. 2006. С. 41.

² Гуревич П.С. Феномен деантропологизации человека // Вопросы философии. 2009. №3. С. 24.

³ Старовойтова О.Е. Правовые проблемы танатологии: историко-теоретический аспект // Автореф. дис. ... канд. юрид. наук. – СПб.: 2001// <http://law.edu.ru/book/book.asp?bookID=128740>

⁴ Крусс В. И. Личностные соматические права человека в конституционном и философско-правовом измерении к постановке проблемы/ Государство и право. С. 43.

⁵ Ковлер А. Антропология права. Уч. для вузов. М.: НР-ИНФРА-М.:2002. С. 425.

продолжением прав человека первого, второго, третьего поколения, а то и правами нового, четвертого поколения. Так, А. И. Ковлер, определяя соматические права как разновидность личных прав, пишет: «Сердцевину личных прав составляют право на жизнь и достоинство личности, право на свободу и личную неприкосновенность, свобода совести. Именно они, очевидно, являются базовыми, родовыми правами для личностных прав».⁶ Е.М.Нестерова в целях развития и уточнения существующих научных взглядов предлагает особый подход к формулированию понятия рассматриваемой правовой категории, суть которого заключается в уяснении универсальных признаков, относящихся ко всем личностным правам, и отличающие их от других групп прав человека. Эти признаки, по мнению автора, позволяют говорить о соматических правах как о самостоятельной категории, имеющей способность соответствовать современным интересам личности, ее потребностям.⁷ Согласно воззрениям О. Э. Старовойтовой, комплекс проблем, связанных с правовой регламентацией соматических прав человека, в полном объеме может быть представлен как новое направление юридической науки под названием «правовая соматология». Автор указывает, что соматические права человека являются частью естественных прав.⁸ Заметим, что среди соматических указывается право на клонирование либо право на смену пола, естественность которых вызывает некоторое сомнение. По сути, если анализировать приблизительный круг тех прав, которые разные исследователи относят к соматическим, то можно увидеть, что через эти права человек может реализовать, в конечном счете, некоторые свои естественные права, однако осуществлять их средствами, которые зачастую идут наперекор именно природе человека. Более того, если

утверждать, что соматические права являются новой разновидностью естественных и личных прав человека и лишь расширяют перечень «старых, добрых» естественных прав человека, то они должны давать возможность их реализации под страхом государственного принуждения. «Природа соматических прав крайне своеобразна. Здесь человек не только претендует на радикальное изменение первородной телесной целостности, но и выдвигает определенные претензии обществу».⁹ В этом случае должны быть не только признаны правомерными наркомания или проституция, купля-продажа человеческих органов и тканей, идущие наперекор морали и нравственности, но и гарантированы государством под страхом принуждения. Такое положение изменяет устои общества, снижает аксиологическую ценность человека, вызывает потерю традиционных представлений о нем. Неудивительно, что в литературе все чаще высказывается мнение о том, что: «Соматические права... породили секулярного человека, безразличного к нормам морали и религии».¹⁰ И хотя соматические права прекрасно вписываются в современную концепцию прав человека с его абсолютным индивидуализмом и автономией, помогают получать пользу и выгоду и сами являются ценностью для современного общества, тем не менее, их развитие в контексте современного права, не имеющего духовно-нравственных начал, нельзя считать верным решением. Поэтому разработка механизмов ограничения этих прав имеет вполне практические цели. Однако не все исследователи единодушно согласны с утверждением о необходимости такого ограничения. Так, А.М. Цалиев и О.Т.Сланов указывают, что притязания соматического характера направлены на физиологию личности, ее тело, поэтому вопрос об этом должен решаться самостоятельно, и свобода

⁶ Ковлер А.И. Указ. соч. С. 427.

⁷ Нестерова Е. М. Понятие и юридико-социальная сущность соматических прав человека//Журнал «Социально-экономические явления и процессы». 2011. №7. С. 224-225.

⁸ Старовойтова О.Е. Указ. соч. //http://law.edu.ru/book/book.asp?bookID=128740

⁹ Крусс В. И. Соматические права человека в соотношении православной антропологии С. Л. Франка и философии экологического кризиса В. Хесле. С. 189.

¹⁰ Ивентьев С.И. четвертое и пятое поколение прав человека/ гуманитарные науки: сборник научных трудов. Часть 2 – Караганда: издательство КарГУ.: 2010. С. 60-64.

в этом случае не должна быть ограничена законом, поскольку это ведет к насилию над индивидуальной природой человека.¹¹ Е. А. Лукашева находит личностные права человека категорией не подвластной государству: «...Эта категория прав характеризуется тем, что государство признает свободу личности в определенной сфере отношений, которая отдана на усмотрение индивида и не может быть объектом притязаний государства. Она обеспечивает так называемую негативную свободу. Эти права, являясь атрибутом каждого индивида, призваны юридически защитить пространство действия частных интересов, гарантировать возможности индивидуального самоопределения и самореализации личности»¹². В.Завальнюк указывает, что «соматические права являются мерой возможного поведения, с акцентом на слово «мера». То есть... все они могут быть ограничены».¹³ Конечно, идти по пути полного запрета всех этих прав не представляется правильным, они обусловлены развитием общества и биотехнологий и должны были появиться. Следует согласиться с М.А. Лавриком, что «юридическое конструирование прав человека достигло определенной точки бифуркации: с одной стороны, предполагается более активное использование механизма ограничений прав и свобод, а с другой – расширение уже имеющегося перечня прав, в том числе и засчет соматических прав человека».¹⁴ Другое дело, если их безграничное расширение и реализация может причинить серьезный вред безопасности человека и даже поставить под вопрос существование общества. Автономность и свобода принятия решения даже в вопросах, которые имеют ключевую роль для существования всего человечества, входят в противоречие с предназначением права в целом – обеспечением безопасности человека, общества и государства.

Такое разновекторное развитие права – с одной стороны, развитие соматических прав, с другой – необходимость разработки методов обеспечения безопасного развития общества, государства и личности – может просто разорвать «тело» права, привести к его сверхпротиворечивости.

Согласно ст. 81 Конституции РА: «При толковании положений об основных правах и свободах, закрепленных в Конституции, учитывается практика органов, действующих на основании международных договоров о правах человека, ратифицированных Республикой Армения. Ограничения основных прав и свобод не могут превышать ограничения, установленные международными договорами Республики Армения».¹⁵ Анализ практики Европейского Суда по правам человека показывает, что она исходит из представления о том, что права человека могут быть ограничены для защиты не только прав другого человека, но также и иных ценностей, выражающих общие интересы.¹⁶ В основе данного подхода лежит положение п. 2 ст. 29 Всеобщей декларации прав человека, согласно которому, «при осуществлении своих прав и свобод каждый человек должен подвергаться только таким ограничениям, какие установлены законом исключительно с целью обеспечения должного признания и уважения прав и свобод других и удовлетворения справедливых требований морали, общественного порядка и общего благосостояния в демократическом обществе». Это смешение правовых и морально-нравственных начал типично для естественно-правовой доктрины. Однако такое смешение уже сегодня в правовой литературе считается архаичным с позиций современного правопонимания. Так, В.В. Лапаева указывает: «С позиций либертарного правопонимания так называемые справедливые требования морали не могут быть основанием для ограничения права уже потому,

¹¹ Цалиев А.М., Сланов, О.Т. Право на телесную и физическую свободу человека в контексте теории соматических прав. Право и политика-2. 2008. С. 403.

¹² Права человека: учебник для вузов / под ред. Е. А. Лукашевой. М.: 2003.

¹³ Завальнюк В. Антропологический подход к исследованию соматических прав человека // *Evropsky politicky a pravni diskurz*, Vol. 1, Iss. 4. 2014. С. 135.

¹⁴ Ларник М.А. К теории соматических прав человека/ Сибирский юридический вестник №1.3. 2005. С. 24-25.

¹⁵ http://parliament.am/law_docs5/06122015.pdf

¹⁶ Права человека: Учебник для вузов / Под ред. Е. А. Лукашевой. М.: 1999. С. 105.

что требования морали по своей природе не могут быть справедливыми, то есть равными, всеобщими, обязательными для всех».¹⁷ Косвенно этот же подход можно узреть и некоторых решениях ЕСПЧ. Так, при рассмотрении дела *Handyside v UK* суд указывает, что невозможно установить единую европейскую концепцию морали в рамках внутреннего права различных стран-участниц, ибо взгляды на моральные требования, определяемые соответствующими законами этих стран, меняются в зависимости от времени и места и, в особенности, в нашу эпоху, характеризующуюся быстрой эволюцией мнений по данному вопросу.¹⁸ Кроме того, практика ЕСПЧ не всегда рассматривает реализацию соматических прав как противоречащую морали. В деле *Dudgeon v UK*,¹⁹ petitioner утверждал, что Северная Ирландия, запрещая добровольные гомосексуальные отношения между взрослыми мужчинами, осуществляет необоснованное вмешательство в их право на личную жизнь. По мнению Правительства Соединенного Королевства, право Северной Ирландии, преследующее любые гомосексуальные связи, не нарушает ст.8 Конвенции, поскольку вмешательство предусмотрено законами и необходимо в демократическом обществе в интересах охраны здоровья, нравственности и защиты прав и свобод других лиц. Однако такое мнение не разделяется судом. Признав, что законодательство Северной Ирландии в этой сфере необходимо для защиты интересов определенных общественных групп, равно как и морали общества, суд, вместе с тем, указал, что для признания ограничения необходимым в обществе, которое характеризуется терпимостью и открытостью, это ограничение должно быть соразмерным преследуемой правомерной цели. Существующее в Северной Ирландии моральное неприятие гомосексуализма, а также озабоченность обще-

